




COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE
Committee of Ministers
Comité des Ministres



**Մպիտակ գիրք միջմշակութային
երկխոսության վերաբերյալ
«Ապրել միասին՝ հավասար
արժանապատվությամբ»**

**all different
all equal**





Սպիտակ գիրք միջմշակութային երկխոսության վերաբերյալ

«Ապրել միասին՝ հավասար արժանապատվությամբ»¹

¹ Տեղեկատվական գեկույցի՝ www.coe.int/dialogue կայքէջում տեղադրված էլեկտրոնային տարբերակը կպարունակի հիպերլինկեր՝ կապված տեքստում նշված բոլոր փաստաթղթերի հետ.
Internet://www.coe.int/t/cm/:

Նախաբան

**Միջմշակութային երկխոսության վերաբերյալ Սպիտակ Գրքի
Հարգարժան Թերի Դեիս, Գլխավոր Քարտուղար
(հաստատված է 10.11.2008 անձնական գրասենյակի կողմից)**

Միջմշակութային երկխոսության վերաբերյալ Սպիտակ Գիրքը տքնաջան աշխատանքի, վճռականության եւ ամենից առավել երկխոսության արդյունք է: Այն պատրաստվել է անդամ պետությունների, քաղաքացիական եւ հասարակական կազմակերպությունների, կրոնական համայնքների, գաղթօջախների, տեղական եւ տարածքային իշխանությունների հետ ծավալուն եւ երկարատեւ քննարկումներից հետո:

Մեր ժամանակներում, միջմշակութային երկխոսությունը անհրաժեշտություն է: Օրեցօր փոփոխվող եւ անապահով աշխարհում մենք պետք է խոսենք էթնիկ, կրոնական, լեզվական եւ ազգային բաժանարար գծերին ի հակառակ՝ սոցիալական համախմբվածությունը եւ հակամարտությունների կանխարգելումը ապահովելու նպատակով:

Սպիտակ Գրքի հիմնական միտքն՝ առանց ժողովրդավարության, մարդու իրավունքների եւ օրենքի գերակայության այս համամարդկային արժեքներին հստակ անդրադարձի՝ միջմշակութային երկխոսության անհնարինությունն է:

Սպիտակ Գիրքն արժանացել է մեծ հավանության, սակայն դրա եզրակացությունները եւ առաջարկությունները պետք է իրականացվեն եւ վերահսկվեն բոլոր շահագրգիռ կողմերի հետ երկխոսության ծավալման միջոցով: Միջմշակութային երկխոսությունն՝ «ընթացիկ աշխատանք է»- նոր քայլ՝ դեպի արագ փոփոխվող Եվրոպային եւ հավասարապես արագ փոփոխվող աշխարհին հարմարեցված նոր մշակութային եւ սոցիալական մոդելի ստեղծման ճանապարհին :

Երկխոսությունը որպես Եվրոպայի ապագայի բանալին

(1) Եվրոպայի հարաճուն մշակութային բազմազանությունը, որը խոր պատմական արմատներ ունի և էլ ավելի է ընդլայնվել գլոբալիզացիայի արդյունքում, վերջին տարիներին ժողովրդավարության շնորհիվ դարձել է գերակայություն: Ինչպե՞ս մենք պետք է արձագանքենք բազմազանությանը: Ո՞րն է ապագայի հասարակության մեր տեսլականը: Արդյո՞ք այն լինելու է տարանջատված համայնքների հասարակություն, որը լավագույն դեպքում հատկանշվելու է տարբերակված իրավունքներ ու պարտավորություններ ունեցող մեծամասնությունների և փոքրամասնությունների գոյակցությամբ, որոնց միացնող աղերսները կլինեն թույլ՝ փոխադարձ անտեղյակության և կաղապարատիպերի պատճառով: Թե՞ դա կլինի աշխույժ ու բաց հասարակություն՝ խտրականությունից զերծ, համորեն շահավետ, որը կնշանավորվի կլինի հասարակության բոլոր անդամների իրավունքների նկատմամբ համընդհանուր հարգանքով: Եվրոպայի Խորհուրդը համարում է, որ կազմակերպության դավանած արժեքների վրա խարսխված մշակութային բազմազանության պահպանումն ու խորացումը կարևոր պայման է համերաշխության հենքի վրա հասարակության զարգացման համար:

(2) Ստորև ներկայացվող «Միջմշակութային երկխոսության վերաբերյալ տեղեկատվական զեկույցը» Եվրոպայի Խորհրդի անդամ 47 պետությունների կառավարությունների անունից փաստում է, որ մեր ընդհանուր ապագան կախված է մարդու իրավունքների, իրավական պետության ամրապնդման և զարգացման, ինչպես նաև փոխըմբռնման խորացման մեր ունակությունից, ինչպես որ ամրագրված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում: Չեկույցը հավաստում է, որ միջմշակութային մոտեցումը մեզ հրամցնում է մշակութային բազմազանության կառավարման առաջահայաց մոդել: Նա առաջարկում է անհատի արժանապատվության վրա խարսխված հայեցակարգ (որն ընդգրկում է մեր ընդհանուր մարդկային բնությունն ու ճակատագիրը): Եթե եվրոպական ինքնությունը կոչված է դառնալու իրականություն, ապա այն պետք է հիմնված լինի ընդհանուր հիմնարար արժեքների, միասնական ժառանգության, մշակութային բազմազանության պահպանման, ինչպես նաև՝ յուրաքանչյուր անհատի արժանապատվության հարգանքի վրա:

(3) Այս առումով միջմշակութային երկխոսությունը կարևոր դերակատարություն է վերապահված: Այն թույլ է տալիս վերացնել ազգային, կրոնական, լեզվական և մշակութային անջրպետները: Միջմշակութային երկխոսությունը հնարավորություն է տալիս մեզ՝ համընդհանուր արժեքներին ապավինելով միասնաբար առաջ ընթանալ, մեր ինքնության տարբերությունները հարթել կառուցողական և ժողովրդավարական եղանակով:

(4) Միջմշակութային երկխոսությունը կարող է զարգանալ միայն որոշակի պայմանների առկայության դեպքում: Միջմշակութային երկխոսությունը զարգացնելու համար տեղեկատվական զեկույցը փաստում է, որ անհրաժեշտ է տարբեր ուղղություններով կատարելագործել մշակութային բազմազանության ժողովրդավարական կառավարումը, խրախուսել ժողովրդավարական քաղաքացիությունն ու հասարակական մասնակցությունը, սովորել և սովորեցնել միջմշակութային հաղորդակցության հմտություններ, միջմշակութային երկխոսության համար ստեղծել և հետագայում ընդլայնել տարածքներ, ինչպես նաև միջմշակութային երկխոսություն նախաձեռնել

միջազգային մակարդակով:

(5) Տեղեկատվական զեկույցը կառուցված է Եվրոպայի Խորհրդի ձեռքբերումների ամուր հիմքի վրա՝ հաշվի առնելով 2007 թվականին տարբեր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ Եվրոպայից դուրս գտնվող տարածաշրջանային գործընկերների հետ ունեցած խորհրդակցությունների հարուստ նյութը: Այսպիսով, բազմաթիվ առումներով այն հանդիսանում է հենց միջմշակութային երկխոսության հիմքում ընկած ժողովրդավարական քննարկումների արդյունք:

(6) Տեղեկատվական զեկույցը միտված է միջմշակութային երկխոսության միջոցով և ընկերային կապերի պահպանմամբ բազմազանության արժեքորման ձևերի նկատմամբ օրեցօր աճող պահանջարկի և հետաքրքրության բավարարմանը: Այն նպատակ ունի ստեղծել որոշակի հայեցակարգային հենք և որպես ուղեցույց ծառայել քաղաքականություն մշակողների և իրականացնողների համար: Այսուհանդերձ, միջմշակութային երկխոսությունը չի կարող պարտադրվել օրենքի ուժով: Այն պետք է շարունակի դիտվել որպես բաց հրավեր՝ միտված զեկույցում բարձրաձայնվող սկզբունքների իրագործմանը, ներկայացվող խորհուրդ-հանձնարարականների ճկուն կիրառմանը, ինչպես նաև հասարակության ապագա կառուցվածքի շուրջ ընթացող բանավեճի արդյունավետությանը:

(7) Եվրոպայի Խորհուրդը խորապես համոզված է, որ մենք բոլորս պատասխանատվություն ենք կրում այնպիսի հասարակության կառուցման համար, որտեղ կկարողանանք միասին ապրել արժանապատիվ հավասարության սկզբունքով:

Բովանդակություն

1. Ներածություն	8
1.1 Եվրոպայի Խորհուրդը և միջմշակութային երկխոսությունը.....	8
1.2 Տեղեկատվական զեկույցի մշակման գործընթացը.....	8
1.3 Հիմնախնդիրներն.....	9
1.4 Հիմնական եզրույթները	10
2. Մշակութային բազմազանություն.....	12
2.1 Բազմակարծություն, հանդուրժողականություն և միջմշակութային երկխոսություն. 12	
2.2 Մարդկային արժանապատվության համահավասարությունը.....	13
2.3 Չափորոշիչներ և գործիքներ. Եվրոպայի Խորհրդի ձեռքբերումները հինգ տասնամյակների ընթացքում.....	13
2.4 Երկխոսության բացակայության հետ կապված ռիսկերը.....	15
3. Հայեցակարգային հենքը	16
3.1 «Միջմշակութային երկխոսություն» հասկացությունը	16
3.2 Ինքնության կառուցումը բազմամշակույթ միջավայրում.....	17
3.3 Նախկին մոտեցումները մշակութային բազմազանությանը.....	18
3.4 Միջմշակութային երկխոսության պայմանները.....	19
3.4.1 Մարդու իրավունքներ, ժողովրդավարություն և օրենքի գերակայություն.....	19
3.4.2 Հավասար արժանապատվություն և փոխադարձ հարգանք.....	20
3.4.3 Գենդերային հավասարություն.....	20
3.4.4 Միջմշակութային երկխոսության արգելքների հաղթահարումը.....	21
3.5 Կրոնական բաղադրիչը.....	21
4. Միջմշակութային երկխոսության քաղաքականության հինգ մոտեցումները	24
4.1 Մշակութային բազմազանության ժողովրդավարական կառավարումը.....	24
4.1.1 Քաղաքական մշակույթն արժեվորող բազմազանություն.....	24
4.1.2 Մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները.....	25
4.1.3 Հավասար հնարավորություններից դեպի հավասար իրավունքներ	26
4.2 Ժողովրդավարական քաղաքացիություն և մասնակցություն.....	28
4.3 Միջմշակութային հմտությունների յուրացումն ու ուսուցումը.....	29
4.3.1 Հիմնական ոլորտները. ժողովրդավարական քաղաքացիություն, լեզու, պատմություն	29
4.3.2 Տարրական և միջնակարգ կրթություն.....	30
4.3.3 Բարձրագույն կրթություն և գիտություն.....	31
4.3.4 Ոչ-պաշտոնական և այլընտրանքային ուսուցում	
4.3.5 Ուսուցիչների դերը.....	32
4.3.6 Ընտանեկան միջավայրը.....	34
4.4 Տարածքներ միջմշակութային երկխոսության համար.....	34
4.5 Միջմշակութային երկխոսությունը միջազգային հարաբերություններում	36
5. Խորհուրդներ և քաղաքականության կողմնորոշիչներ ապագա գործողությունների համար	38
5.1 Մշակութային բազմազանության Ժողովրդավարական կառավարումը.....	38
5.2 Ժողովրդավարական քաղաքացիություն և մասնակցություն.....	43
5.3 Միջմշակութային հմտությունների յուրացումն ու ուսուցումը.....	45
5.4 Տարածքներ միջմշակութային երկխոսության համար.....	49
5.5 Միջմշակութային երկխոսությունը միջազգային հարաբերություններում	51
6. Առաջիկա անելիքները	53

Հավելված 1 – Միջնակուսային երկխոսության վերաբերյալ Եվրոպայի Խորհրդի կոնվենցիաների, հայտարարությունների, հանձնարարականների և այլ տեղեկատվական նյութերի ցանկը	55
<i>Եվրոպայի Խորհրդի կոնվենցիաները.....</i>	<i>55</i>
<i>Գազաթափողովների, նախարարական համաժողովների և նախարարների կոմիտեի հայտարարություններն ու հռչակագրերը</i>	<i>56</i>
<i>Նախարարների կոմիտեի հանձնարարականները.....</i>	<i>57</i>
<i>Եվրոպայի Խորհրդի խորհրդարանական վեհաժողովի հանձնարարականներն ու բանաձևերը</i>	<i>60</i>
<i>Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի հանձնարարականները, բանաձևերն ու հայտարարությունները</i>	<i>62</i>
<i>Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի (ՌԱՊԵՀ) հանձնարարականներն ու հայտարարությունները</i>	<i>62</i>
Հավելված 2 – Հապավումների ցանկ	64

Ներածություն

1.1 Եվրոպայի Խորհուրդը և միջմշակութային երկխոսությունը

(8) Միջմշակութային երկխոսության խթանումը նպաստում է Եվրոպայի Խորհրդի գլխավոր նպատակի իրավորմանը, այն է՝ մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավական պետության կայացում և զարգացում: Վերահաստատելով, որ Եվրոպայի պատմական հարուստ ժառանգությունը բնորոշվում է մշակութային բազմազանությամբ և որ հանդուրժողականությունը բաց հասարակության գրավականն է՝ ԵԽ անդամ պետությունների և կառավարությունների ղեկավարների առաջին զագաթաժողովը (1993թ.) ճանապարհ հարթեց Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի ընդունման (1995թ.), Ռ-ասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի հիմնադրման և Ընդդեմ ռասիզմի, հակասեմիտականության, այլատյացության ու անհանդուրժողականության Եվրոպայի երիտասարդական շարժման համար («Միանգամայն տարբեր և լիովին հավասար» կարգախոսով):

(9) ԵԽ անդամ պետությունների և կառավարությունների ղեկավարների երրորդ զագաթաժողովը (2005թ.) միջմշակութային երկխոսությունը (ներառյալ դրա կրոնական կողմը) բնորոշեց որպես իրազեկության, փոխըմբռնման, հաշտության և հանդուրժողականության հասնելու, ինչպես նաև հակամարտությունները կանխարգելելու, ինտեգրացիոն գործընթացներին զարկ տալու և հասարակական համախմբվածություն սերմանելու միջոց: Այն իր մարմնավորումն ստացավ «Եվրոպայի Խորհրդի՝ միջմշակութային երկխոսության զարգացման ռազմավարության վերաբերյալ Ֆարոյի հռչակագրի» մեջ, որն արդեն տարեվերջին ընդունվեց մշակույթի նախարարների կողմից՝ հող նախապատրաստելով միջմշակութային երկխոսության մասին տեղեկատվական զեկույցի մշակման համար:

1.2 Տեղեկատվական զեկույցի մշակման գործընթացը

(10) 2006 թ. մայիսին գումարելով իր հերթական նիստը՝ Նախարարների կոմիտեն նշեց, որ միջմշակութային երկխոսության մասին տեղեկատվական զեկույցը պետք է մատնանշեր եվրոպական հասարակությունների ներսում և նրանց միջև, ինչպես նաև ամբողջությամբ վերցրած՝ Եվրոպայի և հարևանների միջև միջմշակութային սերտ երկխոսության խթանման ուղիները: Այն նաև պետք է ուղեցույցի դեր կատարեր վերլուծական և մեթոդաբանական գործիքների ու չափորոշիչների ընտրության հարցում: Տեղեկատվական զեկույցը հասցեագրված է քաղաքական գործիչներին և գործադիր ղեկավարներին, մանկավարժներին ու զանգվածային լրատվության միջոցներին, հասարակական կազմակերպություններին, այդ թվում՝ ներգաղթած և այլակրոն համայնքներին, երիտասարդական կազմակերպություններին ու սոցիալական գործընկերներին:

(11) Նախարարների կոմիտեի որոշմանը հետևեցին միջմշակութային երկխոսության շուրջ լայնածավալ քննարկումներ 2007 թ. հունվարից մայիս ընկած ժամանակահատվածում: Ի թիվս այլոց, դրանցում ներգրավվեցին նաև բոլոր շահագրգիռ կոմիտեները, Խորհրդարանական վեհաժողովի և Տեղական ու շրջանային իշխանությունների կոնգրեսի անդամները, ինչպես նաև Եվրոպայի Խորհրդի այլ մարմինների ներկայացուցիչներ, ներառյալ՝ Ռ-ասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովը (Ռ-ԱՊԵՀ), Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն, Սոցիալական համախմբվածության բարձր մակարդակի աշխատանքային խումբը և Մարդու իրավունքների հանձնակատարը: Հարցաթերթիկներ ուղարկվեցին բոլոր անդամ պետություններին, Խորհրդարանական վեհաժողովի և

Տեղական ու շրջանային իշխանությունների կոնգրեսի անդամներին, ներգաղթած և կրոնական համայնքերի ներկայացուցիչներին, մշակութային և այլ ոչ-կառավարական կազմակերպությունների: Եվրոպայի Խորհրդի քարտուղարությունը միջոցառումներ կազմակերպեց (նաև՝ համատեղ հիմունքներով)՝ դրանցում ներգրավելով ներգաղթյալ անձանց, կանանց, երիտասարդների, լրագրողների, ինչպես նաև՝ լրատվամիջոցների ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների: Փաստաթղթերի նախագծերն ուղարկվեցին շահագրգիռ կողմերին՝ «խորհրդակցական հանդիպումների»² ժամանակ քննարկելու համար, ինչպես նաև մշակույթի նախարարների տարածաշրջանային ոչ-պաշտոնական համաժողովի մասնակիցներին:³

(12) Այս գործընթացը բուռն հետաքրքրություն առաջացրեց, ուստի Եվրոպայի Խորհուրդը երախտապարտ է բոլոր նրանց, ովքեր իրենց նպաստը բերեցին քննարկումների կայացմանը: Հիշյալ խորհրդակցությունները հաստատեցին, որ իր նորմատիվային հենքի և հարուստ փորձի շնորհիվ Եվրոպայի Խորհուրդն այս ոլորտում ի գործ է իրականացնել արագ միջամտություններ: Հընթացս ծնվեցին բազմաթիվ առաջարկություններ տեղեկատվական զեկույցի բովանդակության վերաբերյալ:

(13) Ներքոշարադրյալը կառուցված է Եվրոպայի Խորհրդի ձեռքբերումների ամուր հենքի վրա, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական կոմիտեցիայի և այլ հիմնարար չափորոշիչների վրա, ըստ որում հաշվի է առնվել նախորդ խորհրդակցությունների հարուստ նյութը: Այդ տեսակետից, այն շատ առումներով արդյունք է միջմշակութային երկխոսության հիմքում ընկած բաց ժողովրդավարական քննարկումների: Նկատի առնելով, որ փաստաթուղթը կազմվել է բազմաթիվ կազմակերպությունների ջանքերով և առաջնորդվելով այն դյուրընթեռնելի դարձնելու ցանկությամբ՝ ստորև ձեռնպահ կմնանք այս կամ այն գաղափարն առաջարկած անձանց անունները նշելուց:

(14) Սույն տեղեկատվական զեկույցին առնչվող փաստաթղթերին ամբողջությամբ կարելի է ծանոթանալ Եվրոպայի Խորհրդի կայքէջում, ինչպես նաև՝ հարակից հրատարակությունների էջերում: Դրանք ներառում են միջմշակութային երկխոսությանը վերաբերող հարցերին անդամ պետությունների, ոչ-կառավարական կազմակերպությունների, կրոնական համայնքների կողմից տրված պատասխանների վերլուծությունը, միջմշակութային երկխոսության տարբեր դրսևորումների մասին (կրթություն, զանգվածային լրատվության միջոցներ) մենագրություններ, ինչպես նաև առանձին շահագրգիռ կողմերի մեկնեբանությունները (երիտասարդներ, գաղթականներ): Տպագիր հրատարակություններն ու նշված կայքէջը տրամադրում են նաև հավելյալ նյութեր, այդ թվում՝ «Հաճախադեպ հարցերի պատասխանները»:

1.3 Հիմնախնդիրներ

(15) Խորհրդակցության հաճախակի կրկնվող թեմաներից էր մշակութային բազմազանության կառավարման հին մոտեցումների անհամապատասխանությունն այն հասարակությունների պահանջներին, որոնցում այդ բազմազանության մակարդակը (և ոչ այնքան գոյությունը) անմախադեպ բարձր է և շարունակում է աճել: Անդամ պետությունների ուղարկած պատասխանները բացահայտեցին մասնավորապես, որ նախկինում նախընտրելի համարված մոտեցումները, որոնք մեկ բառով կարելի է բնորոշել որպես «բազմամշակութային», այլևս անարդյունավետ են: Մյուս կողմից, կարծես թե ցանկություն էլ չկա վերադառնալու ասիմիլյացիայի վերաբերյալ հին շեշտադրումներին: Ներառական հասարակությունների ձևավորումը նոր մոտեցում է պահանջում, և պետք է ընթանալ միջմշակութային երկխոսության ուղիով:

² Ստրասբուրգ, Ստոկհոլմ և Մոսկվա (2007թ. սեպտեմբեր-հոկտեմբեր):

³ Բելգրադ, 8-9 նոյեմբերի, 2007 թ.:

(16) Այնուամենայնիվ, տվյալ նախադասության իմաստն այնքան էլ լավ չէր պարզաբանված: Խորհրդակցական փաստաթուղթը հարցվողներից ակնկալում էր հատակ սահմանում, սակայն պատասխանները խուսափողական բնույթ էին կրում: Դա մասամբ պայմանավորված էր նրանով, որ միջմշակութային երկխոսությունը պարզ բնորոշման տրվող նոր գործիք չէ, որն անմիջապես կարող է կիրառվել ամենատարբեր իրավիճակներում: Թերևս մասամբ էլ մենք գործ ունեինք միջմշակութային երկխոսության կիրառական նշանակության հետ կապված անորոշության հետ:

(17) Այդուհանդերձ, հարցվողներն ու խորհրդակցության մասնակիցները համամիտ էին, որ Եվրոպայի Խորհրդի դավանած **համընդհանուր սկզբունքները** պետք է ծառայեն որպես բարոյական ուղեցույց: Դրանք հիմք են ստեղծում հանդուրժողականության մշակույթի համար՝ ուրվագծելով վերջինիս սահմանները խտրականության կամ անհանդուրժողականության դրսևորումների համատեքստում: Մշակութային ավանդույթները, լինեն դրանք մեծամասնության թե փոքրամասնության ավանդույթներ, չեն կարող գերակա լինել քաղաքացիական ու քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և Եվրոպայի Խորհրդի մյուս փաստաթղթերի հռչակած սկզբունքների և չափորոշիչների նկատմամբ:

(18) Մասնավորապես նշվեց, որ գենդերային հավասարությունը միջմշակութային երկխոսության անվիճելի նախադրյալներից է, քանի որ անհրաժեշտ է օգտագործել ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց փորձը: Հավասարությունն ամենահաճախ կրկնվող թեմաներից էր. բազմադիմի հասարակության մեջ միասին ապրելու մարտահրավերը կարող է դիմագրավել միայն այն դեպքում, եթե պահպանվի արժանապատիվ հավասարության սկզբունքը: Այս միտքն առհասարակ ընդգծվեց կառավարությունների, ոչ-կառավարական կազմակերպությունների (ՈԿԿ), ինչպես նաև գաղթականների միությունների կողմից:

(19) Նշվեց, որ որևիցե ոլորտ, այդ թվում շրջապատը, աշխատավայրը, կրթական համակարգն իր հարակից հաստատություններով, քաղաքացիական հասարակությունը և ի մասնավորի երիտասարդական ոլորտը, զանգվածային լրատվության միջոցները, արվեստների աշխարհն ու քաղաքական դաշտը, չպետք է հայտնվի միջմշակութային երկխոսության լուսանցքում: Ներգրավված պետք է լինեն բոլոր շահագրգիռ կողմերը՝ ՈԿԿ-ները, կրոնական համայնքները, սոցիալական կամ քաղաքական գործընկերները և, անկասկած, անհատները: Ընդամենը, մշակութային բազմազանության ժողովրդավարական կառավարման գործընթացներում ուղղակի մասնակցություն պիտի ունենան կառավարման բոլոր օղակները՝ տեղականից մինչև միջազգային:

(20) Վերջապես և մասնավորապես, խորհրդակցությունը կարևորեց **առաջավոր փորձի առկա ծավալը**: Այն պետք է հղկվի և տարածվի, որպեսզի մշտական հաղորդակցության միջոցով հնարավոր լինի կիրառել առկա դրական փորձը: Խորհրդակցության ամենակարևոր դասն այն է, որ առաջիկա տարիներին ավելի ու ավելի շատ ենք զգալու միջմշակութային երկխոսության կարիքը:

1.4 Հիմնական եզրույթները

(21) Միջմշակութային երկխոսության վերաբերյալ տեղեկատվական գեկույցը, որտեղ հիմնականում օգտագործվել է Եվրոպայի Խորհրդի և միջազգային այլ կազմակերպությունների կողմից մշակված տերմինաբանությունը, ներկայացնում է սահմանման ենթակա մի շարք հայեցակարգեր: Սույն գեկույցում.

- (22) *միջմշակութային երկխոսությունը* հասկացվում է որպես կարծիքների բաց և հարգալից փոխանակում անհատների, տարբեր ազգային, մշակութային, կրոնական և լեզվական ժառանգությամբ խմբերի միջև՝ փոխըմբռնման ու փոխադարձ հարգանքի հենքի վրա: (cf. բաժին 3): Այն գործում է բոլոր մակարդակներում՝ եվրոպական հասարակությունների ներսում, Եվրոպայի և արտաքին աշխարհի միջև:
- (23) *Բազմամշակութային մոտեցումը* (ասիմիլյացիոնիզմի նման) հասկացվում է որպես քաղաքականության առանձնահատուկ մոտեցում (cf. բաժին 3), ընդամին *մշակութային բազմազանություն և բազմամշակութայնություն* եզրույթները նշանակում են, որ տվյալ տարածության և սոցիալական կազմակերպության մեջ փաստացի գոյություն ունեն և կարող են միմյանց հետ փոխազդել տարբեր մշակույթներ:
- (24) Եվրոպայի Խորհրդի սահմանմամբ՝ *սոցիալական համախմբվածությունը* նշանակում է իր անդամների բարեկեցությունն ապահովելու, անհավասարությունները կրճատելու և բևեռացումից խուսափելու՝ տվյալ հասարակության ունակությունը: Համախմբված հասարակությունը միմյանց փոխադարձաբար սատարող ազատ անհատների հանրակցություն է, որոնք ժողովրդավարական եղանակներով հետապնդում են ընդհանուր նպատակներ:
- (25) *շահագրգիռ կողմերն* այն փոքրամասնական կամ մեծամասնական բնույթի խմբերն ու անհատներն են, որոնք ունեն որոշակի դերակատարություն և շահեր («շահագրգռություն») միջմշակութային երկխոսության մեջ. դրանք առավելապես տարբեր մակարդակի կառավարությունների և խորհրդարանների, տեղական և շրջանային ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, գաղթականների ու այլադավանների համայնքների, մշակութային ու լրատվական կազմակերպությունների անդամներն են, ինչպես նաև լրագրողներն ու սոցիալական գործընկերները:
- (26) *պետական կառավարման մարմինները* ներառում են ազգային կառավարությունը, քաղաքական ու վարչական մարմինները կենտրոնական, շրջանային և տեղական մակարդակներում: Այս եզրույթն ընդգրկում է նաև քաղաքային իշխանություններն ու մյուս տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև քաղաքացիակն իրավունքի սուբյեկտ հանդիսացող այն ֆիզիկական ու իրավաբանական անձանց, որոնք կատարում են պետական նշանակության գործառույթներ կամ իրականացնում վարչական կառավարում:
- (27) *Ինտեգրացիան* (սոցիալական ինտեգրացիա, ներառականություն) պետք է հասկանալ որպես երկկողմանի գործընթաց, որն ինքնին ենթադրում է յուրաքանչյուր անհատի արժանապատվության լիակատար հարգանքի, ընդհանուր շահի, բազմակարծության կամ բազմազանության, բռնություններից զերծ համերաշխության մթնոլորտում միասին ապրելու՝ մարդկանց ունակությունը, ինչպես նաև սոցիալական, մշակութային, տնտեսական ու քաղաքական կյանքին մասնակցելու նրանց կարողությունը: Այն ընգրկում է սոցիալական զարգացման բոլոր ուղղություններն ու քաղաքականությունները: Այն նաև ենթադրում է թույլերի պաշտպանությունն ու մարդկանց՝ ստեղծագործելու և նորարարություններ կատարելու իրավունքը:⁴ Անհրաժեշտ է իրականացնել արդյունավետ ինտեգրացիոն գործընթացներ՝ հյուրընկալող երկրի հասարակական-քաղաքական կյանքում գաղթականների լիակատար մասնակցությունն ապահովելու նպատակով: Ինչպես բոլորը, այնպես էլ ներգաղթյալ անձինք պետք է կատարեն օրենքի պահանջներն ու հարգանքով վերաբերվեն եվրոպական հասարակությունների հիմնարար արժեքներին ու մշակութային ժառանգությանը:

⁴ Տես՝ Սոցիալական զարգացման համաշխարհային զագաթաժողովում ընդունված գործողությունների ծրագիրը, 1995 թ.:

Ինտեգրացիոն ռազմավարությունն անպայանդորեն պետք է հասցեագրված լինի հասարակության բոլոր շերտերին՝ ընդգրկելով սոցիալական, քաղաքական և մշակութային ուղղությունները: Դրանք պետք է հարգանք սերմանեն գաղթականների արժանապատվության ու ինքնության նկատմամբ և հաշվի առնեն նրանց շահերն այս կամ այն քաղաքականությունը մշակելիս:

- (28) Անձի ռասայական կամ ազգային ծագումով, սեռային պատկանելությամբ և պաշտպանության ենթակա այլ առանձնահատկություններով պայմանավորված անհարմարությունները փոխհատուցելու նպատակով ձեռնարկվող *գործնական քայլերը* միտված են բոլորի համար լիակատար և փաստացի իրավահավասարության, ինչպես նաև մարդու իրավունքների համահավասար իրականացման ապահովմանը:

(29) Միջազգայնորեն համաձայնեցված իրավական սահմանում չունենք *փոքրամասնություն* եզրույթի համար: Սույն տեղեկատվական զեկույցի շրջանակներում այս եզրույթով հետայսու կանվանենք ազգաբնակչության մնացած մասի հանդեպ փոքրամասնություն կազմող այն անձանց, ներառյալ գաղթականները, որոնք ունեն ազգային ինքնության, մշակույթի, դավանանքի և լեզվի հետ կապված որոշակի առանձնահատկություններ:

2. Մշակութային բազմազանություն

2.1 Բազմակարծություն, հանդուրժողականություն և միջմշակութային երկխոսություն

(30) Մշակութային բազմազանությունը բնավ էլ նոր եզրույթ չէ: Եվրոպական համապատկերը կրում է ազգաբնակչության միջմայրցամաքային տեղաշարժերի, սահմանների վերաճման, գաղութատիրության ու բազմազգ կայսրությունների դրոշմը: Վերջին մի քանի հարյուրամյակների ընթացքում քաղաքական բազմակարծության և հանդուրժողականության սկզբունքի վրա խարսխված հասարակությունները մեզ թույլ են տվել ապրել բազմազանության պայմաններում՝ միաժամանակ խուսափելով սոցիալական համախմբվածության համար անթույլատրելի խոչընդոտների ստեղծումից:

(31) Վերջին տասնամյակներում մշակութային բազմազանությունը վերելք է ապրել: Եվրոպան առիքնում է բարվոք կյանք և քաղաքական ապաստան փնտրող գաղթականներին աշխարհի բոլոր ծագերից: Գլոբալիզացիան սեղմում է տարածությունն ու ժամանակն աննախադեպ մասշտաբներով: Ազգային մշակութային համակարգերը տեղի են տալիս հեռահաղորդակցության և լրատվության ոլորտներում կատարվող հեղաշրջման, մասնավորապես՝ այնպիսի նոր կապի միջոցների առաջ, ինչպիսին ինտերնետն է: Տրանսպորտի և զբոսաշրջության զարգացումն ավելի քան երբևէ մարդկանց առերես շփվելու հնարավորություն է տալիս՝ ստեղծելով միջմշակութային երկխոսության նորանոր առիթներ:

(32) Այս պարագայում բազմակարծությունը, հանդուրժողականությունն ու լայնախոհությունն աննախադեպ մեծ կարևորություն են ստանում:⁵ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից սահմանվել է, որ բազմակարծությունը հիմնվում է «իրական բազմազանության ճանաչման և ընդունման, ինչպես նաև մշակութային ավանդույթների հարահոսի, ազգային ու մշակութային ինքնատիպության, կրոնական հավատալիքների, գրական-գեղարվեստական և սոցիալ-տնտեսական գաղափարների ու հայեցակարգերի վրա» և որ «տարաբնույթ անհատների ու մարդկանց

⁵ Ժողովրդավարական հասարակություններում բազմակարծության, հանդուրժողականության և լայնախոհության կարևորության մասին տես՝ *Handyside v. the United Kingdom, judgement of 7 December 1976, Series A no. 24, § 49.*

խմբերի ներդաշնակ գոյակցությունը չափազանց կարևոր է սոցիալական համախմբվածության ապահովման համար».⁶

(33) Այդուհանդերձ, բազմակարծությունը, հանդուրժողականությունն ու լայնախոհությունը բավարար չեն մշակութային բազմազանության արդյունավետ կառավարման համար՝ անհրաժեշտ է գործադրել եռանդուն, նպատակային և միահամուռ ջանքեր: Միջմշակութային երկխոսությունը հզոր գործիք է այդ նպատակին հասնելու համար, առանց որի անհնար է ապահովել մեր մայրցամաքում ապրող յուրաքանչյուր անհատի ազատությունն ու բարեկեցությունը:

2.2 Մարդկային արժանապատվության համահավասարությունը

(34) Մշակութային կենսունակությանը նպաստելուց զատ, բազմազանությունը նաև խթանում է մարդկանց սոցիալ-տնտեսական գործունեությունը: Անշուշտ, բազմազանության, ստեղծագործական գործունեության և նորարարության արդյունքում կարող ենք նաև ունենալ արատավոր մի շրջան, որտեղ տարբերությունները կուժեղացնեն միմյանց՝ ստեղծելով մարդկային արժանապատվության և սոցիալական բարօրության համար վտանգավոր սպառնալիքներ: Ո՞րն է այն սոսիմձը, որը կարող է միմյանց շահկապել մայրցամաքի վրա ապրող մարդկանց:

(35) Եվրոպայի Խորհրդի որդեգրած ժողովրդավարական արժեքներն ունեն համամարդակյին բնույթ: Այդ արժեքները սուկ Եվրոպայինը չեն: Այս ամենով հանդերձ, 20-րդ դարում Եվրոպայի պատմության մեջ տեղ գտած անմարդկային երևույթների արդյունքում մարդու արժանապատվության հիմնարար արժեվորման անհրաժեշտություն ծագեց: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո եվրոպական ազգային պետությունները մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված առավել համապարփակ ու անդրանցիկ միջոցներ ձեռնարկեցին, որոնք հասցեագրված էին բոլորին, այլ ոչ թե միայն տվյալ երկրի քաղաքացիներին: Մարդու իրավունքների համակազմը յուրաքանչյուր մարդ արարածի արժանապատվությունն առավել բարձր է դասում որևէ պետության քաղաքացի հանդիսացող անհատների իրավունքներից:

(36) Մարդու իրավունքների այս համակազմը ճանաչում է մեր ընդհանուր մարդկային էությունն ու յուրաքանչյուրիս ինքնատիպությունը: Այս կամ այն հանրույթի հետ բազմազանություն չենթադրող ասիմիլացիան կնշանակել հարկադիր համասեռացում և կենսունակության կորուստ, իսկ բազմազանությունն առանց բարձրադասվող համընդհանուր մարդկայնության և համերաշխության անհնար կդարձներ փոխադարձ ճանաչողությունն ու սոցիալական ներառականությունը: Եթե ընդունում ենք ընդհանուր ինքնության գաղափարը, ապա այն պետք է հասկանանք որպես այնպիսի բարոյակարգ, որը միտված է յուրաքանչյուր անհատի համար հավասար արժանապատվության ապահովմանն ու շրջակա աշխարհի նկատմամբ բարյացկամության սկզբունքի պահպանմանը: Երկխոսությունն ու հաղորդակցությունը հիշյալ բարոյակարգի բաղկացուցիչ տարրերից են:

2.3 Չափորոշիչներ և գործիքներ. Եվրոպայի Խորհրդի ձեռքբերումները հինգ տասնամյակների ընթացքում⁷

(37) Արժեքային համակարգի շուրջ համաեվրոպական համաձայնությունն իր արտացոլումն գտել Եվրոպայի Խորհրդի բազմակողմ փաստաթղթերում, ներառյալ

⁶ *Gorzelik and Others v. Poland [GC]*, no. 44158/98, 17 February 2004.

⁷ Տես՝ Հավելված. «Կարևորագույն բազմակողմ համաձայնագրերի վավերացման վիճակն արտացոլող աղյուսակը»:

կոնվենցիաներն ու համաձայնագրերը, ինչպես նաև հանձնարարականները, հայտարարություններն ու հատուկ կարծիքները:

(38) *Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (1950)* մարմնավորեց մարդկային արժանապատվության հանդեպ հետպատերազմյան հանձնառությունը՝ ստեղծելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որն իր դատաիրավական գործունեության մեջ կոնվենցիան մեկնաբանում է այսօրվա իրադարձությունների լույսի ներքո: *Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի թիվ 12 արձանագրությունը (2000)* խտրականության հանընդհանուր արգելման մասին դրույթ էր պարունակում: *Եվրոպական սոցիալական խարտիան* (ընդունված 1961թ. և վերանայված 1996թ.) հստակ սահմանում էր, որ իր հռչակած սոցիալական իրավունքները վերաբերում էին բոլորին՝ առանց բացառության: Նախարարների կոմիտեի «Տղամարդկանց և կանանց իրավահավասարության մասին հռչակագիրը» (1988թ.) սահմանում էր, որ սեռային պատկանելության հետ կապված որևիցե խտրականություն խոչընդոտում է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ճանաչմանը, օգտագործմանն ու կիրառմանը: *Արտագնա աշխատողների իրավական կարգավիճակի մասին եվրոպական կոնվենցիան (1997թ.)* պահանջում է, որ արտագնա աշխատողների նկատմամբ ցուցաբերվի նույնպիսի բարեհաճ վերաբերմունք, ինչպիսին ցուցաբերվում է անդամ պետությունների երկրի քաղաքացիների հանդեպ:

(39) *Եվրոպական մշակութային կոնվենցիան (1954թ.)* հաստատում էր «մայրցամաքի ընդհանուր մշակութային ժառանգության» փաստը և դրանից բխող՝ միջմշակութային ճանաչողության անհրաժեշտությունը, իսկ *Անդրսահմանային հեռուստատեսության մասին եվրոպական կոնվենցիան (1989թ.)* ընդգծում էր մշակույթի զարգացման և կարծիքների ազատ ձևավորմանը միտված հեռարձակումների կարևորությունը: *Մշակութային ժառանգության հասարակական նշանակության մասին շրջանակային կոնվենցիան (2005թ.)* ցույց է տալիս, թե ինչպես կարելի է մշակութային ժառանգության մասին գիտելիքների օգնությամբ խրախուսել փոխադարձ վստահությունն ու փոխըմբռնումը:

(40) Հանդուրժողականության ոգով բազմազանության խրախուսման ու պաշտպանության անհրաժեշտության մասին թեման առանցքային է *Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի (1992թ.)* և *Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի (1995թ.)* համար: *Տեղական համայնքների կամ իշխանությունների միջև անդրսահմանային համագործակցության մասին եվրոպական շրջանակային կոնվենցիան (1980թ.)*, *Տեղական մակարդակում հասարակական կյանքին օտարերկրացիների մասնակցության մասին կոնվենցիան (1992թ.)*, *Տեղական և տարածքային համայնքների հասարակական կյանքին երիտասարդության մասնակցության եվրոպական խարտիան* (վերանայված, 2003թ.) անդրադառնում են տեղական մակարդակում հասարակական կյանքին մասնակցության հարցերին, ճիշտ այնպես, ինչպես որ դա արվում է Տեղական և շրջանային իշխանությունների կոնգրեսի գործունեության միջոցով, մասնավորապես՝ «օտարերկրացիների» ինտեգրման վերաբերյալ վերջինիս ընդունած *Շտուտգարտյան հայտարարությամբ* (2003թ.): Եվրոպայի Խորհրդի և ՅՈՒՆԵՍԿՈ-յի *Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթության որակավորման աստիճանների ճանաչման մասին կոնվենցիան (1997թ.)* արգելում է որակավորումը ճանաչելիս հաշվի առնել այնպիսի արտաքին գործոններ, ինչպիսիք են դիմորդի համոզմունքները, դավանանքն ու կարգավիճակը:

(41) Նախքան *Եվրոպայի Խորհրդի՝ միջմշակութային երկխոսության զարգացման ռազմավարության վերաբերյալ Ֆարոյի հռչակագիրը (2005թ.)*, միջմշակութային

երկխոսությունն արդեն իսկ արծարծվել էր մշակույթի նախարարների Օպատիայի հայտարարության մեջ (2003թ.), իսկ կրթության գծով նրանց գործընկերները միջմշակութային կրթությանն էին անդրադարձել Աթենքյան հայտարարությամբ (2003թ.): Երիտասարդների հարցերով զբաղվող եվրոպական նախարարները 2005 թ. Բուդապեշտում գերակա հայտարարեցին մարդու իրավունքները, կրթությունը, համամոլորակային համերաշխությունը, հակամարտությունների կարգավորումն ու միջկրոնական համագործակցությունը: Նախորդ դարի 80-ականներից սկսած, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը հանդես եկավ միջմշակութային և միջկրոնական երկխոսությանը վերաբերող մի շարք հանձնարարականներով, բանաձևերով, լսումներով և քննարկումներով:⁸ Պետությունների և կառավարությունների ղեկավարների երրորդ գագաթաժողովում ընդունված գործողությունների ծրագիրն սկիզբ դրեց մշակութային բազմազանության խորացմանն ու կառավարմանն ուղղված ռազմավարության մշակմանը՝ միաժամանակ ապահովելով հասարակական համերաշխությունն ու խրախուսելով միջմշակութային երկխոսությունը, այդ թվում՝ կրոնական հարթության մեջ:

(42) Եվրոպայի Խորհուրդը նաև գործում է որպես միջկառավարական կազմակերպություն, ըստ որում արտաքին աշխարհի վրա նրա ազդեցությունն արտահայտվում է վերահսկողության մեխանիզմների ներդրմամբ, գործողությունների ծրագրերի մշակմամբ, քաղաքականության ջատագովմամբ և միջազգային գործընկերների հետ համագործակցության իրականացմամբ: Կարևորագույն գործիք է հանդիսանում *Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովը (ՌԱՊԵՀ)*, որի միջոցով անդամ պետություններում վերահսկողության է իրականացվում ռասիզմի, ինչպես նաև՝ անհանդուրժողականության ու խտրականության տարատեսակ դրսևորումների նկատմամբ, մշակվում են ընդհանուր քաղաքականության հետ կապված հանձնարարականներ, աշխատանքներ են տարվում քաղաքացիական հասարակության հետ: ԵՀԸՌԱ-ն մշտական կապի մեջ է ՄԱԿ-ի Ռասայական խտրականության վերացման կոմիտեի (ՌԽՎԿ) քարտուղարության, ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) և Եվրոպական Միության Հիմնարար իրավունքների գործակալության (ՀԻԳ) հետ: Ընդհանուր առմամբ, *Եվրոպայի Խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարին* կարևոր դերակատարություն է վերապահված մարդու իրավունքներին առնչվող կրթական, իրազեկային և կատարողական քաղաքականության իրականացման հարցում: *Օրենքի գերակայությամբ հատկանշվող (իրավական) ժողովրդավարության եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով)*, որը սահմանադրական հարցերով Եվրոպայի Խորհրդի խորհրդակցական մարմինն է, առաջատար դերակատարություն է ունեցել Եվրոպայի սահմանադրական ժառանգությանը համապատասխան սահմանադրությունների ընդունման գործում և մշտապես հանդես է եկել ի պաշտպանություն փոքրամասնությունների իրավունքների: *Հյուսիս-Հարավ կենտրոնը* վերածվել է մշակույթների միջև երկխոսության կարևորագույն ամբիոնի՝ դառնալով կամուրջ Եվրոպայի և նրա հարևանների միջև:

2.4 Երկխոսության բացակայության հետ կապված ռիսկերը

(43) Երկխոսության բացակայության վտանգները պետք է գնահատվեն ամենայն լրջությամբ և հավուր պատշաճի: Երկխոսությունից հրաժարումը կարող է հանգեցնել այլոց մասին պատկերացումներում կարծրատիպերի ձևավորմանը, փոխադարձ կասկածամտության, անհարկի լարումների և մտահոգությունների առաջացմանը, փոքրամասնությունների օգտագործմանը որպես քաղաքական նոխսագների: Միով բանիվ, այն հղի է անհանդուրժողականության և խտրականության դրսևորումներով:

⁸ Տես՝ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի հանձնարարականները հավելվածում:

Հասարակությունների ներսում և նրանց միջև երկխոսության խզումը որոշ դեպքերում կարող է հող նախապատրաստել ծայրահեղականության և ահաբեկչության մթնոլորտի ձևավորման և իրականացման համար: Հարևանների միջև միջմշակութային երկխոսությունն անհրաժեշտություն է, այդ թվում՝ միջազգային մակարդակով:

(44) Բազմակողմ և բազմադիմի միջավայրի առջև դռները գոցելը անվտանգության պատրանք կարող ստեղծել միայն: Բացառական հանրության կողմից ներշնչվող ապահովության զգացումն ի վերջո կարող է հանգեցնել հեղձուցիչ համարվողականության: Երկխոսության բացակայությունը յուրաքանչյուրին զրկում է գլոբալիզացվող աշխարհում անհատի և հասարակության զարգացման համար անհրաժեշտ մշակութային նոր բացահայտումների հնարավորությունից: Տարանջատված և իրարամերժ հանրույթներն ստեղծում են այնպիսի միջավայր, որը հաճախ թշնամաբար է տրամադրված լինում անհատականության դրսևորման և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների իրացման նկատմամբ:

(45) Երկխոսության բացակայությամբ անտեսվում է Եվրոպայի մշակութային և քաղաքական ժառանգությունը: Եվրոպայի պատմությունը խաղաղասիրության և կառուցողականության բազմաթիվ օրինակներ է մատուցել, երբ անհրաժեշտ է եղել դրսևորել իրական կամք՝ հարևանի հետ երկխոսություն սկսելու և անդրսահմանային համագործակցություն հաստատելու համար: Շատ հաճախ անկեղծության պակասություն աղետաբեր է եղել հասարակությունների համար: Երկխոսության միջոցով է միայն հնարավոր հասնել միասնականության և բազմազանության:

3. Հայեցակարգային հենքը

3.1 «Միջմշակութային երկխոսություն» հասկացությունը

(46) Սույն տեղեկատվական զեկույցի շրջանակներում միջմշակութային երկխոսություն ասելով պետք է հասկանալ այնպիսի գործընթաց, որը ենթադրում է փոխըմբռնման ու փոխադարձ հարգանքի վրա հիմնված բաց և հարգալից կարծիքների փոխանակություն ազգային, մշակութային, կրոնական և լեզվական տարբեր ժառանգություն և առանձնահատկություններ ունեցող անհատների և խմբերի միջև: Այն պահանջում է ինքնարտահայտման ազատություն և կարողություն, ինչպես նաև ուրիշների կարծիքին ակնազալուր լինելու ցանկություն և ունակություն: Միջմշակութային երկխոսությունը նպաստում է սոցիալական, քաղաքական, մշակութային և տնտեսական ինտեգրացիային և մշակութային առումով միմյանցից տարբեր հասարակությունների համերաշխությանը: Այն խթանում է իրավահավասարությունը, մարդկային արժանապատվությունը և ընդհանուր նպատակի զգացողություն առաջացնում: Այն նպատակ ունի ամրապնդել տարբեր աշխարհայացքների և մոտեցումների միջև փոխըմբռնումը, խորացնել համագործակցությունն ու մասնակցային գործընթացները (կամ էլ ընտրության ազատությունը), նպաստել անհատի զարգացմանն ու փոխակերպմանը, ինչպես նաև այլոց նկատմամբ հանդուրժողականության և հարգալից վերաբերմունքի ձևավորմանը:

(47) Մարդու իրավունքների նկատմամբ լիարժեք հարգանքի սերմանմանը, ժողովրդավարության և օրենքի գերակայության հաստատմանն ուղղված առաջնային ջանքերին զուգահեռ՝ միջմշակութային երկխոսությունը կարող է նաև ծառայել բազմաթիվ այլ նպատակների: Այն կարևորագույն բնութադրիչն է ներառական հասարակությունների, որոնք թույլ չեն տալիս, որ որևէ մեկը հայտնվի հասարակության լուսանցքում կամ համարվի կողմնակի անձ: Միջմշակութային երկխոսությունը միջնորդավորման և հաշտեցման հզորագույն գործիք է. մշակութային ջրբաժանների նկատմամբ որդեգրելով կշռադատված և կառուցողական մոտեցումներ՝ այն օգնում է փարատել սոցիալական շերտավորման և անապահովության հետ կապված իրական մտահոգությունները՝

միաժամանակ նպաստելով ինտեգրացիոն գործընթացներին ու սոցիալական համերաշխությանը: Ընտրության ազատությունը, խոսքի ազատությունը, իրավահավասարությունը, հանդուրժողականությունն ու մարդկային արժանապատվության նկատմամբ հարգանքն այս առումով գերակա սկզբունքներ են հանդիսանում: Միջնակության երկխոսության հաջողությունը կախված է ժողովրդավարական ավանդույթներով պայմանավորված բազմաթիվ գործոններից, ներառյալ շիտակությունը, երկխոսության և մյուսներին արտահայտվելու հնարավորություն ընձեռելու պատրաստակամությունը, հակամարտությունները խաղաղ ճանապարհով լուծելու և մյուսների փաստարկների հիմնավորվածությունն ընդունելու ունակությունը: Այն թույլ է տալիս ամրապնդել ժողովրդավարական կայունությունը, արմատախիլ անել հասարակական կյանքում և քաղաքական բանավեճերում տեղ գտած նախապաշարումներն ու կարծրատիպերը, կամուրջներ կապել տարբեր մշակութային և կրոնական համայնքների միջև, դրանով իսկ նպաստելով հակամարտությունների նախականխմանն ու լարվածության թուլացմանը, ներառյալ հետբախումնային իրավիճակների և «սառեցված» հակամարտությունների կարգավորումը:

(48) Պետք չէ ակնկալել հեշտ լուծումներ: Միջնակության երկխոսությունը չի կարող համադարձան և սպառիչ պատասխան լինել տարաբնույթ չարիքների և հարցերի համար: Հարկ է գիտակցել, որ նրա գործողության տիրույթն անսահմանափակ չէ: Հաճախ միանգամայն իրավացիորեն նշվում է, որ անհնար է երկխոսություն հաստատել նրանց հետ, ովքեր մերժում են երկխոսության առաջարկը, թեև այդ հանգամանքը բաց և ժողովրդավարական հասարակություններին չի ազատում շարունակ երկխոսության առիթներ փնտրելու պարտականությունից: Մյուս կողմից, երկխոսությունը նրանց հետ, ովքեր ցանկանում են դա, սակայն մասամբ կամ ամբողջությամբ չեն կիսում գրուցակցի «այս կամ այն արժեքը», կարող է մեկնակետը լինել առերես շփման երկարուձիգ գործընթացների, որոնց արդյունքում կարող է համաձայնություն ձեռք բերվել մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության կարևորության և գործնական նշանակության շուրջ:

3.2 Ինքնության կառուցումը բազմամշակույթ միջավայրում

(49) Անհատի արժանապատվությունը հասարակության հիմքն է: Սակայն անհատը համասեռ սոցիալական միավոր չէ: Ըստ սահմանման, մեր ինքնությունը ոչ թե մեզ դարձնում է ուրիշների նման, այլ օգնում է, որ մենք լինենք անկրկնելի և յուրահատուկ: Մարդու ինքնությունն ամբողջական համալիր է և փոխադրկապված տարրերի համակցություն:

(50) Մեփական մշակույթի ընտրությունը մարդկանց հիմնարար ազատություններից է. այն կենտրոնական տեղ է զբաղեցնում մարդու իրավունքների համակարգում: Միաժամանակորեն կամ կյանքի տարբեր փուլերում յուրաքանչյուր ոք կարող է անդամագրվել մշակութային տարբեր ուղղությունների: Այդուհանդերձ, յուրաքանչյուր անհատ արդյունք է որոշակի մշակութային ժառանգության կամ սոցիալական նախապատմության: Ժամանակակից ժողովրդավարական հասարակություններում յուրաքանչյուր ոք կարող է իր ինքնությունը հարստացնել զանազան մշակութային հոսանքներով: Ոչ ոք չի կարող իր կամքին հակառակ սահմանափակվել որոշակի խմբի, համայնքի, հայեցակարգի կամ աշխարհայացքի շրջանակներում և պետք է հնարավորություն ունենա հրաժարվելու նախկին ընտրությունից հօգուտ նորերի, եթե իհարկե դրանք համահունչ են մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության համամարդկային արժեքներին: Երկուստեք բացախտությունն ու միմյանց տեսակետների ընդունումը բազմակի մշակութային պատկանելության դրսևորումներից են: Դրանք գոյակցության կանոններ են, որոնք կիրառվում են են այն

անհատների կամ խմբերի նկատմամբ, ովքեր կարող են ազատորեն դավանել իրենց մշակույթը, և պետք է հարգվեն մյուսների կողմից:

(51) Այսպիսով, միջմշակութային երկխոսությունը կարևոր գործիք է հանդիսանում բազմամշակութային միջավայրում տարբեր մշակութային ուղղությունների կառավարման համար: Այն մի մեխանիզմ է, որը թույլ է տալիս ինքնության դաշտում հասնել նոր հավասարակշռության՝ ընդառաջ գնալով նորահայտ պատեհություններին և փորձառության հնարավորություններին, ինչպես նաև հարստացնել սեփական ինքնությունը առանց հրաժարվելու սեփական արմատներից: Միջմշակութային երկխոսությունն օգնում է խույս տալ ինքնության նկատմամբ կիրառվող քաղաքականության ծուղակներից և զերծ մնալ արդի հասարակություններին բնորոշ մարտահրավերներից:

3.3 Նախկին մոտեցումները մշակութային բազմազանությանը

(52) Ազգային պետությունների ծաղկման շրջանում՝ 1870-1945 թթ., Եվրոպայում այն կարծիքն էր իշխում, որ այս կամ այն պետության սահմաններում բնակվող բոլոր անձինք պետք է տարրալուծվեին հիմնական էթնոսի մեջ՝ վերջինիս ընկերային միջավայրին սերնդեսերունդ հարմարվելով երբեմն նույնիսկ նեղ ազգագրական սովորույթների և ծիսակարգերի միջոցով:

(53) Երկրորդ համաշխարհայինից հետո բաժան-բաժան եղած Եվրոպայի արևմտյան հատվածում ներգաղթը պայմանավորված էր բազմամշակութայնություն կոչված հասարակական նոր հայեցակարգով: Դա նպաստեց քաղաքական ճանաչմանն այն երևույթի, որն ընկալվեց որպես «հյուրընկալող» մեծամասնության հետ հավասար իրավունքներ ունեցող ազգային փոքրամասնությունների առանձին արժեհամակարգ: Թեև դա առերևույթ նշանակում էր արմատական շեղում ասիմիլյացիոնիզմից, սակայն գործնականում բազմամշակութայնությունը հասարակության վերաբերյալ ուներ այն նույն սխեմատիկ ընկալումը, որը ենթադրում էր մեծամասնության և փոքրամասնության հակադրություն: Միակ տարբերությունը կայանում էր նրանում, որ վերջինս հանդես էր գալիս մեծամասնությունից փոքրամասնության տարանջատման օգտին՝ հրաժարվելով ասիմիլյացիայի սկզբունքից:

(54) *Օպատիյայի հայտարարությունը* (2003թ.) մերժեց այս հարացույցը: Մշակութային բազմազանության բնորոշման մեջ ընդգծվում էր, որ «այս սկզբունքը չի կարող կիրառվել բացառապես «մեծամասնություն» և «փոքրամասնություն» իմաստներով, քանի որ այդպիսի ձևակերպումն առանձնացնում է մշակույթ և հանրույթ հասկացությունները՝ նրանց հաղորդելով կտրական բնույթ և դատապարտելով անփոփոխության այն պարզ պատճառով, որ սոցիալական վարքագիծն ու մշակութային կարծրատիպերն ընկալվում են խմբերի կարգավիճակի հիման վրա»: Մասամբ համադրվող ինքնությունները բնավ էլ հակասության մեջ չեն գտնվում, ընդհակառակը՝ դրանք հանդիսանում են դրական էներգիայի աղբյուր՝ ստեղծելով ընդհանուր եզրեր գտնելու հնարավորություն:

(55) Բարի մտադրություններով հանդերձ՝ բազմամշակութայնությունն այսօր շատերի կողմից դիտվում է որպես համայնքային տարանջատումների կատալիզատոր և խոչընդոտ փոխըմբռնման ճանապարհին, որը վտանգում է անհատի իրավունքները. մասնավորապես, կանայք փոքր համայնքներում ընկալվում են որպես առանձին հավաքական գործոն: Արդի հասարակությունների մշակութային բազմազանությունը պետք է ընդունել որպես առկա փաստ: Այդուհանդերձ, խորհրդակցության ընթացքում կարմիր թելի պես անցնում էր այն միտքը, որ բազմամշակութայնությունն այլևս անհարմարությունների աղբյուր է հանդիսանում հարցախույզի մասնակիցների համար:

(56) Այս մոդելներից և ոչ մեկը, լինի դա ասիմիլյացիան թե բազմամշակութայնությունը, ամբողջությամբ չի կիրառվում և ոչ մի երկրում: Դրանց առանձին տարրերը համակցվում են նոր ծնվող միջմշակութային հարացույցի դրսևորումների հետ, որտեղ ի մի են բերվում նախորդ մոտեցումների լավագույն կողմերը: Ասիմիլյացիոնիզմից վերցվել է անհատին վերապահվող կենտրոնական դերը, բազմամշակութայնությունից՝ մշակութային բազմազանության ճանաչումը: Այս ամենին ավելացվել է ինտեգրացիայի և սոցիալական համախմբվածության առումով էական նշանակություն ունեցող մի նոր տարր, այն է՝ երկխոսություն հավասար արժանապատվության և ընդհանուր արժեքների հենքի վրա:

3.4 Միջմշակութային երկխոսության պայմանները

3.4.1 Մարդու իրավունքներ, ժողովրդավարություն և օրենքի գերակայություն

(57) Եվրոպայի Խորհրդի ջատագոված համամարդկային արժեքները նախադրյալներ են ստեղծում միջմշակութային երկխոսության համար: Չի կարող լինել երկխոսություն առանց համընդհանուր և համահավասար արժանապատվության, մարդու իրավունքների, օրենքի գերակայության և ժողովրդավարական սկզբունքների ճանաչման: Այս արժեքները և ի մասնավորի խոսքի ազատությունն ու մյուս հիմնարար ազատությունները երաշխիք են, որպեսզի բացառվի հասարակության ներսում որևիցե մեկի կամ որևէ խմբի գերիշխանությունը: Այսպիսով, դրանք չափազանց կարևոր են փաստարկների հիման վրա և ոչ թե ուժի դիրքերից երկխոսություն սկսելու համար:

(58) Միմյանց հետ մրցակցող իրավունքների պարագայում պետք է կարողանալ հավասարակշռված մոտեցում ցուցաբերել միջմշակութային խնդիրների նկատմամբ: Նախադեպային իրավունքի հիման վրա գործող մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ինչպես նաև այնպիսի վերահսկիչ մարմինների փորձը, ինչպիսիք են ՌԱՊԵՀ-ը կամ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտեն, ցույց է տալիս այդպիսի հավասարակշռության հասնելու գործնական եղանակները:

(59) Ազգային, մշակութային, կրոնական և լեզվական առանձնահատկություններն ու ավանույթները չեն կարող խանգարել անհատների իրավունքների իրականացմանը կամ հասարակական կյանքում պատասխանատվության ստանձնմանը: Այս սկզբունքը հատկապես վերաբերում է սեռային կամ այլ բնույթի խտրականության չենթարկվելու իրավունքին, երեխաների, երիտասարդների իրավունքներին ու շահերին, ինչպես նաև այս կամ այն կրոնը դավանելու կամ այլ հավատալիքներ ունենալու՝ բոլոր մարդկանց իրավունքին: Մարդու իրավունքների այնպիսի խախտումները, ինչպիսիք են հարկադրյալ ամուսնությունները, «պատվախնդրությունից բխող հանցանքները» կամ սեռական բռնությունները՝ երբեք չեն կարող արդարացվել՝ անկախ մշակութային ենթատեքստից: Նմանապես, «գերիշխող մշակույթին» վերաբերող իրական թե մտացածին կանոնները չեն կարող օգտագործվել որպես արդարացում՝ խտրականություն, ազգամիջյան ատելություն սերմանելու կամ էլ կրոնական, ռասայական, ազգային և այլ նկատառումներով խտրականություն կիրառելու համար:

(60) Ժողովրդավարությունը մեր քաղաքական համակարգի անկյունաքարն է. քաղաքացիներն արժևորվում են նախևառաջ որպես քաղաքականության սուբյեկտներ և ոչ միայն որպես սոցիալական էակներ, որոնք լոկ նպաստում են ազգի բարօրությանը կամ օգտվում դրանից: Ժողովրդավարությունը ծաղկում է, որովհետև օգնում է քաղաքացիներին նույնանալու այն հասարակության հետ, որի մասնիկն են իրենք հանդիսանում, ինչպես նաև՝ որովհետև հասարակությունը նրանց հնարավորություն է

⁹ Իգական սեռի նկատմամբ կատարված սեռական բռնությունների մասին տես՝ *Collins and Akaziebie v. Sweden, no.23944/05 decision of 8 March, 2007.*

տալիս օրինական կարգով մասնակցելու կառավարական և իշխանական գործընթացներին: Վերջին երկու տասնամյակների ընթացքում Եվրոպայի Խորհրդի ապրած վերելքը ժողովրդավարության ուժի ակնառու վկայությունն է: Ողջամիտ և կառուցողական երկխոսությունը, որպես խորապես ժողովրդավարական չափորոշիչ, պետք է հիմնվի նաև մյուս ժողովրդավարական սկզբունքների՝ բազմակարծության, ներառականության և հավասարության վրա: Կարևոր է, որ երկխոսությունն ընդունի ժողովրդավարական մշակույթի ոգին և յուրացնի նրա կարևորագույն տարրերը. մասնակիցների փոխադարձ հարգանքն ու յուրաքանչյուրի պատրաստակամությունը՝ որոնելու և գտնելու ընդհանուր եզրեր:

(61) Ժողովրդավարական հասարակության մեջ օրենքի գերակայության հիմնարար չափորոշիչները հանդիսանում են այն ամուր հիմքի տարրերը, որի վրա ծաղկում է միջմշակութային երկխոսությունը: Դրանք ապահովում են իշխանությունների հստակ տարանջատում, իրավական պարզորոշություն և օրենքի առաջ բոլորի հավասարություն: Դրանք թույլ չեն տալիս, որ պետական կառավարման մարմիններն ընդունեն կամայական և խտրական որոշումներ՝ ոտնահարված իրավունքներով քաղաքացիների համար ապահովելով դատարանում իրավունքների վերականգնման հնարավորություն:

3.4.2 Հավասար արժանապատվություն և փոխադարձ հարգանք

(62) Միջմշակութային երկխոսությունը ենթադրում է ինքնաքննադատական մոտեցում, երբ յուրաքանչյուր ոք իրեն կարող է տեսնել ուրիշի աչքերով: Հիմնվելով Եվրոպայի Խորհրդի դավանած արժեքային համակարգի վրա՝ այն պահանջում է այնպիսի ժողովրդավարական կառույցների առկայություն, որոնք բնութագրվում են մարդկային էակ հանդիսացող անհատի նկատմամբ հարգալից վերաբերմունքով, միմյանց իրավունքների ճանաչմամբ (համահավասար կարգավիճակի ճանաչում բոլորի համար և բոլորի կողմից), ինչպես նաև անկանխակալ վերաբերմունք (յուրաքանչյուր պահանջի քննություն ընդհանուր կանոնների համաձայն):

(63) Վերջինս ավելի է հստակեցնում միջմշակութային մոտեցման տարբերությունը նախորդ մոդելներից: Ի տարբերություն ասիմիլացիայի, այն սահմանում է, որ պետական կառավարման մարմինները պետք է լինեն անաչառ և միջհամայնքային լարումներից խուսափելու նպատակով՝ պետք է հրաժարվեն մեծամասնության արժեհամակարգի գերակայության ընդունումից: Ի տարբերություն բազմամշակութայնության, այն ենթադրում է անխախտելի սկզբունքների առկայություն, որում հարաբերական բարոյականությունը տեղ չունի: Ի տարբերություն նախորդ երկուսի, այն ճանաչում է քաղաքացիական հասարակության միավորումների առանցքային դերը, որտեղ խարսխվելով փոխադարձ ճանաչման վրա և ընդունման վրա՝ միջմշակութային երկխոսությունը կարող է լուծել այնպիսի հանապազօրյա խնդիրներ, որոնք կառավարություններն ի գործ չեն լուծել միայնակ:

(64) Հավասարությունն ու փոխադարձ հարգանքը միջմշակութային երկխոսության հիմնական շինանյութն են և նպաստում են վերջինիս իրականացման ճանապարհին առկա արգելքների հաղթահարմանը: Իրավահավասարության դաշտում առաջընթացի բացակայության պարագայում սոցիալական լարումները կարող են տեղափոխվել մշակութային ոլորտ, անգամ եթե բուն պատճառներն այլուր են, և մշակութային ինքնությունը կարող է օգտագործվել միմյանց նշավակելու նպատակով:

3.4.3 Գենդերային հավասարություն

(65) Ինչպես նշվեց Կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ եվրոպական նախարարների 5-րդ համաժողովում (2003թ.), կանանց և տղամարդկանց

իրավահավասարությունը փոփոխվող հասարակությունների առջև ծառայող հիմնական մարտահրավերներից է: Այն ժողովրդավարության կարևորագույն տարրերից է: Գենդերային հավասարությունը մարդու իրավունքների բաղկացուցիչ մասն է: Մեռային բնույթի խտրականությունը խոչընդոտում է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացմանը: Կանանց իրավունքների նկատմամբ հարգանքը չի կարող հանդիսանալ քննարկման առարկա մշակութային բազմազանության շուրջ բանավեճերում:

(66) Գենդերային անհավասարության դեմ պայքարը չի կարող առաջնորդվել կարծրատիպերով: Հարկ է ընդգծել «փոքրամասնությունների» և «գենդերային հավասարության» միջև կոդավորված բանաձևերի օգտագործման անթույլատրելիությունը, որոնք ներշնչում են այն միտքը, թե իբր «հյուրընկալող» համայնքի ներսում ամեն ինչ կատարյալ է, իսկ փոքրամասնություններն ու կրոնական խմբավորումները միայն խնդիրներ են առաջացնում: Գենդերային խնդիրները կարող են համադրվել միջհամայնքային հակասությունների հետ, քանի որ ոչ մի համայնք չունի գենդերային հավասարության կամ անհավասարության մենաշնորհ:

(67) Գենդերային հավասարությունը դրական երանգ է ներմուծում միջմշակութային երկխոսության մեջ: Անհատի ինքնության բարդությունն անհնար է դարձնում սոցիալական համերաշխության ընկալումը կարծրատիպային, համայնավարական տեսանկյունից: Գենդերային անհավասարության տարանցիկ խնդիր լինելու փաստն արդեն իսկ նշանակում է, որ «փոքրամասնական» և «հյուրընկալող» համայնքների իգական սեռի ներկայացուցիչները միջմշակութային նախագծերում կարող են հենվել իրենց ընդհանուր փորձի վրա:

(68) Եվրոպայի Խորհրդի սոցիալական համերաշխության վերանայված ռազմավարությունը հստակ սահմանում է, որ կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը հիմնարար և գերակա հանձնառություն է: Այն հրամայական է դարձնում «գենդերային կանոնակարգման հեռանկարը» սոցիալական համախմբվածության ասպարեզում և պետք է ամբողջությամբ ներկայացված լինի միջմշակութային երկխոսության մեջ:

3.4.4 Միջմշակութային երկխոսության արգելքների հաղթահարումը

(69) Միջմշակութային երկխոսության ճանապարհին բազմաթիվ խոչընդոտներ կան: Դրանցից մի քանիսը կապված են տարբեր լեզուներով հաղորդակցվելու դժվարությունների հետ: Մյուսները գալիս են իշխանությունից և քաղաքականությունից. խտրականություն, աղքատություն և շահագործում, որոնք հաճախ թանկ են նստում սոցիալապես անպաշտպան և հասարակության կողմից մերժված խմբերի անդամների վրա և համակարգային բնույթի խոչընդոտներ են ստեղծում երկխոսության համար: Եվրոպական շատ երկրներում կարելի է գտնել այնպիսի սոցիալական խմբեր և քաղաքական կազմակերպություններ, որոնք ատելություն են քարոզում «ուրիշի», «օտարների» կամ էլ որոշակի կրոնական ինքնությունների հանդեպ: Ռասիզմը, ալլատյացությունը, անհանդուրժողականությունը և խտրականության մյուս դրսևորումները մերժում են երկխոսության բուն գաղափարը և մշտական առճակատման մեջ են գտնվում վերջինիս հետ:

3.5 Կրոնական բաղադրիչը

(70) Եվրոպայի հարուստ մշակութային ժառանգությունն իրենից ներկայացնում է կյանքի իմաստի մասին մասամբ կրոնական, մասամբ էլ աշխարհիկ ընկալումների համակցություն: Քրիստոնեությունը, հուդայականությունն ու իսլամն իրենց

տարընթերցումներով հանդերձ խոր ազդեցություն են թողել մայրցամաքի վրա: Եվրոպայի հին ու նոր անցյալն աչքի է ընկել կրոնական հողի վրա ծնված հակամարտություններով:

(71) Մտքի, խղճի և դավանանքի ազատությունը ժողովրդավարական հասարակության անկյունաքարերից է և պահպանվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածով: Այդ ազատությունը ինչպես հավատացյալների, այնպես էլ աթեիստների, ազնուտիկների, սկեպտիկների և բոլոր մյուսների ինքնության և աշխարհընկալման կարևորագույն բաղադրիչն է: Պաշտպանելով հանդերձ նշված ազատությունը՝ 9-րդ հոդվածը որոշակի հանգամանքներում սահմանափակումներ է նախատեսում վերջինիս դրսևորման համար: Հասարակական կյանքում, մասնավորապես, կրթության ոլորտում կրոնական խորհրդանիշների գործածության հարցին է անդրադառնում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը:¹⁰ Անդամ երկրների միջև կրոնական հարցերի շուրջ ընդհանուր համաձայնության հարաբերական բացակայության պատճառով դատարանը հակված է պետություններին ընձեռել թեև ոչ անսահմանափակ, սակայն որոշակի «զնահատման ազատություն» (հայեցողություն) այս ոլորտում:

(72) Զգալի ընդհանրություններ կան Եվրոպայի Խորհրդի օրակարգային հարցերի և կրոնական համայնքների խնդիրների միջև. մարդու իրավունքներ, ժողովրդավարական քաղաքացիություն, ընդհանուր արժեքների, խաղաղության, երկխոսության, կրթության և համերաշխության խորախուսում: Խորհրդակցության մասնակիցները համամիտ էին այն հարցում, որ հենց իրենց՝ կրոնական համայնքների խնդիրն է տարբեր մշակույթների միջև փոխըմբռնման հաստատումը միջկրոնական երկխոսության միջոցով:

(73) Երկխոսության դաշտում կրոնական համայնքներին վերապահվող առանցքային դերակատարությունը նշանակում է, որ իշխանությունների հետ համատեղ կրոնական համայնքները պետք է ջանքեր գործադրեն այս ոլորտում: Եվրոպայի Խորհուրդն արդեն որոշակի քայլեր է կատարել այս ուղղությամբ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի զանազան նախաձեռնությունների և Մարդու իրավունքների հանձնակատարի կազմակերպած սեմինարների միջոցով: 2000 թ. ի վեր Մարդու իրավունքների հանձնակատարը պարբերաբար ի մի է բերում տարբեր կրոնական համայնքների ներկայացուցիչներին՝ Եվրոպայի Խորհրդի մարդու իրավունքներին առնչվող օրակարգում նրանց ներգրավելու նպատակով: Կրոնական ծիսակարգը ժամանակակից մարդու կյանքի մի մասնիկն է, այդ իսկ պատճառով այն պետք է գտնվի պետական կառավարման մարմիններին հետաքրքրությունների շրջանակում, ըստ որում՝ պետությունը տարբեր կրոնների, դավանանքների և հավատքների համար պետք է իրականացնի չեզոք և անկողմնակալ կազմակերպչի գործառույթ:¹¹ Վոլգայի համաժողովի հայտարարությունը (2006թ.)¹² Եվրոպայի Խորհրդին կոչ էր անում «բաց, թափանցիկ և կանոնավոր» երկխոսություն սկսել կրոնական կազմակերպությունների հետ՝ միաժամանակ ընդունելով, որ այն պետք է հիմնված լինի համամարդկային արժեքների և սկզբունքների վրա: Դա կարող էր երկրորդել կրոնական համայնքների հետ երկխոսության ոլորտում անդամ պետությունների կողմից որդեգրված կլոր սեղանի մոտեցմանը: Միջմշակութային երկխոսության կրոնական բաղադրիչի վերաբերյալ 2007 թ. Սան Մարինոյի հայտարարության¹³ մեջ նշվում է, որ կրոնները կարող են նպաստել երկխոսության ամրապնդմանն ու խորացմանը: Ենթատեքստը բնորոշվեց որպես ընդհանուր ձգտում՝ մարդու իրավունքների ջատագովման միջոցով պաշտպանելու մարդ

¹⁰ Տես օրինակ՝ *Kurtulmus v. Turkey*, No. 65500/01, decision of 24 January 2006; *Leyla Sahin v. Turkey*, judgement of 10 November 2005 (Grand Chamber); *Dahlab v. Switzerland*, decision of 15 February 2001.

¹¹ Տես օրինակ՝ *Leyla Sahin v. Turkey*, judgement of 10 November 2005 « 107.

¹² Final Document of the International Conference “Dialog of Cultures and Inter-Faith Cooperation” (Volga Forum), Nizhny Novgorod/Russian Federation, 7-9 September, 2006 (available at www.coe.int/dialog).

¹³ Final Declaration of the European Conference on “The religious dimension of intercultural dialog,” San Marino, 23 and 24 April, 2007 (available at www.coe.int/dialog).

անհատի արժանապատվությունը, ներառյալ կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը, ինչպես նաև՝ ամրապնդելու սոցիալական համախմբվածությունը և խրախուսելու փոխըմբռնումն ու հարգանքը: Սան Մարինոյի հայտարարությամբ ներկա գտնվող կրոնական համայնքների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ողջունում էին Եվրոպայի Խորհրդի շահագրգռությունն այս բնագավառում: Նրանք ընդունեցին, որ Եվրոպայի Խորհուրդը չեզոք էր լինելու մտքի, խղճի և հավատքի ազատության, քաղաքացիների իրավունքների և պարտավորությունների, ինչպես նաև պետության և կրոնի անկախության պաշտպանությանն ուղղված իր ջանքերում: Նշվեց նաև, որ անհրաժեշտ է ավելի հաճախակի կազմակերպել նմանօրինակ միջոցառումներ, որպեսզի հնարավորություն տրվի՝ ի թիվս այլ հարցերի քննարկել նաև կրոնի ազդեցությունը պետական քաղաքականության այնպիսի ուղղությունների վրա, ինչպիսիք են առողջապահությունը, կրթությունը: Կրոնական համայնքների ներկայացուցիչների հետ միասին, աշխարհիկ հայացքների տեր անհատները ևս իրավունք ունեն մասնակցել հասարակության բարոյական հիմքերի վերաբերյալ քննարկումներին և ներգրավվելու միջնաշակութային երկխոսության մեջ:

(74) 2008 թ. ապրիլի 8-ին Եվրոպայի Խորհուրդը բացառության կարգով «կարծիքների փոխանակում» կազմակերպեց միջնաշակութային երկխոսության կրոնական բաղադրիչի շուրջ, որի թեման էր. «Կրոնական և դավանանքային փաստերի ուսուցանումը որպես տարբեր կրոնների և հավատալիքների մասին գիտելիքների ձեռքբերման միջոց և ժողովրդավարական քաղաքացիության, մարդու իրավունքների և միջնաշակութային երկխոսության զարգացման գործիք»: Փոխանակմանը մասնակցում էին Եվրոպայի Խորհրդի անդամ և դիտորդ պետությունները, կազմակերպության ինստիտուցիոնալ գործընկերները՝ Եվրահանձնաժողովը, Եվրոպայում ավանդաբար գործող կրոնական ու դավանանքային համայնքների, հասարակական և ոչ-կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ: Լինելով նոր և փորձարարական բնույթի միջոցառում՝ այն գլխավորապես նպատակ էր հետապնդում քարոզել և ամրապնդել Եվրոպայի Խորհրդի հիմնարար արժեքները, այն է՝ մարդու իրավունքների պաշտպանություն, ժողովրդավարության և օրենքի գերակայության ջատագովում: Ակնկալվում էր, որ հեռանկարում հնարավոր կլինի եվրոպական հասարակության մեջ խրախուսել և զարգացնել փոխադարձ հարգանքի և իրազեկության, հանդուրժողականության և փոխըմբռնման մթնոլորտ: Այս նպատակն իր շուրջը պետք է համախմբի կրոնական համայնքների, այդ թվում՝ տարբեր դավանանքների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների՝ ներգրավելով նրանց վերոհիշյալ արժեքների վերաբերյալ բաց և թափանցիկ երկխոսության մեջ: Նպատակն աստվածաբանական բանավեճը չէր, ոչ էլ միջկրոնական երկխոսության նախաձեռնումը:

(75) Պետական կառավարման մարմինների և կրոնական համայնքների միջև երկխոսությունից զատ, որն անկասկած պետք է խրախուսվի, անհրաժեշտ է նաև երկխոսություն հաստատել առանձին կրոնական համայնքների միջև (միջկրոնական երկխոսություն): Եվրոպայի Խորհրդի կողմից հաճախ է նշվել, որ լայն իմաստով միջկրոնական երկխոսությունը մաս է կազմում միջնաշակութային երկխոսությանը և հորդորել է կրոնական համայնքներին առավել՝ ակտիվ կերպով ներգրավվել բազմաշակութային Եվրոպայում մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության խորացմանն ուղղված ջանքերում: Միջկրոնական երկխոսությունը կարող է նաև նպաստել հասարակության ներսում ավելի լայն միաբանության ձևավորմանը սոցիալական խնդիրների լուծման հետ կապված հարցերում: Ավելին, այն Եվրոպայի Խորհուրդը երկխոսության անհրաժեշտություն է տեսնում հենց կրոնական համայնքների և փոխադարձական համոզմունքների ներսում (ներկրոնական և ներհամոզմունքային երկխոսություն), թեկուզև այն բանի համար, որպեսզի հնարավորություն տրվի

իշխանություններին՝ ազգային օրենսդրության շրջանակներում հաղորդակցվելու գաղափար կրողների ու դավանանքների լիազոր ներկայացուցիչների հետ:

4. Միջմշակութային երկխոսության քաղաքականության հինգ մոտեցումները

(76) Գոյություն ունեն միջմշակութային երկխոսության ընդլայնման միմյանցից տարրեր, սակայն փոխկապակցված հինգ մոտեցումներ, որոնք ընդգրկում են շահագրգիռ կողմերի ողջ սպեկտրը: Դա պայմանավորված է մշակութային բազմազանության ժողովրդավարական կառավարմամբ: Դա նաև պահանջում է մասնակցային գործընթացների և ժողովրդավարական քաղաքացիության ինստիտուտի առկայություն: Դրա համար անհրաժեշտ են միջմշակութային հաղորդակցության հմտություններ և երկխոսության բաց տարածություններ: Վերջապես, դա պետք է իրականացվի միջազգային մասշտաբով: Վերոհիշյալ 5 ուղղություններով նախաձեռնություններն արդեն փորձարկվել և քննություն են բռնել:¹⁴

4.1 Մշակութային բազմազանության ժողովրդավարական կառավարումը

4.1.1 Քաղաքական մշակույթն արժեվորող բազմազանություն

(77) Քաղաքական մշակույթի արժեվորման բազմազանության անկյունաքարն են հանդիսանում ժողովրդավարությունը, մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, օրենքի գերակայությունը, բազմակարծությունը, հանդուրժողականությունը, անխտրական վերաբարմունքը և փոխադարձ հարգանքը:

(78) Բազմազանության մշակույթը կարող է միայն զարգանալ այն դեպքում, եթե ժողովրդավարությունը հաշտեցման եզրեր գտնի մեծամասնական կառավարման և փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների միջև: Առանց բոլորի իրավունքների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու՝ փոքրամասնության նկատմամբ մեծամասնության կամքի պարտադրումն անհամատեղելի է Եվրոպայի սահմանադրական ժառանգության հիմքում ընկած սկզբունքների հետ: Միասնականությունն ու բազմազանությունը համադրելու հանձնառություն ունեցող եվրոպական հասարակությունը չի կարող առաջնորդվել «ամեն ինչ հաղթողին» սկզբունքով և պետք է քաղաքական դաշտը տոգորի հավասարության և փոխադարձ հարգանքի արժեքներով: Ժողովրդավարությունը չի նշանակում սոսկ, թե մեծամասնության կարծիքը պետք է գերակա լինի բոլոր դեպքերում. պետք է գտնել այնպիսի հավասարակշռություն, որը փոքրամասնության ներկայացուցիչների համար կապահովի արդար և պատշաճ վերաբերմունք բովանդակ հասարակության կողմից և կխուսափի գերիշխող դիրքի չարաշահումից:¹⁵

(79) Մշակութային բազմակարծությանը սատարող քաղաքական մշակույթի զարգացումը որոշակի ջանքեր է պահանջում: Այն ենթադրում է այնպիսի կրթական համակարգի ներդրում, որը կստեղծի քննադական մտածողությանը հարիր նորարարական կարողություններ, ինչպես նաև կկազմակերպի միջոցառումներ, որտեղ մարդիկ կունենան մասնակցելու և արտահայտվելու հնարավորություն: Իրավապահ մարմինների

¹⁴ Խորհրդակցությունների ժամանակ առաջարկված ճիշտ գործելակերպի օրինակների հավաքածուն կիրառարկվի ինտերնետում. www.coe.int/dialog.

¹⁵ Cf. *Leyla Sahin v. Turkey*, [GC]No. 44774/98, judgement of 10 November 2005 « 108. Տես նաև՝ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիա հոդված 6, որը պայմանավորվող կողմերին պարտավորեցնում է «խրախուսել հանդուրժողականության մթնոլորտն ու միջմշակութային երկխոսությունը և արդյունավետ միջոցներ ձեռնարկել ի շահ իրենց տարածքում ապրող բոլոր անձանց միջև փոխադարձ հարգանքի, փոխըմբռնման և համագործակցության զարգացման՝ անկախ նրանց ազգային, մշակութային, լեզվական կամ կրոնական ինքնությունից, մասնավորապես՝ կրթության, մշակույթի և լրատվության ոլորտներում»:

ներկայացուցիչները, քաղաքական գործիչները, ուսուցիչները, մասնագիտական մյուս խմբավորումներն ու քաղաքացիական հասարակության առաջնորդները պետք է սովորեն գործել մշակութային առումով բազմազան միջավայրերում: Մշակույթը պետք է շարժունակ լինի և բնութագրվի փորձարարությամբ: Չանգվածային լրատվության միջոցները կոչված են տարածելու օբյեկտիվ տեղեկատվություն և թարմ մտածելակերպ՝ ի հակադրություն կարծրատիպերի: Պետք է լինի նախաձեռնությունների և շահագրգիռ կողմերի բազմազանություն, որն ի մասնավորի կընդգրկի քաղաքական հասարակության բոլոր շերտերը:

4.1.2 Մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները

(80) Մարդու իրավունքները կարևոր նախադրյալ են ստեղծում միջմշակութային երկխոսության համար: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ամենաէական դրույթներից են մտքի և խոսքի ազատության, կրոնի ազատության, ժողովների, հավաքույթների և միավորումների ազատության, ինչպես նաև ընտանեկան ու անձնական կյանքի գաղտնիության իրավունքները: Կոնվենցիայով նախատեսվող իրավունքների իրականացումը պետք է ապահովվի առանց որևիցե խտրականության: Բացի այդ, կոնվենցիայի թիվ 12 արձանագրությունն համընդհանուր արգելք է սահմանում խտրականության վրա: Քաղաքացիական և քաղաքական իրավունքներից զատ, իրավունքների փաթեթը ներառում է նաև Եվրոպական սոցիալական խարտիայից բխող ընկերային իրավունքները, որոնց մեծ մասը վերաբերում է խոցելի խմբերին պատկանող անձանց խնդիրներին (աշխատանքի մատչելիություն, կրթություն, սոցիալական պաշտպանություն, առողջապահություն և բնակարանային ապահովություն),¹⁶ ինչպես նաև զանազան խարտիաներում և կոնվենցիաներում, ինչպես ասենք՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային համաձայնագրում (1966թ.) նշված մշակութային իրավունքները:

(81) Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորվող խոսքի ազատությունն անհրաժեշտ պայման է հանդիսանում միջմշակութային երկխոսությանը մասնակցության համար: Այս ազատության իրականացումը, որը ենթադրում է որոշակի պարտականություններ և պարտավորություններ, կարող է սահմանափակվել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված մի շարք պայմաններով: «Ատելության սերմանումը» վերջին տարիներին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մտահոգության առարկան է եղել: Առաջնորդվելով «դեպք առ դեպք» սկզբունքով, դատարանն ուրվագծել է այն սահմանը, որից անդին խոսքի ազատության իրավունքը ենթակա է սահմանափակման:

(82) Որոշ արտահայտություններ այն աստիճան նսեմացուցիչ, ագրեսիվ և վիրավորական են, որ ոտնահարում են հանդուրժողականության սկզբունքը: Դրանք ոչ միայն անպատվաբեր են փոքրամասնական համայնքների ներկայացուցիչների համար, այլև կարող են սպառնալիքներ պարունակել և ահաբեկել վերջիններիս: Անհանդուրժողականության հողի վրա ատելության հրահրումն անհամատեղելի է կոնվենցիայով և դատարանի գործունեությամբ պահանջվող հիմնարար ազատությունների և իրավունքների հարգանքի հետ:

¹⁶ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն, որի խնդիրն է քննարկել ազգային զեկույցներն ու որոշել, թե արդյո՞ք այս կամ այն երկրում իրավիճակը համապատասխանում է Եվրոպական սոցիալական խարտիայի դրույթներին, բազմիցս հատուկ ուշադրություն է հրավիրել օտարերկրյա աշխատողների, ներգաղթյալների և ազգային փոքրամասնությունների իրավունքների վրա: Cf. European Social Charter, European Committee of Social Rights: Conclusions XVIII-1, Volume 1, Strasbourg 2006, pp. 59, 102, 212, 261, 293.

(83) Մարդու իրավունքների եվրոպական դատարանն այդուհանդերձ բարձր է պահում խոսքի ազատության սահմանափակումների նշածողը՝ նշելով, որ անգամ «վիրավորական, տհաճ և ինքնասիրությունը խոցող» արտահայտությունները պետք է պաշտպանվեն:¹⁷ Սա նշանակում է, օրինակ, ուրիշի կրոնը քննադատելու որոշակի արտոնություն (որպես նրանց կողմից ընտրված գաղափարների համակարգ): Դատարանը հաշվի է առնում արտահայտությունների ենթատեքստն ու միտումը, մասնավորապես, թե որքանով են դրանք նպաստում ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ բազմակարծությամբ պայմանավորված հասարակական քննարկումներն ծավալմանը:

(84) Ինչ վերաբերում է զանգվածային լրատվության միջոցներին, ապա դրանց գործունեության հիմքում պետք է ընկած լինի խոսքի ազատության պաշտպանությունը, չնայած որ հատուկ պարտականություններ ու պարտավորություններ են նախատեսվում նաև լրագրողների համար, որոնք պետք է ազատորեն արտահայտեն իրենց կարծիքն ու դատողություններն անեն հասարակական լայն հնչեղություն ունեցող հարցերի վերաբերյալ, բայց նաև պետք է պատասխանատվություն կրեն օբյեկտիվ տեղեկատվության հավաքման և տարածման համար: Հաշվի առնելով հանրության իրազեկման գործում լրատվության ոլորտի մասնագետների կարևոր դերակատարությունը, ինչպես նաև հանդուրժողականության և փոխըմբռնման մշակույթի խթանման նպատակով՝ հարկավոր է բարձրացնել նրանց իրազեկության մակարդակը միջմշակութային երկխոսության, ինչպես նաև ազգային, մշակութային, կրոնական և լեզվական սահմաններ չճանաչող համագործակցության անհրաժեշտության վերաբերյալ:

4.1.3 Հավասար հնարավորություններից դեպի հավասար իրավունքներ

(85) Սոցիալական համախմբվածության վերանայված ռազմավարության մեջ վկայակոչվող «եվրոպական սոցիալական մոդելը» նպատակ ունի ապահովել կենսական հնարավորությունների հավասարություն: Շատ հաճախ հենց նրանք ամենաքիչ կարելիություններն ունեն ապահովելու իրենց իրավունքների պաշտպանությանը, ում դա առավել շատ է անհրաժեշտ: Իրավունքների իրավական պաշտպանությունը պետք է ուղեկցվի համապատասխան սոցիալական քաղաքականությամբ՝ ուղղված գործնականում յուրաքանչյուրի իրավունքների պաշտպանության մատչելիության ապահովմանը: Օրինակ, Եվրոպական սոցիալական խարտիան և Արտագնա աշխատողների իրավական կարգավիճակի մասին եվրոպական կոնվենցիան անդամ պետություններից պահանջում են պարտավորություն ստանձնել առ այն, որ իրենց տարածքում օրինականորեն բնակվող արտագնա աշխատողների ու նրանց ընտանիքների անդամների նկատմամբ սոցիալ-տնտեսական ոլորտում կցուցաբերվի ոչ պակաս բարեհաճ վերաբերմունք, քան իրենց իսկ քաղաքացիների նկատմամբ:

(86) Ի լրումն խտրականության բացառման սկզբունքի՝ պետություններին կոչ է արվում նաև արդյունավետ միջոցներ ձեռնարկել խտրականությամբ պայմանավորված այնպիսի անհավասարությունների վերացման ուղղությամբ, որոնք նախևառաջ հարվածում են անպաշտպան խմբերին: Հանրային ոլորտում պետական կառավարման մարմինները պետք է խստորեն հետևեն խտրականության արգելքի պահպանմանն ու մշակութային և կրոնական հարցերում չեզոքության դրսևորմանը: Այնուամենայնիվ, սուկ ձևական հավասարությունը բավարար չէ, իսկ իրական հավասարության խթանումը շատ դեպքերում կարող է պահանջել խտրականության բացառման սկզբունքի հետ համատեղելի հստակ քայլերի ձեռնարկում: Երբեմն, անհավասարության այս կամ այն դեպքը քննելիս, առանց լուրջ կամ առարկայական հիմնավորման տարբերակված մոտեցում չցուցաբերելը կարող է հանգեցնել խտրականության:¹⁸

¹⁷ *Handyside v. United Kingdom*, judgement of 7 December 1976, Series A no. 24, « 49.

¹⁸ *D.H. and others v. The Czech Republic*, judgement of 13 November 2007 (Grand Chamber): «Դատարանը նաև ընդունեց, որ այս կամ այն խմբի վրա անհամաչափորեն վնասակար ազդեցություն ունեցած ընդհանուր

(87) Բազմազանության հետ համատեղելիության նպատակով կարող է անհրաժեշտություն ծագել որոշ սահմանափակումներով գործնական միջոցների ձեռնարկման համար:¹⁹ Այդ միջոցները կիրառելիս պետք է խուսափել այլոց իրավունքների ոտնահարումից կամ անհարկի կազմակերպչական դժվարություններից ու ավելորդ ծախսերից:

քաղաքականությունը կամ միջոցառումը կարող է ճանաչվել որպես խտրական, նույնիսկ եթե այն հասցեագրված չի եղել այդ խմբին... և որ կոնվենցիային հակասող խտրականությունը կարող է բխել de facto իրավիճակից» (« 175).

¹⁹ Cf. Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիա (1995), հոդված 4 § 2 և 3, ինչպես նաև զեկուցագրի հարակից կետերը: *D.H. and others v. The Czech Republic*, judgement of 13 November 2007 (Grand Chamber). Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն նշում է, որ «ժողովրդավարական հասարակության մեջ մարդկանց տարբերությունը պետք է միանշանակ շընկալվի և պետք է ստանա տարբերակված մոտեցում՝ իրական և արդյունավետ հավասարություն ապահովելու համար» (*Autism France v. France*, հայց No. 13/2002, արժանիքների մասին որոշում, 4 նոյեմբերի, 2003 թ., § 52:

4.2 Ժողովրդավարական քաղաքացիություն և մասնակցություն

(88) Քաղաքացիությունն ամենալայն իմաստով իրավունք և պատասխանատվություն է՝ ուրիշների հետ միասին մասնակցելու համայնքի մշակութային և սոցիալ-տնտեսական կյանքին, ինչպես նաև հասարակական-քաղաքական գործընթացներին:²⁰ Այն միջմշակութային երկխոսության բանալին է, քանի որ հորդորում է մեզ մտածել ուրիշների մասին ոչ թե կարծրատիպերի միջոցով («ուրիշները»), այլ որպես մեր հավասարը և համաքաղաքացին: Քաղաքացիության մատչելիության ապահովումը կրթական, օրենսդրական և իրավական խնդիր է: Քաղաքացիությունը բարձրացնում է մարդկանց հասարակական ակտիվությունը՝ նպաստելով նորեկների բերած նոր արժեքի յուրացմանը, ինչն էլ իր հերթին ամրապնդում է սոցիալական համայնքավածությունը:

(89) Տեղական համայնքի կյանքին բոլոր բնակիչների ակտիվ մասնակցությունը նպաստում է համայնքի բարեկեցությանն ու անդամների ինտեգրացիային: Քաղաքի կամ շրջանի համապատասխան մարմինների կողմից օրինական գրանցում ստացած օտարերկրացիների՝ տեղական կամ շրջանային ընտրություններին մասնակցելու իրավունքը մասնակցային գործընթացների խորացման ձևերից մեկն է:

(90) Ազգության մասին եվրոպական կոնվենցիան (1997) ստորագրած երկրները պարտավոր են հպատակագրել իրենց տարածքում օրինականորեն և երկար ժամանակ բնակվող անձանց՝ առավելագույնս 10 տարվա ժամկետ սահմանելով քաղաքացիության մասին դիմում ներկայացնելու համար: Ըստ որում, նրանք կարող են և չիրաժարվել իրենց մայր երկրի քաղաքացիությունից: Օտարերկրյա երեխաների կողմից այն երկրի քաղաքացիության ձեռքբերումը, որտեղ նրանք ծնվել և բնակվում են, կարող է էապես խթանել ինտեգրացիոն գործընթացները:

(91) Նախարարների կոմիտեն մտահոգություն հայտնեց օրեցօր աճող քաղաքական ու քաղաքացիական կրավորականության, ժողովրդավարական հաստատությունների նկատմամբ վստահության պակասի, ինչպես նաև ռասիզմի և այլատյացության հարածուն մակարդակի կապակցությամբ: Նշվում է նաև, որ Եվրոպայում նկատելի են խառը միտումներ: Մի շարք անդամ պետությունների հասարակական կազմակերպություններում նկատվող սոցիալական վստահության և մասնակցության բարձր մակարդակը բացատրվեց դրանցում կառավարման ժողովրդավարական համակարգի առկայությամբ, որտեղ օրենքի գերակայությամբ առաջնորդվող անկողմնակալ պետական իշխանությունները խրախուսում են մասնակցային գործընթացները: Սոցիալական վստահության ամրապնդման և մասամբ անտեսված փոքրամասնական համայնքների անդամների հասարակական ակտիվության խթանման միջոցով միջմշակութային երկխոսությունը կարող է քաղաքացու համար առավել իմաստալից դարձնել ժողովրդավարությունը:

(92) Այս առումով չափազանց կարևոր դերակատարություն կարող են ունենալ տեղական ու շրջանային իշխանությունները: Տեղական մակարդակում հասարակական կյանքին օտարերկրացիների մասնակցության մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան կոչ է անում ընդլայնել այդպիսի մասնակցությունը: Հարկավոր է հոգ տանել, որպեսզի երկխոսության կողմ չընտրվեն լոկ փոքրամասնությունների առաջին սերնդի արական սեռի ներկայացուցիչները: Անհրաժեշտ է ընդունել փոքրամասնական համայնքների ներսում բազմազանության և ընկերային հարաբերությունների պահպանման կարևորությունը՝ մասնավորապես ներգրավելով երիտասարդներին:

²⁰ Cf. Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիա (1995), հոդված 15:

4.3 Միջմշակութային հաղորդակցության հնտությունների յուրացումն ու ուսուցումը

(93) Միջմշակութային երկխոսության համար անհրաժեշտ հնտությունները չեն կարող ձեռք բերվել ինքնաբերաբար. դրանք պետք է սովորել, գործածել և պահպանել ամբողջ կյանքի ընթացքում: Պետական կառավարման մարմինները, կրթության ոլորտի մասնագետները, ոչ-կառավարական կազմակերպությունները, կրոնական համայնքները, զանգվածային լրատվության միջոցներն ու այն բոլոր սուբյեկտները, որոնք գործում են տարբեր կրթական միջավայրերում և մակարդակներում, կարող են լուրջ դերակատարություն ունենալ Եվրոպայի Խորհրդի նպատակների և հիմնական արժեքների մարմնավորման ու միջմշակութային երկխոսության խորացման գործում: Կարևոր է նաև այս ոլորտում գործող տարբեր հաստատությունների, մասնավորապես՝ ԵՄ-ի, ՅՈՒՆԵՍԿՈ-յի, ԱԼԳՄԿ-ի և այլ գործընկերների միջև համագործակցությունը:

4.3.1 Հիմնական ոլորտները. ժողովրդավարական քաղաքացիություն, լեզու, պատմություն

(94) Ժողովրդավարական քաղաքացիության ուսուցումը հիմնարար նշանակություն ունի ազատ, հանդուրժողական, արդար, բաց և ներառական հասարակության ձևավորման, սոցիալական համախմբվածության, փոխըմբռնման, միջմշակութային և միջկրոնական երկխոսության ու հաշտության, ինչպես նաև կանանց և տղամարդկանց իրավահավասարության համար: Այն ընդգրկում է պաշտոնապես գրանցված և չգրանցված, ինչպես նաև ոչ-պաշտոնական կրթական ամբողջ գործունեությունը, ներառյալ մասնագիտական ուսուցումը, ընտանիքն ու խնդրո առարկա այն համայնքները, որոնք անհատին թույլ են տալիս հանդես գալ որպես ուրիշների նկատմամբ հարգանքի զգացում ունեցող ակտիվ և պատասխանատու քաղաքացի: Ժողովրդավարական քաղաքացիության ուսուցումը ենթադրում է, ի միջի այլոց, քաղաքացիական, պատմական, քաղաքական և մարդու իրավունքների ուսուցում, ինչպես նաև համամոլորակային մասշտաբով հասարակությունների կացության և մշակութային ժառանգության ուսուցում: Այն խրախուսում է բազմակողմանի մոտեցումները և միավորում է գիտելիքի, հնտությունների և սկզբունքային մոտեցումների, մասնավորապես՝ բազմամշակույթ հասարակություններում ապրելու համար անհրաժեշտ դատողությունների կատարման և ինքնաքննադատության ունակությունների ձեռքբերում:

(95) Լեզուն հաճախ արգելք է հանդիսանում միջմշակութային երկխոսության համար: Միջմշակութային մոտեցումն ընդունում է փոքրամասնական համայնքների կողմից օգտագործվող լեզուների նշանակությունը՝ միևնույն ժամանակ կարևորելով ազգային փոքրամասնությունների կողմից տվյալ պետության մեջ գերիշխող լեզվի յուրացման անհրաժեշտությունը, ինչը նրանց թույլ կտա դառնալ լիարժեք քաղաքացիներ: Այսպիսի մոտեցումը համահունչ է Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիային, որտեղ նշվում է, որ քիչ օգտագործվող լեզուներն ունեն պաշտպանության կարիք, քանի որ դրանք հարստացնում են Եվրոպայի մշակութային ժառանգությունը, ուստի այդ լեզուների օգտագործումը հանդիսանում է կրող համայնքերի անօտարելի իրավունքը: Միևնույն ժամանակ, ընգծվում է բազմալեզու միջավայրի կարևորությունը և նշվում, որ այս կամա այն պետության մեջ փոքրամասնության լեզվի կարգավիճակ ունեցող բարբառների պաշտպանությունը չի կարող կատարվել ի հաշիվ այդ երկրներում ընդունված պաշտոնական լեզուների: Այսպիսով, հարկավոր է սովորել հյուրնկալող երկրի պաշտոնական լեզուն: Լեզուների յուրացումն օգնում է խուսափել այլազգիների նկատմամբ կարծրատիպային մոտեցումներից, հետաքրքրասիրություն սերմանել և բաց լինել «ուրիշների» հանդեպ, բացահայտել նոր մշակույթներ: Լեզուների տիրապետումն օգնում է մարդկանց ըմբռնել, որ տարբեր սոցիալական և մշակութային

ինքնություն ունեցող անհատների հետ շփումը կարող է հարստացնել իրենց կենսական փորձառությունը:

(96) 21-րդ դարի Եվրոպայում պատմության ուսուցման մասին նախարարների կոմիտեի հանձնարարականի մեջ (2001թ.)²¹ ընդգծվում է երկխոսության, պատմական ճշմարտության որոնումների և բազմակողմանի ու բաց քննարկումների միջոցով, հատկապես՝ հակասական ու հրատապ հարցերի վերաբերյալ աշակերտների մոտ տեղեկատվությունը քննադատաբար վերլուծելու և մեկնաբանելու ունակությունների զարգացման անհրաժեշտությունը: Պատմության ուսուցումն էական նշանակություն ունի հրեաների ողջակիզման, ցեղասպանությունների և մարդկության դեմ ուղղված այլ ոճրագործությունների՝ ազգային մաքրագոտումների, մարդու իրավունքների զանգվածային ոտնահարումների կրկնությունը կամ ժխտումը բացառելու, անցյալի վերբերը փարատելու և Եվրոպայի Խորհրդի հռչակած հիմնարար արժեքները արմատավորելու առումով: Այն վճռորոշ գործոն է հանդիսանում ժողովուրդների միջև հաշտության, փոխըմբռնման, փոխադարձ ճանաչման և վստահության հաստատման համար: Ժողովրդավարական Եվրոպայում պատմության ուսուցումը կենսականորեն կարևոր տեղ պետք է զբաղեցնի պատասխանատու և ակտիվ քաղաքացիների դաստիարակման, ինչպես նաև ազգային ինքնության ընկալման և հանդուրժողականության սկզբունքների հիման վրա զանազան տարբերությունների նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորման համատեքստում: Պատմության ուսուցումը չի կարող լինել գաղափարական շահարկումների և քարոզչության գործիք կամ էլ օգտագործվել անհանդուրժողականություն ու այլատյացություն սերմանող, ծայրահեղ ազգայնական, ռասիստական կամ հակասեմիտական հայացքների տարածման համար: Պատմական հետազոտություններն ու պատմությունը, այնպես ինչպես դրանք ուսուցանվում են դպրոցում, ոչ մի դեպքում և որևիցե մտադրությամբ չեն կարող համատեղելի լինել Եվրոպայի Խորհրդի արժեքային համակարգի և կանոնադրության հետ, եթե դրանք թույլ են տալիս պատմության խեղաթյուրում կամ շահարկում: Պատմության ուսուցումը պետք է միտված լինի նախապաշարմունքների ու կարծրատիպերի թոթափմանը՝ կարևորելով և ամփոփելով Եվրոպայի պատմական զարգացման ժամանակահատվածում տարբեր երկրների, կրոնների ու գաղափարական դպրոցների միջև տեղի ունեցած դրական փոխազդեցությունները, ինչպես նաև քննադատաբար ուսումնասիրելով պատմության շահարկումները, որոնք կարող են պայմանավորված լինել պատմական փաստերի ժխտմամբ, նենգափոխմամբ, անտեսմամբ, անգիտությամբ կամ էլ իշխող վարչախմբի գաղափարաբանական նպատակներին դրանց հարմարեցմամբ:

4.3.2 Տարրական և միջնակարգ կրթություն

(97) Բազմաշակույթ Եվրոպայում կրթությունը ոչ միայն ենթադրում է նախապատրաստություն աշխատանքի շուկայի համար, անհատական զարգացում և գիտելիքների ընդհանուր բազա: Դպրոցները նաև կարևոր դարբնոց են երիտասարդներին կենսական հմտություններ փոխանցելու և նրանցից ակտիվ քաղաքացիներ պատրաստելու համար: Դպրոցները պատասխանատու են հասարակական կյանքում անհրաժեշտ տարատեսակ հմտությունների ու մոտեցումների ձեռքբերման ռազմավարության մշակման, համապատասխան դիրքորոշման ձևավորման հարցերում երիտասարդներին առաջնորդելու և աջակցելու համար: Դրանք պետք է աճող սերնդին օգնեն հասկանալ և ձեռք բերել ժողովրդավարական կենսակերպի հիմքում ընկած արժեքները՝ ներմուծելով մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի գաղափարը, որպես բազմազանության կառավարման և ուրիշ մշակույթների նկատմամբ ընկալունակության հիմնարար սկզբունք:

²¹ Հանձնարարականներ. Rec(2001)15

(98) Պաշտոնական ուսումնական ծրագրի շրջանակներում բոլոր առարկաները պետք է գետեղված լինեն միջմշակութային հարթության մեջ: Պատմությունը, լեզվական կրթությունը, կրոնական ու դավանանքային եղելությունների ուսուցումը թերևս ամենակարևորներն են այդ առումով:²² Միջմշակութային համատեքստում կրոնական ու դավանանքային եղելությունների ուսուցումը գիտելիքներ է տալիս բովանդակ աշխարհի կրոնների, հավատալիքների և դրանց պատմության մասին՝ օգնելով անհատին ծանոթանալ աշխարհի կրոններին ու դավանանքներին և խուսափել նախապաշարմունքներից: Այս մոտեցումն են որդեգրել Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ու Ռ-ասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովը:²³ 2007 թ. եվրոպական կրթության նախարարներն ընդգծեցին դպրոցական կրթության օգնությամբ՝ բարոյականության և ժողովրդավարական քաղաքացիության սկզբունքների հիման վրա մշակութային և/կամ կրոնական համայնքների միջև փոխըմբռնման բարելավմանն ուղղված միջոցառումների կարևորությունը: Գերիշխող դիրք ունեցող կրոնական կրթության համակարգից անկախ, հանրակրթությունը պետք է հաշվի նստի կրոնական ու համոզմունքային բազմազանության հետ:²⁴

4.3.3 Բարձրագույն կրթություն և գիտություն

(99) Որպես հասարակական գործոն և միջմշակութային երկխոսության օջախ, բարձրագույն ուսումնական հաստատություններն իրենց ուսումնական ծրագրերի միջոցով կարող են լուրջ դերակատարություն ունենալ միջմշակութային երկխոսության խթանման գործում: Բարձրագույն կրթության և գիտության ղեկավար կոմիտեի դիպուկ բնորոշմամբ՝ համալսարանների առանձնահատկությունն իրենց լայն ընդգրկումն ու լուսավորության դարաշրջանի արժեքներից բխող ընկալունակությունն է արտաքին աշխարհի նկատմամբ: Այսպիսով, համալսարաններն ունեն «միջմշակութային մտավորականներ» ծնելու մեծ ներուժ. մտավորականներ, որոնք կարող են լուրջ դերակատարություն ունենալ հասարակական կյանքում:

(100) «Սովորել միասին ապրելու» սկզբունքի և մշակութային բազմազանության զանազան կողմերը բացահայտելու նպատակով՝ այս գործընթացը պետք է երկրորդվի միջմշակութային ուսուցմանն առնչվող գիտահետազոտական աշխատանքների իրականացմամբ:

4.3.4 Ոչ-պաշտոնական և այլընտրանքային ուսուցում

(101) Էական նշանակություն ունի նաև դպրոցներից և համալսարաններից դուրս ընթացող ոչ-պաշտոնական ուսուցումը, մասնավորապես՝ երիտասարդական աշխատանքների և կամավորական ու քաղաքացիական ծառայությունների ոլորտում: Եվրոպայի Խորհուրդը հորդորում է անդամ պետություններին՝ խթանել ոչ-պաշտոնական

²² Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտեն իր վերջերս հրատարակած «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի համաձայն կրթություն իրականացնելու վերաբերյալ» դիտողություններում (ընդունված 2006 թ. մարտին) ընդգծում էր, որ անհրաժեշտ է նկատի առնել կրթության մասին դրույթները «միջմշակութային կրթության ոլորտի բոլոր ծրագրերում և գործողություններում, քանի որ նրա նպատակը միևնույն հասարակության մեջ ապրող խմբերի միջև փոխըմբռնումը, շփումներն ու փոխգործակցությունը խթանելն է»:

²³ Տես՝ Խորհրդարանական վեհաժողովի՝ կրթության և կրոնի մասին թիվ 1720 հանձնարարականը (2005թ.), *Kjeldsen, Busk Madsen and Pedersen v. Denmark*, 5095/71; 5920/72; 5926/72, 7 December 1976, « 53; *Folgero and Others v. Norway*[GC], no. 15472/02, 29 June 2007, « 84; ECRİ General Policy Recommendation N° 10 on combating racism and racial discrimination in and through school education, 2006, « II. 2. b.

²⁴ Տես՝ Կրթության համար պատասխանատու եվրոպական նախարարների մշտական համաժողովի 22-րդ նիստի եզրափակիչ հայտարարությունը. Ստամբուլ, Թուրքիա, 4-5 մայիսի, 2007թ. (Առավել մարդկային ու ներառական Եվրոպայի կառուցումը՝ կրթական քաղաքականության դերը):

ուսուցումը և սատարել երիտասարդների հանձնառությունն ու մասնակցությունը միջմշակութային երկխոսության արժեքային համակարգում:

(102) Ինչպես կրոնական համայնքները, այնպես էլ երիտասարդական ու մարզական կազմակերպությունները հատկապես լավ նախադրյալներ ունեն ոչ-պաշտոնական կրթական համատեքստում միջմշակութային երկխոսության ջատագովման համար: Ընտանիքի, դպրոցի և աշխատանքային կոլեկտիվների հետ մեկտեղ, երիտասարդական խմբերն ու համայնքային կենտրոնները կարող են ծառայել որպես սոցիալական համախմբվածության հենասյուներ: Բազմաբնույթ ծրագրերի, ինչպես նաև հրապարակայնության ու կամավորության հիմունքներով իրականացվող տարատեսակ միջոցառումների և իրենց շարքային անդամների հանձնառության շնորհիվ այս կազմակերպությունները հաճախ ավելի մեծ հաջողություններ են արձանագրում փոքրամասնական խմբերի ներկայացուցիչների ակտիվ մասնակցության և երկխոսության հնարավորությունների ստեղծման գործում: Քաղաքացիական հասարակության խմբերն ու ոչ-կառավարական կազմակերպությունները բազմակարծության վրա հիմնված ժողովրդավարության անհրաժեշտ տարրերից են և ծանրակշիռ ավանդ ունեն մարդու իրավունքների և գենդերային հավասարության դաշտում հասարակական կյանքին ակտիվ մասնակցության և պատասխանատու ժողովրդավարական քաղաքացիության ապահովման գործում: Ուստի, ներգաղթյալներին միավորող կազմակերպությունները պետք է հնարավորություն ու միջոցներ ստանան փոքրամասնական համայնքների անդամների, հատկապես՝ երիտասարդների համար կամավորական բնույթի ծառայություններ զարգացնելու նպատակով, որպեսզի բարելավվեն վերջիններիս կարելիություններն աշխատանքի շուկայում և հասարակական կյանքում:

(103) Մամուլն ու հեռահաղորդակցության ոլորտի նոր ծառայությունները, որոնք այլ մշակույթների հետ շփվելու լայն հնարավորություններ են ստեղծում, նույնպես կարող են նպաստել այլընտրանքային ուսուցման զարգացմանը:

4.3.5 Ուսուցիչների դերը

(104) Բոլոր մակարդակների ուսուցիչները կարևոր դերակատարություն ունեն միջմշակութային երկխոսության խթանման և զավիթ սերունդներին երկխոսության նախապատրաստելու առումով: Իրենց հանձնառության շնորհիվ, ինչպես նաև ուսուցանվող նյութի վերաբերյալ գործնական պարապմունքներ կազմակերպելով՝ ուսուցիչները կարող են օրինակ ծառայել իրենց աշակերտների և ուսանողների համար:

(105) Մանկավարժական ծրագրերը պետք է կենտրոնանան այնպիսի ուսուցողական ռազմավարությունների և աշխատանքային մեթոդների վրա, որոնք ուսուցիչներին թույլ կտան կառավարել բազմազանությամբ, խտրականությամբ, ռասիզմով, այլատյացությամբ, գենդերային անհավասարությամբ և հասարակական մեկուսացումով պայմանավորված իրավիճակներն ու առկա հակամարտությունները լուծել խաղաղ ճանապարհով, ինչպես նաև առաջնորդվելով ժողովրդավարության և մարդու իրավունքների գերակայությամբ՝ ձևավորել համամոլորակային մոտեցումներ ինստիտուցիոնալ կենսակերպի նկատմամբ և ստեղծել ուսանողական համայնքներ՝ հաշվի առնելով նրանց անձնական նախապաշարմունքները, դպրոցական միջավայրն ու կրթության այլընտրանքային դրսևորումները:

(106) Առաջնորդվելով ժողովրդավարական քաղաքացիության ուսուցման հեռանկարով՝ մանկավարժական հաստատությունները ևս պետք է մշակեն որակի ապահովման համապատասխան մեխանիզմներ՝ հաշվի առնելով միջմշակութային ոլորտը, ինչպես նաև պետք է ստեղծեն ինքնագնահատման և կրթական հաստատությունների համար ինքնաբավ զարգացման չափորոշիչներ ու գործիքներ: Նրանք պետք է զարգացնեն

միջնակութային կրթությունն ու բազմազանության կառավարումը ծառայության հետ միաժամանակ իրականացվող ուսուցման ընթացքում:

(107) Եվրոպայի Խորհրդի հետ համատեղ, Օսլոյում գործող Ժողովրդավարական քաղաքացիության և միջնակութային կրթության եվրոպական կենտրոնը հետամուտ է փոխըմբռնմանն ու միմյանց մասին գիտելիքների շրջանակի ընդլայնմանը, որպեսզի մանկավարժության օգնությամբ ամրապնդվի փոխադարձ վստահությունն ու կանխարգելվեն հակամարտությունները:

4.3.6 Ընտանեկան միջավայրը

(108) Ծնողներն ու մտերիմների առավել լայն շրջանակն էական դեր են կատարում մշակութային տեսանկյունից բազմազան միջավայրում ապրելու համար երիտասարդներին նախապատրաստելու գործում: Որպես կենդանի օրինակ իրենց երեխաների համար՝ նրանք պետք է լիարժեքորեն ներգրավված լինեն երիտասարդների մտայնության և ընկալումների վերադաստիարակման գործընթացներում: Մեծահասակների ու ընտանիքների համար նախատեսված՝ մշակութային բազմազանությանը վերաբերող կրթական ծրագրերը կարող են և պետք է օգնեն ընտանիքին իրականացնել նման առաքելություն:

4.4 Տարածքներ միջմշակութային երկխոսության համար

(109) Կարևոր է ստեղծել բոլորի համար բաց տարածքներ երկխոսության համար: Բոլոր մակարդակներում միջմշակութային կառավարման հաջողությունը մեծապես պայմանավորված է այդպիսի տարածքների առկայությամբ: Դրանք ֆիզիկական տարածքներ են, ինչպես ասենք՝ փողոցները, առևտրի կենտրոնները, խանութները, բնակելի շենքերը, մանկապարտեզները, դպրոցներն ու համալսարանները, մշակութային օջախները, սոցիալական կենտրոնները, երիտասարդական ակումբները, եկեղեցիները, սինագոգներն ու մզկիթները, կորպորատիվ նիստերի դահլիճները, աշխատանքի վայրերը, քանգարանները, գրադարաններն ու ժամանցի մյուս վայրերը, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների պես վիրտուալ տարածքները:

(110) Քաղաքաշինությունը դրա ակնբախ օրինակն է: Քաղաքաշինական տարածքը կարող է կազմակերպվել «միակողմանի» մոտեցմամբ կամ «ավելի բաց» եղանակով: Առաջինը ներառում է պայմանական արվարձանը, բնակելի ֆոնդը, արդյունաբերական գոտին, ավտոկայանատեղիներն ու օդակածև ճանապարհը: Վերջինս ընդգրկում է ծանրաբեռնված հրապարակը, զբոսայգին, բանուկ փողոցները, մայթերի սրճարաններն ու շուկան: Եթե միակողմանի տարածքները նպաստում են այսպես կոչված ատոմային գոյությանը, ապա բաց տարածքները կարող են ի մի բերել հասարակության տարբեր շերտերին՝ նրանցում սերմանելով հանդուրժողականության զգացում: Չափազանց կարևոր է, որպեսզի ներգաղթած ազգաբնակչությունը, ինչպես որ հաճախ է պատահում, իրեն չզգա կենտրոնացված անհոգի և անդեմ բնակելի քաղամասերում՝ քաղաքային կյանքից հեռու և մի տեսակ օտարված:

(111) Մշակութային գործունեությունը կարող է գիտելիքներ մատուցել մշակութային բազմազան դրսևորումների մասին և այդպիսով նպաստել հանդուրժողականության, փոխըմբռնման և փոխադարձ հարգանքի մթնոլորտի ձևավորմանը: Մշակութային ստեղծագործունեությունը լուրջ նախադրյալներ է ստեղծում ուրշների նկատմամբ հարգանքի արմատավորման համար: Արվեստները նաև հանդիսանում են հակասականության և խոհրդանշական քախումների խառնարան՝ հող նախապատրաստելով անհատի դրսևորման, ինքնաքննադատական մոտեցման և միջնորդավորված դատողությունների համար: Այդպիսով նրանք խախտում են ընդունված կարծրատիպային սահմանները՝ անմիջական հաղորդակցության մեջ մտնելով մարդկանց ներաշխարհի հետ: Մշակութային գործունեությամբ զբաղվող քաղաքացիներն արարում են նոր տարածքներ և կարելիություններ երկխոսության համար:

(112) Նկատի առնելով մարդկային բնության ընդհանրության մասին դրույթը՝ թանգարաններն ու մշակութային ժառանգության մյուս շտեմարաններն օգնում են մեզ կասկածի տակ առնել այս կամ այն էթնիկ խմբի կամ ազգային հանրույթի անդամների պատմական գերիշխանությունը փաստող կանխակալ տեսակետները՝ հիմք դնելով տարբեր նախապատմություն ունեցող անձանց կողմից փոխադարձ ճանաչման համար:

Եվրոպայի մշակութային ժառանգության ուսումնասիրությունը կարող է նպաստել մեր օրերում այլևս անհրաժեշտություն դարձած եվրոպական բազմաքաղաքացիության հայեցակերպի յուրացմանը: Եվրոպայի Խորհրդի ջանքերով այսօր որպես մշակութային զարկերակների ցանց վերստին դիտվող Եվրոպայի պատմական անդրսահմանային և մայրցամաքային ուղիները դարեր շարունակ դրական ազդեցություն են մշակութային հարաբերությունների պատմության վրա՝ նպաստելով միջմշակութային շփումներին: Դրանց շնորհիվ այսօր մենք կարող ենք մատչել Եվրոպայի բազմամշակույթ ժառանգությանն ու գիտակցել, որ կարելի է ապրել միասին ներդաշնակ բազմազանության պայմաններում:

(113) Մանկապարտեզները, դպրոցները, երիտասարդական ակումբներն ու երիտասարդական միջոցառումներն այն հիմնական վայրերն են, որտեղ կարելի է ձեռք բերել միջմշակութային գիտելիքներ և հաստատել երկխոսություն: Որպեսզի ասվածը լինի ճիշտ, անհրաժեշտ է դեռահասներին ու երիտասարդներին հնարավորություն տալ հանդիպելու և ծանոթանալու տարբեր նախապատմություն ունեցող իրենց հասակակիցների հետ՝ մեկնելու հետ հաղորդակցվելու և համատեղ միջոցառումներ իրականացնելու համար: Որքան ավելի շատ ինտեգրացված լինեն հանդիպման այս վայրերը, այնքան առավել արդյունավետ նրանք կլինեն միջմշակութային ճանաչողության առումով:

(114) Չանգվածային լրատվության միջոցները կարևոր տարածք են անուղղակի երկխոսության համար: Դրանք արտահայտում են հասարակության մշակութային բազմազանությունը՝ մշակույթներին հաղորդելով որոշակի ենթատեքստ և կարող են ընթերցողների, ակնդիրների կամ ունկնդիրների համար ծառայել որպես յուրատեսակ հարթակ՝ իրենց համար անսովոր տեսանկյունից իրերին հայելու համար: Այս անելիս նրանք պետք է հետևեն, որ իրենց իսկ խոսքը չլինի միօրինակ և պետք է պատրաստ լինեն մոտեցումների բազմազանության: Կապի և հաղորդակցության նոր միջոցներն ավանդաբար կրավորական կեցվածք որդեգրած լսարանին թույլ են տալիս մասնակցել միջնորդավորված բնույթի միջմշակութային երկխոսությանը, մասնավորապես, զանազան ընկերային ցանցերի, ինտերնետային քննարկումների և «wiki» տիպի համագործակցության օգնությամբ:

(115) Համամոլորակային լրատվամիջոցներն առաջարկում են ապշեցուցիչ թվով ինքնության օրինակներ: Այսպիսի խառնիճաղանջության պարագայում «ուրիշի» նկատմամբ պարզունակ կարծատիպի կիրառումը կարող է գաթակղիչ թվալ, քանի որ դրանից հետո ավելի դյուրին կլինի նրան վերագրել աշխարհի հայտնի ու անհայտ բոլոր մեղքերը: Բազմազանության ժողովրդավարական կառավարումը նուրբ աշխատանք է: Չի կարելի թույլ տալ, որպեսզի երկխոսությանը զսպաշապիկ հագցնեն կամ էլ այն օգտագործեն ատելություն կամ անհանդուրժողականություն քարոզելու նպատակով:

(116) Սպորտը միջմշակութային երկխոսության կարևորագույն տարածքներից մեկն է, որտեղ այն ուղղակիորեն աղերսվում է ամենօրյա կյանքի հետ: Մասնավորապես, ֆուտբոլը համամոլորակային մարզաձև է: Վերջին տարիներին այն բազմաթիվ հակառակադասական նախաձեռնությունների ասպարեզ է եղել, որոնք Եվրոպայում հովանավորվել են ՈՒԵՖԱ-յի կողմից: Վերջինս մշակել է 10-բալանի սանդղակ՝ համապատասխան հրահանգներ տալով ֆուտբոլային ակումբներին: Անկողմնակալ և համորեն ընդունված կանոնների համաձայն միմյանց հետ խաղալն ու արդար խաղի կանոնների պահպանումը կարող են ձևավորել միջմշակութային միջավայր:

(117) Ոչ մի դեպքում չի կարելի անտեսել աշխատավայրը որպես միջմշակութային երկխոսության միջավայր: Ինչպես վկայում են գիտական տնտեսության կենտրոնները, բազմազանությունը նորարարության կարևորագույն գործոններից մեկն է: Տարբեր

ազգության պատկանող աշխատակիցները կարող են իրենց հետ թարմ մտտեցումներ բերել միասնական և խմբակային աշխատանքի ընթացքում: Հանդուրժողականությունը նպաստավոր գործոն է համարվում տեխնոլոգիաների մշակման գործընթացում տաղանդների ներգրավման համար, ինչը չափազանց կարևոր է մրցունակության ապահովման տեսանկյունից: Այդուհանդերձ, փոքրամասնական համայնքների շատ անդամներ ներգրավվում են ցածր վարձատրվող և ցածր որակավորում պահանջող անապահով աշխատանքներում: Այստեղ լուրջ դերակատարություն կարող են ունենալ արհեստակցական միությունները ոչ միայն պայմանների բարելավման, այլև միջմշակութային համախմբվածության համար այնպիսի տարածքների առաջարկման առումով, որոնք կարող են մեղմել ռասիստական կազմակերպությունների կողմից հաճախ օգտագործվող աշխատանքի շուկայի տարբաժանման բացասական հետևանքները:

(118) Հանրային ծառայություններ մատուցողների, ոչ-կառավարական կազմակերպությունների և կրոնական համայնքների հանապազօրյա կյանքը բազմաթիվ պատեհություններ է մատուցում միջմշակութային երկխոսության համար: Առողջապահական, երիտասարդական և կրթական ծառայությունները փոքրամասնական համայնքների ներկայացուցիչներին աշխատանքի են վերցնում ամենօրյա հիմունքներով: Նրանց աշխատակիցները պետք է լինեն ձեռնհաս և արհեստավարժ՝ հարկ եղած դեպքում թարգմանություն և արդյունավետություն ապահովելու առումով: Առողջապահության ոլորտում, օրինակ, չափազանց զգայուն են մայրության խնամքի և հոգեբուժական ուղղությունները: Հանրային ծառայություններում տարբեր ազգային, կրոնական, մշակութային ու լեզվական առանձնահատկություններ ունեցող փոքրամասնական համայնքների անդամների ներգրավումը կարող է շահեկան լինել միջմշակութային հմտությունների լայն շրջանակի առկայության իմաստով, ինչը թույլ կտա սպասարկել հասարակության տարբեր շերտերը ներկայացնող հաճախորդների՝ փոխադարձության և արժանապատվության հիմունքներով: Քաղաքների միջև բարեկամության հաստատումը հրաշալի առիթ է այս բնագավառում փորձառության ձեռքբերման համար:

4.5 Միջմշակութային երկխոսությունը միջազգային հարաբերություններում

(119) Միջազգային իրավունքով, մարդու իրավունքների պաշտպանությամբ, ժողովրդավարությամբ և օրենքի գերակայությամբ բնորոշվող «բազմակողմության սկզբունքին» Եվրոպայի հավատարմությունը կոչված է խթանելու միջմշակութային երկխոսությունը միջազգային մասշտաբով: Միջազգային ասպարեզում միջմշակութային երկխոսության նկատմամբ վերը նշված սկզբունքների կիրառումը կարևոր նշանակություն ունի փոխընթերցման խթանման առումով: Այս խնդրի շուրջ համաեվրոպական համաձայնությունն ամրագրվեց Եվրոպայի Խորհրդի երրորդ գազաթաժողովի եզրակացություններով (Վարշավա, 2005թ.) և լրամշակվեց հետագա փաստաթղթերում:

(120) Ներկայիս աշխարհաքաղաքական իրավիճակը երբեմն բնութագրվում է որպես փոխբացառող քաղաքակրթություններից մեկը, որն աչքի է ընկնում մեկը մյուսի հաշվին հարաբերական տնտեսական ու քաղաքական առավելություններ ստանալու անզուսպ ձգտմամբ: Միջմշակութային երկխոսության հայեցակարգը կարող է օգտակար լինել այսպիսի աշխարհընկալումից բխող անպտուղ նախապաշարմունքների և կարծրատիպերի հաղթահարման գործում, քանի որ նրանում ընդգծվում է, որ արտագաղթով, հարածուն փոխկախվածությամբ, միջազգային լրատվամիջոցների դյուրամատչելիությամբ և ինտերնետի պես կապի նոր ծառայությունների առկայությամբ հատկանշվող այսօրվա համամոլորակային միջավայրում մշակութային ինքնություններն ավելի ու ավելի են խճճվում՝ ներառելով տարբեր բազմաթիվ այլ աղբյուրներից: Միջազգային հարաբերությունների տոգորումը միջմշակութային երկխոսության ոգով արդյունավետ պատասխան կլինի այս նոր իրավիճակին: Միջմշակութային երկխոսությունն այսպիսով կնպաստի հակամարտությունների կանխարգելմանն ու

կարգավորմանը, հաշտության կայացմանն ու հասարակական վստահության վերականգնմանը:

(121) Եվրոպայի Խորհուրդը բաց է իր անմիջական հարևանների և աշխարհի մնացած մասի հետ համագործակցության համար: Կազմակերպությունը, որն ունի հստակ հանձնառություն՝ ապահովել իր գործողությունների համադասումն ու համաձայնեցումը միջազգային մյուս կազմակերպությունների գործողությունների հետ, մասնավորապես՝ Եվրոպայում, իր առջև խնդիր է դրել նպաստել միջմշակութային երկխոսությանը միջազգային մասշտաբով: Միջազգային գործողություններում, մասնավորապես՝ եվրոպական ասպարեզում, կազմակերպությունն առանցքային դերակատարություն ունի միջմշակութային երկխոսությանն ուղղված նախաձեռնություններում: Կազմակերպության ներդրումը դրսևորվում է միջազգային այլ հաստատությունների, անդամ պետությունների, քաղաքացիական հասարակության և այլ շահագրգիռ կազմակերպությունների ծրագրերի իրականացմանն ի սպաս դնելով նախ և առաջ մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության չափորոշիչների և վերահսկողության մեխանիզմների ոլորտում իր կուտակած հարուստ փորձը: Եվրոպայի Խորհուրդը նաև իր փորձն է բերում մշակութային բազմազանությամբ պայմանավորված այն մարտահրավերների դիմագրավման ջանքերին, որոնք ժամանակ առ ժամանակ ի հայտ են գալիս սոցիալական, կրթական, առողջապահական և մշակութային ոլորտներում: Պարբերաբար և կազմակերպված ձևով կազմակերպությունը շփվում է շահագրգիռ խմբերի հետ՝ ի դեմս 47 անդամ պետություններում գործող խոհրդարանների անդամների, տեղական և շրջանային իշխանությունների և ոչ-կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների: Վերջապես, այն իր մասնակցությունն է բերում այնպիսի հաստատությունների միջոցով, ինչպիսիք են Համամոլորակային փոխկախվածության և համերաշխության եվրոպական կենտրոնը (Հյուսիս-Հարավ կենտրոնը, Լիսաբոն), Ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնը (Գրաց), եվրոպական երկու երիտասարդական կենտրոնները (Ստրասբուրգ և Բուդապեշտ), ինչպես նաև Ժողովրդավարական քաղաքացիության և միջմշակութային կրթության եվրոպական կենտրոնի (Օսլո) և Եվրոպական մշակութային կենտրոնի հետ (Դելֆի) համագործակցության շնորհիվ:

(122) Եվրոպայի Խորհուրդն ընդունում է միջազգային այլ կառույցների նախաձեռնությունների կարևորությունը և բարձր է գնահատում իր համագործակցությունն այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսիք են Եվրոպական Միությունը, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ), ՅՈՒՆԵՍԿՈ-ն, ինչպես նաև Արաբական լիգայի գիտակրթական և մշակութային կազմակերպությունը (ԱԼԳՄԿ) և Միջմշակութային երկխոսության եվրամիջերկրածովյան Աննա Լինդ հիմնադրամը: Եվրոպայի Խորհուրդն օժանդակում է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի նախաձեռնած և Իսլանդիայի ու Թուրքիայի կողմից հովանավորվող Քաղաքակրթությունների Դաշինքին և մտադիր է համագործակցության կապերն ամրապնդելու նպատակով փոխըմբռնման հուշագիր ստորագրել Դաշինքի հետ:²⁵ Նա նաև ուղիներ է փնտրում մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության ուղղությամբ Եվրոպայի Խորհրդի ձեռքբերումների շրջանակում Իսլամական գիտակրթական և մշակութային կազմակերպության (ԻԳՄԿ) և Իսլամական պատմության, արվեստի ու մշակույթի գիտահետազոտական կենտրոնի (ԻՊԱՄԳԿ) հետ միջմշակութային երկխոսության խորացման համար:

(123) Եվրոպայի Խորհրդի պես կազմակերպությունը կարող է օգտագործել նաև աշխարհի տարբեր տարածաշրջանների հետ անդամ պետությունների ունեցած կապերն

²⁵ 2008 թվականի հունվարի 15-ին Եվրոպայի Խորհրդի գլխավոր քարտուղարն ու քաղաքակրթությունների դաշինքի գծով ՄԱԿ-ի գերագույն հանձնակազմատարն ստորագրեցին մտադրությունների մասին հուշաթերթիկ, որը վերաբերում էր ապագա համագործակցությանն ու փոխըմբռնման հուշագրի մշակմանը:

ու համագործակցության մեխանիզմները: Եվրոպայի Խորհրդի կողմից ավանդաբար սատարվող անդրսահմանային կապերն ունեն կարևոր միջնաշակութային նշանակություն:

(124) Միջազգայնորեն կազմակերպված ոչ-պետական կառույցները, ինչպես օրինակ՝ ոչ-կառավարական կազմակերպությունները, զանազան հիմնադրամներն ու կրոնական համայնքներն էական դերակատարություն ունեն ազգերի միջև միջնաշակութային երկխոսության հաստատման գործում և, անկասկած, կարող են հանդես գալ իբրև ոլորտի նորարարներ: Նմանօրինակ կազմակերպություններն իրենց իրավասությունների շրջանակում տարիներ շարունակ զբաղվել են մշակութային բազմազանության հետ կապված խնդիրներով: Նրանք համակարգված այնպիսի կապեր են ստեղծում համայնքների միջև, որոնք հազիվ թե կարող են ապահովվել միջկառավարական պայմանավորվածություններով:

(125) Այստեղ իրենց խոսքն ունեն ասելու նաև անհատները: Նրանք, ովքեր սովոր են ապրել և աշխատել միջնաշակութային միջավայրում, հատկապես՝ ներգաղթյալները կարող են ստեղծել բազմապիսի անդրսահմանային կապեր: Նրանք կարող են հանդես գալ որպես զարգացման վեկտորներ՝ խթանելով նորարարությունն ու գաղափարների խաչասերումը: Նրանք մարմնավորումն են ինքնության բարդ և բազմաշերտ էության և կարող են առաջանցիկ դիրքեր զբաղեցնել միջնաշակութային երկխոսության մեջ:

5. Խորհուրդներ և քաղաքականության կողմնորոշիչներ ապագա գործողությունների համար

(126) Բոլոր շահագրգիռ կողմերը պատասխանատվություն են կրում մեր դավանած մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության համընդհանուր արժեքների արմատավորման նպատակով միջնաշակութային երկխոսության խորացման համար, ինչն իր հերթին կարող է խթանել ավելի մեծ Եվրոպայի ստեղծումը: Բոլորի ակտիվ ներգրավումը նախորդ գլխում նշված քաղաքականության 5 ուղղություններում յուրաքանչյուր անհատի թույլ կտա օգտվել մեր հարուստ մշակութային ժառանգությունից և ներկայիս միջավայրից: Ելնելով մշակութային բազմազանության և միջնաշակութային երկխոսության իր ընկալումից, ինչպես նաև հենվելով իր կուտակած հարուստ փորձի վրա՝ Եվրոպայի Խորհուրդը կարող է ձևակերպել հետևյալ առաջնահերթ հանձնարարականներն ու կողմնորոշիչները, ինչպես նաև՝ մշակել քաղաքականության ուղեցույցներ հետագա գործողությունների համար:

5.1 Մշակութային բազմազանության ժողովրդավարական կառավարումը

(127) Որպեսզի մշակութային բազմազանությունը կարողանա վերելք ապրել, անհրաժեշտ է բոլոր մակարդակներում զարգացնել վերջինիս ժողովրդավարական կառավարումը: Այս նպատակով կարելի է առաջարկել ընդհանուր կողմնորոշիչներ՝ հասցեագրված առաջին հերթին ազգային կառավարիչներին:

(128) Միջնաշակութային երկխոսության նպատակով անհրաժեշտ է ազգային և տեղական մակարդակում ստեղծել այնպիսի չեզոք ինստիտուցիոնալ և իրավական դաշտ, որը ժողովրդավարության և օրենքի գերակայության հիման վրա կերաշխավորի Եվրոպայի Խորհրդի սահմանած մարդու իրավունքների չափորոշիչների կիրառումը: Մասնավորապես, հարկավոր է ունենալ հստակ ձևակերպված օրենսդրություն և քաղաքականություն, որոնք ուղղված կլինեն խտրականության բոլոր դրսևորումների դեմ, այդ թվում՝ պայմանավորված անհատի սեռային և ռասայական պատկանելությամբ, մաշկի գույնով, լեզվով, կրոնով, ազգային ու սոցիալական ծագումով, ազգային փոքրամասնությունների հետ առնչությամբ, ունեցվածքային, ծննդյան կամ այլ կարգավիճակով, ինչպես ասենք՝ սեքսուալ կողմնորոշումն ըստ Դատարանի կիրառած

նախադեպային իրավունքի²⁶, տարիքով կամ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 12 արձանագրությանն առդիր զեկուցագրով նախատեսվող ֆիզիկական ու մտավոր արատներով²⁷: ՌԱՊԵՀ-ը մշակել է ռասիզմն ու ռասայական խտրականությունն արգելող ազգային օրենսդրությանը վերաբերող ուղեցույց²⁸: Պետության և կրոնների միջև հարաբերությունները պետք է այնպես կազմակերպվեն, որպեսզի յուրաքանչյուր ոք ունենա հավասար իրավունքներ և պարտականություններ՝ անկախ իր աշխարհայացքից, խղճից կամ կրոնից այն հաշվով, որ խղճի և կրոնի ազատությունները գործնականում հարգվեն ամբողջապես:

(129) Պետք է ապահովվի միջմշակութային երկխոսությանը նպաստող կամ խոչընդոտող տարբեր քաղաքականությունների միջև ներքին կապը: Այս նպատակին հասնելու ուղիներից մեկն էլ սովորական գերատեսչական սահմանների հաղթահարմամբ «միատեղման» մոտեցման որդեգրումն է միջգերատեսչական հանձնաժողովի, ինտեգրացիայի հարցերի նախարարության կամ վարչապետի գրասենյակի/կառավարության հատուկ ստորաբաժանման ստեղծման միջոցով: Մարդու իրավունքների նկատմամբ կիրառվող միջազգային չափանիշների, այդ թվում՝ Եվրոպայի Խորհրդի չափորոշիչների հիման վրա գործողությունների ազգային ծրագրի մշակումն ու իրականացումը, ինչպես նաև սույն տեղեկատվական զեկույցի հանձնարարականների արտացոլումը կարող են նպաստել ինտեգրացված հասարակության հայեցակարգի ձևավորմանը. այնպիսի հասարակության, որը կպահպանի բազմազանության սկզբունքն իր բոլոր անդամների համար, կձևակերպի իրատեսական և վերհսկողության տրվող ծրագրեր: Եվրոպայի Խորհուրդը պատրաստ է օժանդակել այսպիսի գործողությունների ազգային ծրագրերի մշակմանն ու դրանց իրականացման գնահատմանը: Հաջողության համար էական է քաղաքական ղեկավարության մասնակցությունն ամենաբարձր մակարդակով: Քաղաքացիական հասարակությունը ևս, ներառյալ փոքրամասնությունների և ներգաղթյալների միությունները, կարող է ունենալ կարևոր դերակատարություն: Ինտեգրացիայի խորացման նպատակով պետք է ձևավորել խորհրդակցական մարմիններ՝ տարբեր գործընկերների և շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ: Գործողությունների ազգային ծրագրերում պետք է ընդգրկվեն ինչպես վերջերս ներգաղթած, այնպես էլ հնարմակ փոքրամասնությունների ներկայացուցիչները:

(130) Մշակութային բազմազանության նկատմամբ միջմշակութային մոտեցման առավել ընդարձակ հայեցակարգի ուսումնասիրության նպատակով՝ Եվրոպայի Խորհրդի հանձնարարականները կարող են ներառել տարատեսակ շարունակական նախաձեռնություններ, այդ թվում՝ գիտագործնական հանդիպումներ և համաժողովներ: Մասնավորապես, այդ նախաձեռնությունները կարող են միտված լինել մշակութային բազմազանության նկատմամբ միջմշակութային մոտեցման և ինտեգրացիոն գործընթացների միջև աղերսների/փոխազդեցության ուսումնասիրությանը: Դրան կարող են հետևել մի շարք գործողություններ Եվրոպայի Խորհրդի ողջ տարածքում, որոնք հետամուտ կլինեն մշակութային բազմազանության, այդ թվում՝ ինտեգրացիայի նկատմամբ միջմշակութային մոտեցման հայեցակարգի արմատավորմանը:

(131) Պետական կառավարման մարմինները պետք է զգայուն լինեն մշակութային առումով տարբեր համայնքների ակնկալիքների նկատմամբ՝ ապահովելով, որ հանրային ծառայությունները մատուցվեն նրանց օրինական պահանջների հաշվառմամբ և

²⁶ Տես ի մասնավորի հետևյալ դատավճիռները. Smith and Grady v/United Kingdom – 29/09/1999 « 90; S.L. v/Austria – 09/01/2003 « 37; Karner v/Austria – 24/07/2003 « 37:

²⁷ Տես՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 12 արձանագրությանն առդիր զեկուցագիրը, § 20:

²⁸ ՌԱՊԵՀ-ի թիվ 7 ընդհանուր քաղաքականության հանձնարարականը ռասիզմն ու ռասայական խտրականությունն արգելող ազգային օրենսդրության մասին:

համապատասխանեն հասարակության բոլոր խմբերի շահերին: Այս պահանջը, որը բխում է անխտրականության և հավասարության սկզբունքներից, անչափ կարևոր է իրավապահ գործունեություն և արդարադատություն իրականացնելիս, ինչպես նաև առողջապահության, երիտասարդության, կրթության, մշակույթի և ժառանգության, բնակարանային ապահովման, սոցիալական աջակցության և զբաղվածության ոլորտներում: Վերոհիշյալ նպատակին ուղղված կարևոր քայլերից են ծառայությունների մատուցման քաղաքականության մշակման և միջոցների հատկացման մասին որոշումների կայացման գործընթացներում փոքրամասնությունների և մտավոր ու ֆիզիկական արատներով տառապող խմբերի ներկայացուցիչների ներգրավումը, ինչպես նաև տեխնիկական անձնակազմի մեջ նրանց ընդգրկելը:

(132) Հասարակական քննարկումները պետք է կրեն մշակութային բազմազանության նկատմամբ հարգանքի դրոշմը: Ռ-ասիզմի, այլատյացության և անհանդուրժողականության մյուս հրապարակային և բացահայտ դրսևորումները²⁹ պետք է մերժվեն և դատապարտվեն՝ համաձայն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համապատասխան դրույթների, անկախ նրանից, թե ովքեր են դրանց հեղինակները. պետական պաշտոնյաներ, թե՞ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Հրապարակային ելույթներում փոքրամասնությունների և մտավոր ու ֆիզիկական արատներով տառապող խմբերի ներկայացուցիչների խարազանման ամեն մի դրսևորում պետք է բացառվի: Չանգվածային լրատվության միջոցները կարող են դրական դերակատարություն ունենալ խտրականության դեմ պայքարում այնքանով, որքանով որ նրանք հանդիսանում են տարբեր ազգային, մշակութային, լեզվական և կրոնական ինքնություն ունեցող համայնքների միջև փոխըմբռնման մշակույթի տարածողներ: Գտնվելով ԵԽ անդամ պետությունների ավելի ու ավելի ընդարձակվող բազմամշակույթ և բազմազգ միջավայրում՝ լրատվության ոլորտի մասնագետները պետք է լուրջ ուշադրություն դարձնեն խտրականության խնդրին, ինչպես նաև այն քայլերին, որ իրենք կարող են ձեռնարկել ի նպաստ հանդուրժողականության, փոխըմբռնման և փոխադարձ հարգանքի մշակույթի արմատավորման:

(133) Պետությունները պետք է խիստ օրենքներ մշակեն ընդդեմ վիրավորական, ռասիստական, հակասեմիտական, հակազնչուական արտահայտությունների, ինչպես նաև այլատյացություն, մարդատյացություն, իսլամատյացություն պարունակող խոսքի, եթե դրանք հրահրում են ատելություն և բռնություն: Քրեական դատավարության համակարգի ներկայացուցիչները պետք է քաջավարժ լինեն՝ այդ օրենքների մեկնաբանման և գործադրման հարցերում: Հարկավոր է նաև ստեղծել խտրականության դեմ պայքարի կամ մամանօրինակ ազգային մարմիններ՝ հիշյալ օրենսդրության արդյունավետության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, համապատասխան

²⁹ 2005 թ. Եվրոպայի Խորհրդի երրորդ զագաթաժողովը խստիվ դատապարտեց «անհանդուրժողականության և խտրականության բոլոր ձևերը, մասնավորապես՝ սեքսի, ռասայական պատկանելության և կրոնի վրա հիմնվածները, ներառյալ հակասեմիտիզմն ու իսլամատյացությունը»: Նախարարների կոմիտեն ևս բազմիցս ընդունել է, որ գնչուներն ու ճանապարհորդները կյանքի բոլոր ոլորտներում համատարած կերպով ենթարկվել են խտրականության: Ավելին, Ռ-ԱՊԵՀ-ը հանձնարարելի համարեց, որպեսզի օրենքով պատժվեն «ցեղասպանության ոճրի, մարդկության դեմ իրականացված հանցագործությունների, ինչպես նաև պատերազմական հանցագործությունների ռասիստական նպատակներով հրապարակային ժխտումը, անտեսումը, արդարացումը կամ դրանց նկատմամբ ներտղամտությունը», եթե դրանք կատարվում են միտումնավոր կերպով (Ռ-ԱՊԵՀ-ի թիվ 7 ընդհանուր քաղաքականության հանձնարարականը ռասիզմն ու ռասայական խտրականությունն արգելող ազգային օրենսդրության մասին, 2002 թ.): Ռ-ԱՊԵՀ-ը նաև ընդգծում էր մահմեդական համայնքների կրած վնասի հատուցման անհրաժեշտությունը և հանձնարարում համապատասխան պատժամիջոցներ կիրառել կրոնական հողի վրա տեղ գտած խտրականության դեպքերի համար (Տես՝ թիվ 5 ընդհանուր քաղաքականության հանձնարարականը՝ մահմեդականների նկատմամբ անհանդուրժողականության և խտրականության դեմ պայքարի մասին):

դասընթացներ կազմակերպելու և ռասիստական արտահայտությունների գոհերին պաշտպանելու համար:

(134) Հատուկ պատասխանատվություն է ընկած քաղաքական առաջնորդների ուսերին: Նրանց դիրքորոշումները մեծապես ազդում են միջմշակութային հարցերի վերաբերյալ հասարակության տեսակետների վրա՝ ներուճակորեն մեղմելով կամ սրելով իրավիճակը: ՌԱՊԵՀ-ը անդրադարձել է այս խնդրին՝ մշակելով մի շարք գործնական քայլեր, որոնք կարող են օգտակար լինել ռասիզմ, հակասեմիտականություն և այլատյացություն քարոզող քաղաքական ելույթների դեմ պայքարում³⁰: Տեղական իշխանությունների ղեկավարները շատ բան կարող են անել քաղաքացիական առաջնորդության շնորհիվ՝ ապահովելու միջհամայնքային խաղաղություն: ՌԱՊԵՀ-ը նաև հանձնարարում է հանրային միջոցներ չտրամադրել այն քաղաքական կուսակցություններին, որոնք ջատագովում են ռասիզմ, մասնավորապես՝ ատելություն սերմանող հրապարակային ելույթների օգնությամբ:

(135) Անհրաժեշտության դեպքում պետական կառավարման մարմինները պետք է համարժեք դրական միջոցներ ձեռնարկեն փոքրամասնությունների և մտավոր ու ֆիզիկական արատներով տառապող խմբերի ներկայացուցիչներին իրենց մասնագիտական գործունեության մեջ, հասարակական կազմակերպություններում, քաղաքական կառույցներում և տեղական ինքնակառավարման մարմիններում պատասխանատու գործառույթներ վստահելու ուղղությամբ՝ պատշաճ ուշադրություն դարձնելով նրանց մասնագիտական կարողություններին: Բոլոր անդամ պետությունները պետք է ընդունեն այն սկզբունքը, ըստ որի՝ որոշ հանգամանքներում ազգային փոքրամասնություններին և մեծամասնությանը պատկանող անձանց միջև լիակատար և փաստացի հավասարության ապահովմանն ուղղված միջոցներն անհրաժեշտություն են և չեն կարող դիտվել որպես խտրականության դրսևորում: Նման միջոցների դիմելիս՝ պետք է հաշվի առնել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց առանձնահատուկ կարգավիճակը³¹:

* * *

³⁰ «Հայտարարություն քաղաքական ելույթներում ռասիստական, հակասեմիտական և այլատյացության վրա հիմնված արտահայտությունների գործածության մասին» (մարտ, 2005 թ.):

³¹ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիա, հոդված 4, §§ 2 և 3:

(136) Եվրոպայի Խորհուրդը պետք է գործի իր սահմանած իրավական չափանիշներն ու հանձնարարականները նոր՝ ավելի գրավիչ տեսքով այն խմբերի շրջանում տարածելու ուղղությամբ, որոնց հասցեագրված են դրանք. պետական իշխանության և գործադիր մարմինների պաշտոնյաներ, ոչ-կառավարական կազմակերպությունների և լրատվամիջոցների ղեկավարներ, երիտասարդություն: Այն պետք է ներառի բազմամշակույթ միջավայրում մարդու իրավունքների պաշտպանության մասին հանրամատչելի նյութեր, ինչպես նաև ազգամիջյան աստելության քարոզչության և հասարակական վայրերում կրոնական խոհրդանիշներ կրելու վերաբերյալ ձեռնարկներ, որոնցում հանձնարարականներ կտրվեն մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի լույսի ներքո:

Հանրամատչելի դարձնել միջմշակութային երկխոսության առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ընդունած նախադեպային վճիռները
 Եվրոպայի Խորհուրդը կիրատարակի կոնվենցիայի՝ միջմշակութային երկխոսությանը վերաբերող հոդվածների առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած վճիռների և որոշումների մանրակրկիտ տեսությունը:

(137) Մարդու իրավունքների ղեկավար կոմիտեն հետամուտ կլինի բազմամշակույթ միջավայրում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտին առնչվող մի շարք խնդիրների լուսաբանմանը, ինչի արդյունքում կարող է ձևակերպվել Եվրոպայի Խորհրդի առաջիկա քաղաքականությունը: Կոմիտեն նաև կհետևի մշակութային իրավունքների ոլորտի զարգացումներին:

(138) Ընդհանուր առմամբ, եթե ցանկանում ենք, որ սույն փաստաթղթում նկարագրված Եվրոպայի Խորհրդի նպատակներն իրականացվեն հավուր պատշաճի, ապա անհրաժեշտ է ավելի շատ երկխոսություն ծավալել միջմշակութային երկխոսության շուրջ: Եվրոպայի Խորհրդի գործողությունների ծրագիրը բազմաթիվ հնարավորություններ է ստեղծում կայուն և ընդգրկուն երկխոսության համար: Օրինակներ կարելի է գտնել նախարարական համաժողովներում, խորհրդարանական քննարկումներում, երիտասարդների համար կազմակերպված ուսուցողական սեմինարներում և փորձագիտական բանավեճերում, ինչպես օրինակ՝

Եվրոպայի Խորհուրդը որպես միջմշակութային երկխոսության մշտական ամբիոն
 Իր գործողությունների ծրագրի միջոցով Եվրոպայի Խորհուրդը կանոնավոր կերպով մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության ոլորտի իր

Եվրոպայի Խորհրդի կողմից կազմակերպված նախորդ միջմշակութային համաժողովները³², որոնք հանգեցրին կարևոր եզրակացությունների, որոնց մեծ մասը տեղ է գտել սույն տեղեկատվական զեկույցում: Ուղիներ կփնտրվեն ապագայում նոր միջմշակութային համաժողովներ կազմակերպելու համար:

³² 2003 թ. Մարայելո, 2004 թ. Տրոյինա և 2006 թ. Բուխարեստ:
 Համառոտ ձեռնարկի մշակութային բազմազանության և միջմշակութային երկխոսության քաղաքականության մասին բաժինն ունի հատուկ հոդվածներ և ավելի ընդարձակ նկարագրություն է տալիս կառավարական և ոչ-կառավարական կառույցների կողմից չափորոշման և նորարարության բնագավառում առկա կայողություններին ողջ Եվրոպայի մասշտաբով: Տես՝ www.culturalpolicies.net:

փորձառությունն է հաղորդում միջմշակութային երկխոսության շուրջ անդամ պետությունների, քաղաքացիական հասարակության և այլ շահագրգիռ կողմերի միջև ընթացող քննարկումներին՝ այդպիսով հող նախապատաստելով միջազգային, ազգային և տեղական մակարդակով գործողությունների իրականացման համար:

(139) Մեկ այլ օրինակ է կառավարական փորձագետների և քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերի, մասնավորապես՝ լրագրողների ու կրոնական համայնքների անդամների հետ ծրագրված համաժողովը: Վերջինիս նպատակն է արժարժեք բազմամշակույթ հասարակություններին հուզող՝ մարդու իրավունքներին առնչվող մի շարք բարդ խնդիրներ, մասնավորապես այնպիսիք, որոնք կապված են խոսքի և կրոնի ազատության հետ:

(140) «Միանգամայն տարբեր՝ լիովին հավասար» երիտասարդական շարժման շարունակությունը հանդիսացող սակայն ավելի լայն լսարանի հասցեագրված և խտրականության դեմ ուղղված նոր քարոզարշավն ընդգրկում է խտրականության և ռասիզմի բոլոր ձևերը, մասնավորապես՝ հակասեմիտիզմը, իսլամատյացությունն ու հակազնչուականությունը:

Համաեվրոպական արշավ ընդդեմ խտրականության
 Լրատվության ոլորտի մասնագետների և ժուռնալիստիկայի գծով ուսուցում իրականացնող հաստատությունների հետ մեկտեղ, 2008 թվականին Եվրոպայի Խորհուրդը կազմակերպում է արշավ ընդդեմ խտրականության՝ որպես կիզակետ ընտրելով բազմամշակույթ Եվրոպայում զանգվածային լրատվության միջոցների դերի բարձրացումը:

(141) Բոլորի մասնակցության ապահովմանն ուղղված մշակութային քաղաքականության խրախուսման նպատակով՝ Եվրոպայի Խորհուրդը մշակութային քաղաքականության ոլորտում կմշակի մշակութային քաղաքականության և չափանիշների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման իր համակարգերը, ինչպես նաև ճիշտ գործելակերպի օրինակներն ի մի բերող փաստաթղթերը: Մշակութային քաղաքականության համառոտ ձեռնարկը ենթակա է անընդհատ թարմացման և վերամշակման:³³ Եվրոպայի Խորհուրդը կշարունակի համագործակցել Եվրոպական և միջազգային այլ հաստատությունների հետ՝ տվյալների հավաքագրման ու վերլուծության և անդամ պետություններին միջմշակութային երկխոսության վերաբերյալ տեղեկատվության մատուցման բնագավառում:

5.1 Ժողովրդավարական քաղաքացիություն և մասնակցություն

(142) Ցանկալի է, որ պետական կառավարման մարմիններն ու սոցիալական բոլոր կառույցները ջանքեր գործադրեն կրթական նախաձեռնությունների և գործնական միջոցառումների օգնությամբ երկխոսության համապատասխան հենքի ձևավորման ուղղությամբ՝ այդ գործում ներգրավելով ինչպես մեծամասնությանը, այնպես էլ փոքրամասնությանը: Ժողովրդավարությունը կախված է պետական-հասարակական գործերում անհատի մասնակցության աստիճանից: Համայնքի կյանքից որևէ մեկի օտարումը չի կարող արդարացվել և անկասկած լուրջ արգելք է հանդիսանում միջմշակութային երկխոսության համար:

(143) Երկխոսության հաստատուն ձևերը, ինչպես օրինակ Տեղական և շրջանային իշխանությունների կոնգրեսի առաջարկած՝ արտասահմանյան վերաբնակիչներին

³³ Ձեռնարկն ունի հատուկ հոդվածներ մշակութային բազմազանության քաղաքականության և միջմշակութային երկխոսության խորագրերի ներքո, որտեղ մանրակարկիտ կերպով նկարագրվում են Եվրոպայի մասշտաբով ինչպես կառավարական, այնպես էլ ոչ-կառավարական կառույցների կողմից կիրառվող չափորոշիչներն ու նորամուծությունները. www.culturalpolicies.net:

պետական իշխանություններին ներկայացնող խորհրդակցական մարմիններն ու «տեղական ինտեգրացիոն կոմիտեները»³⁴ և կարող են լուրջ դերակատարություն ունենալ:

(144) Մարդու իրավունքները, այդ թվում՝ քաղաքացիություն չունեցողների իրավունքները չեն կարող ենթարկվել անհարկի սահմանափակումների: Նկատի առնելով մարդու իրավունքների համընդհանուր բնույթը, որոնց բաղկացուցիչ մասն են փոքրամասնությունների մշակութային, լեզվական ու մասնակցային իրավունքները, չափազանց կարևոր է բոլորի համար ապահովել իրավունքների լիակատար պաշտպանություն: Վենետիկի հանձնաժողովն առանձնահատուկ ընդգծում է այս դրույթի կարևորությունը:³⁵

(145) Պետական կառավարման տեղական մարմինները պետք է խրախուսեն իրենց իրավասության գոտում օրինական կարգով բնակություն հաստատած բոլոր անձանց ակտիվ մասնակցությունը հասարակական կյանքին, հնարավորության դեպքում՝ նաև Տեղական մակարդակում հասարակական կյանքին օտարերկրացիների մասնակցության մասին կոնվենցիայի համաձայն տեղական ու շրջանային ընտրություններում քվեարկելու իրավունքը: Ազգային քաղաքացու կարգավիճակով ժողովրդավարական քաղաքացիության սահմանափակման դեպքում, պետական կառավարման մարմինները պետք է միջոցներ ձեռնարկեն վերաբնակիչներին օրինական քաղաքացիություն շնորհելու ուղղությամբ, ինչը միանգամայն համահունչ է Ազգության մասին եվրոպական կոնվենցիայի սկզբունքներին:

(146) Պետական կառավարման մարմինները պետք է իրապես աջակցեն մասնակցություն և ժողովրդավարական քաղաքացիություն քարոզող ոչ-կառավարական կազմակերպությունների գործունեությանը, մասնավորապես՝ այն կազմակերպությունների աշխատանքներին, որոնք ներկայացնում կամ աշխատում են երիտասարդությանը կամ փոքրամասնություններին ներկայացնող անձանց, նույն թվում և գաղթականների հետ: Ժողովրդավարական քաղաքացիությունն ու հասարակական մասնակցությունը հաճախ են կիրառվում ոչ-կառավարական կազմակերպությունների միջոցով: Ուստի, նրանք պետք է հնարավորություն ունենան իրականացնելու իրենց հույժ կարևոր դերակատարությունը բազմամշակույթ հասարակություններում, լինեն դրանք հատուկ խմբերի համար ծառայություններ մատուցող կառույցներ, որոնք հանդես են գալիս որպես բազմազանության կամ փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ջատագովներ, թե սոցիալական ինտեգրացիայի և համախմբվածության գործիքներ: Միջմշակութային երկխոսության ասպարեզում կարևոր դեր է վերապահվում հատուկ փոքրամասնական խմբերի և միջմշակութային միությունների ներկայացուցիչներին:

(147) Ազգային ինտեգրացիոն պլանի մշակումը, համապատասխան նախագծերի և ծրագրերի կազմումը, տրամադրումն ու դրանց հետագա գնահատումն այն խնդիրներից են, որոնցում այդ կազմակերպությունները պետք է ակտիվ կերպով ներգրավվեն: Փոքրամասնական ծագումով անհատների մասնակցությունը ոչ-կառավարական կազմակերպությունների աշխատանքներին պետք է պարբերաբար խրախուսվի:

(148) Տեղական կառավարություններին հատկապես հանձնարարվում է մշակել այնպիսի նախաձեռնություններ, որոնք ուղղված կլինեն անհատների հասարակական ակտիվության բարձրացմանը, ինչպես նաև ժողովրդավարական մասնակցության մշակույթի ձևավորմանը: Այս համատեքստում տեղական ինտեգրացիան կամ

³⁴ Տեղական և շրջանային իշխանությունների կոնգրես. Արտասահմանցի վերաբնակիչներին տեղեկում ներկայացնող խորհրդակցական մարմիններ. Ձեռնարկ (Ստրասբուրգ՝ CL RAE, 2003 թ.):

³⁵ Իրավական ժողովրդավարության եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով). Չեկույց ոչ քաղաքացիների և փոքրամասնության իրավունքների մասին, CDL-AD(2007)001, ad «144.

«օտարերկրացիների խորհուրդների» հիմնումը կարող է դիտվել որպես օրինակելի գործելակերպ, ինչը տեղական քաղաքական դեկլարության հետ շփվելու մեխանիզմներ կրճատի փոքրամասնությունների ներկայացուցիչներին և զաղթականներին: Տեղական և շրջանային իշխանությունների կոնգրեսը մանրամասն ցուցումներ է տալիս այս ոլորտում:

* * *

(149) Եվրոպայի Խորհրդի ծրագրերից շատերը միտված են ժողովրդավարական քաղաքացիության և մասնակցության ամրապնդմանը: Դրանցից է «Միջմշակութային քաղաքներ» ծրագիրը, որի նպատակն առկա կարողությունների մեծացումն ու քաղաքականության մշակման համար համապատասխան միջավայրի ստեղծումն է: Մասնակից քաղաքները կաշխատեն բազմազանության կառավարման համար միջմշակութային ռազմավարության ձևակերպման ուղղությամբ: Ծրագիրը կմշակվի մի շարք միջկառավարական և ոչ կառավարական գործընկերների հետ միասին:

«Միջմշակութային քաղաքների» սատարումը

2008 թվականին Եվրոպայի Խորհուրդը կնախաձեռնի մի ծրագիր, որն ուղղված կլինի մանրակրկիտ ուսումնասիրությունների, ինչպես նաև պետական կառավարման, լրատվության, միջնորդության և մշակութային քաղաքականության ոլորտում առկա առաջավոր փորձի փոխանակման միջոցով քաղաքների՝ որպես միջմշակութային երկխոսության տարածքների դերի բարձրացմանը:

(150) Քաղաքային միջավայրերում մշակութային բազմազանության թեման նույնպես ունի առաջնահերթ կարևորություն: Առավել հաջողակ քաղաքներն ապագայում կլինեն միջմշակութային: Նրան կկարողանան կառավարել և ուսումնասիրել իրենցում առկա մշակութային բազմազանության կարելիությունները, ինչպես նաև խթանել ստեղծագործ մոտեցումներն ու նորարարությունը՝ այդպիսով նպաստելով տնտեսական բարօրությանը, հասարակության համախմբվածությանն ու կյանքի պայմանների համընդհանուր բարելավմանը:

5.2 Միջմշակութային հմտությունների յուրացումն ու ուսուցումը

(151) Միջմշակութային հմտությունների յուրացումն ու ուսուցումը կարևոր են ժողովրդավարական մշակույթի և սոցիալական համախմբվածության ամրապնդման համար: Ներառականությանն ուղղված համահավասար կրթության ապահովումը կնպաստի հասարակական և քաղաքացիական ակտիվության բարձրացմանը՝ միաժամանակ բացառելով կրթական անհամամասնությունների գոյությունը: Քաղաքականության այսպիսի մոտեցումը կարող է դրսևորվել պետական կառավարման մարմիններին և պաշտոնական կրթություն իրականացնող հաստատություններին, ինչպես նաև ոչ-պաշտոնական և այլընտրանքային կրթություն մատուցող ոչ-կառավարական կազմակերպություններին, այդ թվում՝ փոքրամասնությունների և երիտասարդության հարցերով զբաղվողներին, զանգվածային լրատվության միջոցներին, սոցիալական և մշակութային գործընկերներին ու կրոնական համայնքներին հասցեագրված մի շարք առաջնահերթ հանձնարարականներում և հրահանգներում:

(152) Պետական կառավարման մարմինները, ոչ-կառավարական կազմակերպություններն ու կրթություն մատուցող մյուս կառույցները պետք է միջմշակութային երկխոսության և ներառական կրթության զարգացումն առաջնային համարեն բոլոր մակարդակներում: Միջմշակութային հմտությունները պետք է քաղաքացիության և մարդու իրավունքների ուսուցման մաս կազմեն: Պետական

կառավարման պատկան մարմիններն ու կրթական հաստատությունները բոլոր մակարդակներում, այդ թվում՝ ուսուցիչների վերապատրաստման և մեծահասակների ուսուցման համար կրթական ծրագրեր և ուսումնական պլաններ կազմելիս և իրականացնելիս պետք է ամբողջությամբ օգտագործեն միջմշակութային հաղորդակցության ամենակարևոր հմտությունների նկարագրիչները: Պետք է մշակվեն լրացուցիչ գործիքներ ինքնուրույն վերլուծության, այդ թվում այլ մշակույթների վերաբերյալ իրենց մոտեցումների և պատասխանների մասին քննադատաբար խորհելու՝ ուսանողների ունակությունների ամրապնդման համար: Բոլոր ուսանողներին պետք է հնարավորություն տրվի զարգացնելու իրենց լեզվական հմտությունները: Պետք է միջմշակութային գիտելիքների և գործնական հմտությունների ուսուցման տարրեր ներմուծել ուսուցիչների առաջնային կրթության և ծառայողական վերապատրաստման գործընթացներում: Դպրոցական և ընտանեկան շփումները պետք է դառնան երկրորդային ուսուցման մշտական բաղադրիչը:

(153) Մարդու իրավունքների ուսուցումը, քաղաքացիական ակտիվության և միջմշակութային երկխոսության մասին գիտելիքների մատուցումը կարող են մեծապես շահել բազմաբնույթ ուսուցողական նյութերի առկայությունից, ներառյալ «Կողմնացույցը» և «Կողմնացույցիկը», որոնք երիտասարդության և երեխաների շրջանում մարդու իրավունքների ուսուցման նպատակով Եվրոպայի Խորհրդի հրատարակած երկու ձեռնարկներն են:

(154) Կրթական հաստատություններին ու կրթական գործունեության մեջ ներգրավված մյուս բոլոր շահագրգիռ կողմերին կոչ է արվում ապահովել նախարարների կոմիտեի հանձնարարականների կատարումը, այն է՝ չսևեռվել միայն սեփական երկրի պատմության վրա, այլ ուսուցանել նաև այլ երկրների պատմությունն ու մշակույթը, ինչպես նաև նրանց հայացքները մեր հասարակության մասին (բազմահայեցակերպություն): Միևնույն ժամանակ, հարկ է ուշադրություն դարձնել Եվրոպայի Խորհրդի հիմնարար արժեքների նկատմամբ հարգանքին՝ կրթության մեջ ընդգրկելով մարդու իրավունքների ուսուցման բաղադրիչը:³⁶

(155) Անցյալի իմացությունն անհրաժեշտ է հասարակության այսօրը հասկանալու և պատմության ողբերգական անցքերի կրկնությունը թույլ չտալու համար: Այս առումով, պետական կառավարման պատկան մարմիններին ու կրթական հաստատություններին կոչ է արվում յուրաքանչյուր տարի նախապատրաստել և նշել «Հոլոկոստի զոհերի ոգեկոչման և մարդկության դեմ ուղղված ոճիրների կանխարգելման օր», որը կարող է

³⁶ Նախարարների կոմիտեի՝ 21-րդ դարի Եվրոպայում պատմության դասավանդման մասին անդամ պետություններին հասցեագրված թիվ (2001)15 հանձնարարականն ի թիվս այլ խնդիրների ընդգծում է նաև, որ. «Պատմության ուսուցումը չի կարող դառնալ զաղափարաբանական շահարկումների գործիք և օգտագործվել անհանդուրժողականություն, ծայրահեղ ազգայնականություն, այլատյացություն, ռասիզմ կամ հակասեմիտականություն քարոզելու նպատակով: Պատմական ուսումնասիրություններն ու պատմությունն այնպես, ինչպես որ դրանք դասավանդվում են դպրոցում, չեն կարող որևէ կերպ և որևիցե միտումով համատեղելի լինել Եվրոպայի Խորհրդի հիմնարար արժեքների և կանոնադրության հետ, եթե դրանք թույլ են տալիս կամ խրախուսում պատմության չարաշահում, մասնավորապես՝ հետևյալ միջոցներով.

- փաստերի նենգափոխում կամ կեղծ ապացույցների, վիճակագրության, խեղաթյուրված պատկերների վկայակոչում
- մեկ առանձին իրադարձության վրա մտասևեռում՝ մեկ այլ եղելության քողարկման նպատակով
- քարոզչական նկրտումներով պատմական անցքերի խեղաթյուրում
- անցյալի չափազանց ազգայնամետ մեկնություն, որը կարող է հանգեցնել «մենք և նրանք» տիպի տրամաբանական հակադրության
- պատմական փաստերի շահարկում
- պատմական ճշմարտության ժխտում
- պատմական ճշմարտության անտեսում:» (Տես՝ Հավելված, բաժին 2. «Պատմության չարաշահման մասին»):

ընտրվել՝ ելնելով տվյալ երկրի պատմական անցյալի առանձնահատկություններից: Այդօրինակ միջոցառումներ կազմակերպելիս կարելի է օգտվել Եվրոպայի Խորհրդի «Ոգեկոչման դաս. մարդկության դեմ ուղղված ոճիրների կանխարգելման ուսուցում» վերտառությամբ նախագծից, որի նպատակն է օգնել դպրոցական աշակերտներին՝ բացահայտել և հասկանալ Եվրոպայի և աշխարհի պատմությունը սովերած իրադարձություններն ու ճանաչել հրեական ողջակիզման եզակիությունը՝ որպես մի ամբողջ ժողովրդի բնաջնջման առաջին կանխամտածված փորձը մոլորակի մասշտաբով, իրազեկել նրանց 20-րդ դարում տեղի ունեցած բոլոր ցեղասպանությունների և մարդկության դեմ կատարված ոճիրների մասին, աշակերտներին սովորեցնել, թե ինչպես կարելի է կանխարգելել մարդկության դեմ ուղղված ոճիրներն ու նպաստել ազգերի, էթնիկ խմբերի և կրոնական համայնքների միջև փոխըմբռնման, հանդուրժողականության և բարեկամության մթնոլորտի ձևավորմանը՝ հավատարիմ մնալով Եվրոպայի Խորհրդի հիմնարար սկզբունքներին:

(156) Մեր բազմադիմի մշակութային ժառանգության պատշաճ գնահատումը ենթադրում է աշխարհի բոլոր խոշոր կրոնների և ոչ-կրոնական բնույթի համոզմունքների ընկալումն ու հասարակության մեջ նրանց դերի ըմբռնումը: Կարևոր է նաև երիտասարդությանը ներմշել Եվրոպայի ընկերային և մշակութային բազմազանության գնահատման անհրաժեշտությունը՝ ընդգրկելով վերջերս ներգաղթած խմբերն ու այն համայնքները, որոնց եվրոպական արմատներն ունեն հարյուրամյակների պատմություն:

(157) Միմյանց մասին ճանաչողական գիտելիքների մատուցումը ենթադրում է նաև ստեղծագործական մոտեցման տարբեր դրսևորումների, այդ թվում՝ արվեստի գործերի, խորհրդանիշերի, տեքստերի, զանազան առարկաների, հանդերձանքի և սննդի պատշաճ գնահատման մշակույթի սերմանում: Երաժշտությունը, արվեստներն ու պարը հզոր գործիք են միջմշակութային երկխոսության հաստատման ճանապարհին:

(158) Պետական կառավարման պատկան մարմինները պետք է նաև հաշվի առնեն իրենց կողմից կիրառվող կանոնադրական և օրենսդրական քաղաքականության, ինչպես օրինակ՝ արտոնագրային ռեժիմի և դասախոսական անձնակազմի, ուսանողների, արվեստագետների ու կատարողական արվեստի ներկայացուցիչների աշխատանքի և կեցության թույլտվության պայմանների հնարավոր ազդեցությունը կրթական ու մշակութային շփումների վրա: Ենթադրվում է կանոններն ու քաղաքականությունը կարող են մեծապես նպաստել միջմշակութային երկխոսությանը:

* * *

(159) Եվրոպայի Խորհուրդը հստակ հանձնառություն ունի կրթության միջոցով նպաստել միջմշակութային հմտությունների փոխանցմանը: Ինչ վերաբերում է պետական կրթությանը ապա Եվրոպայի Խորհուրդը կմշակի միջմշակութային հաղորդակցության և միջմշակութային գրագիտության նկարագրական հմտությունների ձեռնարկ և կկազմի «Ենթա գործելակերպի ուղեցույց» բոլոր մակարդակների համար: Կազմակերպությունը ջանքեր կգործադրի ժողովրդավարական մշակույթի և

Եվրոպայի Խորհուրդը հանձնառու է շարունակել միջմշակութային հմտությունների ուսուցման և յուրացման ոլորտի հեղինակավոր հաստատության իր առաքելությունը՝ հետաշտու և ուշադրության կենտրոնում պահելով այդ խնդիրները:
Պետական կառավարման պատկան մարմինների, կրթություն իրականացնող հաստատությունների և փորձագետների հետ համատեղ, Եվրոպայի Խորհուրդը կշարունակի իր նորարարական

միջմշակութային երկխոսության արմատավորումը 2010 թվականից հետո եվրոպական բարձրագույն կրթության տարածքի բաղկացուցիչ մասը դարձնելու ուղղությամբ: Օսլոյում գործող ժողովրդավարական քաղաքացիության և միջմշակութային կրթության եվրոպական կենտրոնի գործունեության հիմքում ընկած կլինի միջմշակութային հմտությունների փոխանցումը ուսուցիչներին:

գործունեությունը միջմշակութային հմտությունների սահմանման, մշակման, տարածման և փոխանցման ուղղությամբ՝ ձեռնարկելով համապատասխան քայլեր նաև լեզվական քաղաքականության բնագավառում:

(160) Եվրոպայի Խորհուրդը կշարունակի մշակել գործիքներ, որոնք թույլ կտան խորացնել միջմշակութային երկխոսությունը պատմության դասավանդման այնպիսի մոտեցումների օգնությամբ, որոնք հիմնված կլինեն օբյեկտիվության, քննադատական վերլուծության, բազմահայեցակերպության, փոխադարձ հարգանքի, հանդուրժողականության, ինչպես նաև Եվրոպայի Խորհրդի հիմնական արժեքների վրա: Եվրոպայի Խորհուրդը կաջակցի Հոլոկոստի, ցեղասպանությունների և մարդկության դեմ կատարված այլ ոճիրների՝ ազգային մաքրագտումների, մարդու իրավունքների և Եվրոպայի Խորհրդի դավանած արժեքների զանգվածային խախտումների կրկնության բացառման ուղղությամբ կրթության ոլորտում գործադրված յուրաքանչյուր ջանք: Եվրոպայի Խորհուրդը նաև կշարունակի իրականացնել և ընդլայնել «Ոգեկոչման դաս. մարդկության դեմ ուղղված ոճիրների կանխարգելման ուսուցում» վերտառությամբ նախագիծը:

(161) Ինչ վերաբերում է միջմշակութային երկխոսության դաշտում իրականացվող լեզվական քաղաքականությանը, ապա Եվրոպայի Խորհուրդն օգնություն կցուցաբերի և հանձնարարականներ կտա պատկան մարմիններին՝ կրթության համակարգում լեզուների ուսուցման քաղաքականության վերանայման վերաբերյալ: Նա նաև խորհրդակցական բնույթի ցուցումներ կտա և համապատասխան գործիքներ կտրամադրի լեզվական հմտությունների համաեվրոպական չափանիշների նկարագրության համար:

«Ուրիշի կերպարը պատմության ուսուցման մեջ» վերտառությամբ ընթացիկ նախագիծը կշարունակվի և կզարգացվի
Եվրոպայի Խորհուրդը կշարունակի նախագիծը՝ նախատեսելով դրա ընդլայնումն ի մասնավորի ՅՈՒՆԵՍԿՈ-յի, ԱԼԿԳԿ-յի և Իսլամական պատմության, արվեստի և մշակույթի գիտահետազոտական կենտրոնի (ԻՊԱՄԳԿ) հետ համագործակցության միջոցով:

(162) Որպես միջմշակութային կրթության և երկխոսության զարգացման ծրագրի մաս, այլ տիպի նախաձեռնություններ կիրականացվեն արվեստների և կրոնի ու դավանանքի պատմության ուսուցման բնագավառում՝ մշակելով ընդհանուր կողմնորոշիչներ մշակութային տեսանկյունից բազմազան լսարանների կառավարման համար, ինչպես նաև նպաստելով կրթական ծրագրերում միջմշակութային ուսուցման տարրերի ներմուծմանը:

(163) Ինչ վերաբերում է ոչ-պաշտոնական և այլընտրանքային կրթությանը, ապա Եվրոպայի Խորհուրդը կշարունակի ջանքեր գործադրել ի սատարումն գործնական ու ստեղծագործական մոտեցումների օգնությամբ մշակութային բազմազանության կառավարմանն ուղղությամբ ոչ-կառավարական կազմակերպությունների, մասնավորապես՝ երիտասարդական կազմակերպությունների գործունեության: Եվրահանձնաժողովի «Երիտասարդական գործընկերություն» ծրագրի շրջանակում Եվրոպական քաղաքացիությանն ու մարդու իրավունքներին նվիրված դասընթացները կշարունակվեն և էլ ավելի կընդարձակվեն: Միջմշակութային հմտությունների ուսուցման

նոր հնարավորություններ կընձեռվեն ի մասնավորի ոչ-կառավարական կազմակերպություններին, կրոնական համայնքներին ու լրագրողներին: Եվրոպայի Խորհուրդը կշարունակի աշխատել լրատվական գրագիտության բարձրացման ուղղությամբ:

(164) Հիշյալ գործողությունները կրացվեն մշակույթի և ժառանգության քաղաքականության ոլորտում ձեռնարկվելիք նոր նախաձեռնություններով, որոնք միտված կլինեն միջմշակութային փոխըմբռնման խորացմանն ու մշակութային ժառանգության հանրամատչելիության ապահովմանը, քանի որ այն էական նշանակություն ունի միջմշակութային երկխոսության համար: Այս առումով, շեշտը կդրվի համապատասխան ծրագրերի օգնությամբ, որպես մշակութային բազմազանության և հարստության աղբյուրի՝ այլոց մշակութային ժառանգության մասին գիտելիքների հաղորդման և հարգալից վերաբերմունքի ձևավորման վրա:

5.4 Միջմշակութային երկխոսության տարածքները

(165) Միջմշակութային երկխոսության համար տարածքների ստեղծումը պահանջում է հավաքական ջանքեր: Միջմշակութային երկխոսությունը չի կարող կայանալ, էլ չասենք՝ զարգանալ առանց մատչելի ու գրավիչ համապատասխան տարածքների: Այս առումով ևս, Եվրոպայի Խորհուրդը կարող է տալ մի շարք հանձնարարականներ:

(166) Պետական կառավարման մարմիններին ու սոցիալական բոլոր կառույցներին կոչ կանեինք միջմշակութային երկխոսությունը զարգացնել առօրյա կյանքում օգտագործվող տարածքներում՝ ելնելով հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքից: Այդպիսի տարածքներ կարելի է արարել անթիվ-անհամար եղանակներով:

(167) Պետական կառավարման մարմինները պատասխանատու են քաղաքացիական կյանքի և քաղաքային տարածքների կազմակերպման համար: Դա պետք է արվի այնպես, որպեսզի բարենպաստ պայմաններ ստեղծվեն խոսքի ազատության և ժողովրդավարական սկզբունքների հենքի վրա երկխոսության խորացման համար: Ֆիզիկական տարածքներն ու կառուցապատված գոտիներն ընկերային կյանքի կարևորագույն տարրերից են: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի այնպիսի հասարակական վայրերի նախագծմանն ու կառավարմանը, ինչպիսիք են զբոսայգիները, հրապարակները, օդանավակայաններն ու երկաթուղային կայարանները: Քաղաքային ճարտարապետներին կոչ ենք անում ստեղծել «բաց քաղաքներ», որոնք բավականաչափ տարածքներ կունենան հասարակական հավաքույթների համար: Յանկալի է, որ այդ տարածքները նախատեսված լինեն ամենատարբեր նպատակներով օգտագործման համար, այսինքն՝ օժտված լինեն ընդհանուր քաղաքացիական տարածքի զգացում և միջմշակութային հանձնառություն ծնելու ներունակությամբ:

(168) Ոչ-կառավարական կազմակերպությունները, ներառյալ կրոնական համայնքները, պետք է կարողանան կազմակերպչական նախադրյալներ ստեղծել միջմշակութային և միջկրոնական հավաքույթների համար: Մասնավոր հատվածն ու սոցիալական գործընկերները պետք է այնպես անեն, որպեսզի աշխատուժի բազմազանությունը բխումների պատճառ չդառնա, այլ ընդհակառակը՝ նպաստի ստեղծագործական համագործակցության ու փոխօգնության մթնոլորտի ձևավորմանը:

(169) Լրագրողական բարոյականության նորմերով առաջնորդվող և լրատվական գործի առանձնահատկությունների ու լրագրողների համապատասխան ուսուցման շնորհիվ պատասխանատվության զգացումով տոգորված լրատվամիջոցները կարող են միջմշակութային երկխոսության համար նպաստավոր տարածքներ տրամադրել հանրությանը: Իրենց ներքին կառուցվածքում հասարակության բազմազանությունն

արտացոլելու համար՝ զանգվածային լրատվության միջոցներին կհանձնարարեինք որդեգրել այնպիսի ինքնարուխ քաղաքականություն, որը հիմնվելով համապատասխան ուսուցողական մեխանիզմների վրա՝ կնպաստեր սոցիալապես անպաշտպան խմբերի անդամների և հասարակության մեջ թերներկայացված փոքրամասնությունների ներկայացուցիչների առաջխաղացմանն արտադրության և կառավարման բոլոր մակարդակներում՝ հաշվի առնելով նրանց մասնագիտական կարողությունները:

(170) Կարևորելով ասվածը խոսքի ազատության իրականացման տեսանկյունից՝ Եվրոպայի Խորհուրդը համարում է, որ այն սուկ հեռարձակողների խնդիրը չէ: Բոլոր լրատվամիջոցները պետք է հստակ պատկերացում ունենան առ այն, թե իրենք ինչպես կարող են բարձրաձայնել փոքրամասնությունների իրավունքները, միջմշակութային երկխոսությունն ու փոխադարձ հարգանքի անհրաժեշտությունը:

(171) Պետական կառավարման մարմիններն ու ոչ-պետական կառույցները պետք է աջակցեն մշակույթի, արվեստների զարգացմանն ու պատմական ժառանգության մասին իրազեկության բարձրացմանը, քանի որ դրանք կարող են հատկապես կարևոր տարածքներ ստեղծել երկխոսության համար: Մշակութային ժառանգությունը, դասական համարվող մշակութային միջոցառումները, «մշակութային մայրուղիները», արվեստի ժամանակակից ձևերը, ժողովրդական և փոքրոցային մշակույթը, լրատվամիջոցների և ինտերնետի օգնությամբ փոխանցվող մշակույթը բնական ճանապարհով կտրուսանցում են ընդունված սահմանագծերն ու աղերսում ամենատարբեր մշակույթներ: Արվեստներն ու մշակույթն ինքնաարտահայտման տարածք են ստեղծում պետական հաստատությունների թիկունքում՝ անհատական մակարդակում և կարող են հանդես գալ որպես միջնորդներ: Մշակութային և գեղարվեստական միջոցառումների հասարակական լայն ընդգրկումը պետք է խթանի շահագրգիռ կառույցների կողմից: Մշակութային գործունեությունը կարող է էական դերակատարություն ունենալ այս կամ այն տարածքը համատեղ օգտագործման վայր դարձնելու հարցում:

* * *

(172) Օգտագործելով 2008 թ. ապրիլի 8-ին փորձնական եղանակով կազմակերպված «Միջմշակութային երկխոսության կրոնական բաղադրիչի վերաբերյալ փոխանակում 2008»-ի խոսափողը՝ կրոնական համայնքների, քաղաքացիական հասարակության մյուս կառույցների ներկայացուցիչներին ու ներկա գտնվող փորձագետներին Եվրոպայի Խորհուրդը հնարավորություն տվեց բովանդակալից քննարկումներ ունենալ կրոնի և դավանանքի պատմության ուսուցմանն ուղղված կրթական քաղաքականության սկզբունքների և գործնական-կազմակերպչական մոտեցումների շուրջ: Փոխանակումը նաև թույլ տվեց հիշյալ խնդիրների հետ կապված այնպիսի նոր մոտեցումներ և գաղափարներ բացահայտել, որոնք մասնակիցների կողմից կարող են կիրառվել իրենց համապատասխան ոլորտներում: Համաժողովում նաև հրապարակվեցին մի շարք հանձնարարականներ Եվրոպայի Խորհրդի առաջիկա նպատակային գործունեության վերաբերյալ: 2008 թվականի կատարողականի գնահատման աշխատանքների ընթացքում կքննարկվի նաև «Փոխանակում-2008»-ի շարունակականությանն ուղղված հնարավոր հետագա միջոցառումների անցկացման հարցը:

*Միջմշակութային երկխոսության
զարգացման համար Եվրոպայի Խորհրդի
կողմից ՁԼՄ-ներին շնորհվող մրցանակը*
Եվրոպայի Խորհուրդը մտադիր է
ամենամյա մրցանակաբաշխության

(173) Եվրոպայի Խորհուրդը
կիրականացնի մի շարք նորարարական
նախաձեռնություններ զանգվածային
լրատվության միջոցների հետ:
Միջմշակութային երկխոսության

միջոցով ճանաչել հակամարտությունների նախականիսման կամ կարգավորման, ինչպես նաև փոխըմբռնման և երկխոսության զարգացման գործում զանգվածային լրատվության միջոցների ունեցած ներդրումը: ԵԽ-ը նաև մտադիր է հիմնել էլեկտրոնային տեղեկատվական ցանց՝ միջմշակութային երկխոսության ոլորտում լրատվամիջոցների ավանդը համաշխարհային հանրությանը ներկայացնելու համար:

զարգացման համար մրցանակ սահմանելուց զատ կազմակերպությունը մտադիր է միջազգային այլ հաստատությունների հետ խորհրդակցելուց հետո՝ շահագրգիռ գործընկերների հետ համատեղ ստեղծել համապատասխան մասնագետներից և կազմակերպություններից բաղկացած էլեկտրոնային ցանց, որն զբաղվելու է ճգնաժամային իրավիճակներում լրագրողների իրավունքներին պարտականություններին և աշխատանքային պայմաններին առնչվող խնդիրներով:

5.5 Միջմշակութային երկխոսությունը միջազգային հարաբերություններում

(174) Տեղական և շրջանային իշխանությունները պետք է քննության առնեն Եվրոպայի մյուս մասերում գործող համանման կազմակերպությունների հետ իրենց համագործակցության հնարավորությունը: Այս մակարդակում համագործակցությունը կարևոր է պետությունների միջև բարիդրացիական հարաբերությունների ամրապնդման առումով, ուստի հիանալի առիթ կարող է լինել միջմշակութային կապերի հաստատման համար: Տեղական և շրջանային իշխանությունները հարևան պետությունների տարածքային համայնքների և իշխանությունների հետ համատեղ կարող են ինստիտուցիոնալ հիմունքների վրա դրված կանոնավոր խորհրդակցություններ կազմակերպել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող խնդիրների շուրջ, ընդունել համատեղ որոշումներ, բացահայտել անդրսահմանային և միջտարածքային համագործակցության ճանապարհին ծառայած իրական և իրավական արգելքներն ու ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ իրավիճակի շտկման ուղղությամբ: Նրանք կարող են պայմանավորվածության գալ համագործակցության մեջ ներգրավված անձանց համար տեղերում համատեղ դասընթացների կազմակերպման շուրջ, ներառյալ լեզուների ուսուցումը:

(175) Քաղաքացիական հասարակության կառույցներն ու կրթություն իրականացնող կազմակերպությունները կարող են նպաստել Եվրոպայում և ամբողջ աշխարհում միջմշակութային երկխոսության զարգացմանը, օրինակ՝ մասնակցելով եվրոպական ոչ-կառավարական կառույցների աշխատանքներին, անդրսահմանային գործընկերությանն ու հատկապես երիտասարդության համար կազմակերպվող փոխանակման միջոցառումներին: Եվրոպայի Խորհրդի պես միջազգային հաստատությունների պարտքն է այս գործում սատար կանգնել քաղաքացիական հասարակությանն ու կրթություն իրականացնողներին:

(176) Պետք է քաջալերել զանգվածային լրատվության միջոցներին՝ տարածաշրջանային, ազգային և համաեվրոպական մակարդակով մշակել և իրականացնել այնպիսի համատեղ ծրագրեր, որոնք արժեքավոր կհամարվեն անհանդուրժողականության դեմ պայքարում համապատասխան հանրային կարծիքի ձևավորման և միջհամայնքային հարաբերությունների բարելավման առումով:

* * *

(177) Եվրոպայի Խորհուրդը կսերտացնի և կընդլայնի համագործակցությունը միջմշակութային երկխոսության բնագավառում ակտիվ գործունեության ծավալող այլ

կազմակերպությունների հետ, ներառյալ ՅՈՒՆԵՍԿՈ-ն, «Քաղաքակրթությունների դաշինք» նախաձեռնությունը, ԵԱՀԿ-ն, Եվրոպական Միությունը, մշակույթների միջև երկխոսությանն աջակցող Աննա Լինդ եվրամիջերկրածովյան հիմնադրամը, ինչպես նաև տարածաշրջանային այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են Արաբական պետությունների լիգան և նրա գիտակրթական և մշակութային կազմակերպությունը՝ ԱԼԳՄԿ-ը, որոնք ներկայացնում են Եվրոպայի հետ բազմաթիվ պատմական աղերսներ և ուրույն մշակութային ավանդույթներ ունեցող մի տարածաշրջան: Ապավինելով իր չափորոշիչներին և արժեքներին՝ Եվրոպայի Խորհուրդը կձգտի առանձին նախագծերի վրա աշխատելով միջմշակութային երկխոսություն զարգացնել նաև այնպիսի հաստատությունների հետ, ինչպիսիք են Իսլամական կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունը (ԻԳՄԿ) և Իսլամական պատմության արվեստների ու մշակույթի գիտահետազոտական կենտրոնը (ԻՊԱՄԳԿ): Տարածաշրջանում այդ համագործակցության նպատակն է լինելու Եվրոպայի և հարևան շրջանների, հատկապես՝ Միջերկրական ծովի հարավային ափի երկրների, Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի միջև շփումների խթանումը:

(178) Առաջիկա ամիսներին Եվրոպայի Խորհուրդը հանդես կգա այս և այլ գործընկերների հետ համագործակցության սերտացմանն ուղղված մի շարք նոր նախաձեռնություններով: Գործիքներից մեկն է լինելու «Ֆարոյի բաց հարթակ»-ը, որը տարբեր հաստատությունների միջև միջմշակութային երկխոսության խորացման նպատակով հիմնադրվեց 2005 թ. Եվրոպայի Խորհրդի կողմից՝ ՅՈՒՆԵՍԿՈ-յի հետ համագործակցության արդյունքում:

«Ֆարոյի բաց հարթակ»-ի ընդարձակումն ու ամրապնդումը
ՅՈՒՆԵՍԿՈ-յի հետ խորհրդակցելով՝ Եվրոպայի Խորհուրդը կզարգացնի «Ֆարոյի բաց հարթակ»-ի ներգործ կարողությունները միջմշակութային երկխոսության ուղղությամբ գործադրվող միջազգային ջանքերի համադասման բնագավառում:

(179) Այս համատեքստում իրականացվելու են նաև հետևյալ առաջնահերթ գործողությունները.

- (180) 2008 թվականը Եվրոպական Միության կողմից հռչակվել է որպես Միջմշակութային երկխոսության համաեվրոպական տարի: Միջմշակութային երկխոսության մասին տեղեկատվական զեկույցը և միջմշակութային երկխոսության կրոնական բաղադրիչին վերաբերող «Փոխանակում-2008» փորձնական միջոցառումը Եվրոպայի Խորհրդի երկու խոշորագույն ներդրումներն են Միջմշակութային երկխոսության համաեվրոպական տարվա շրջանակում:³⁷ Երկարաժամկետ քաղաքականության հեռանկարների շուրջ դիմամիկ քննարկումներին և գործողությունների ծրագրին Եվրոպայի Խորհուրդն իր նպաստն է բերում նաև այլ միջոցառումների օգնությամբ, ինչպես ասենք՝ 2008 թ. խորականության դեմ ուղղված քարոզարշավը, «Միջմշակութային քաղաքներ» նախագիծը, միջմշակութային երկխոսության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ընդունած նախադեպային վճիռների հրապարակումը, Օսլոյի ժողովրդավարական քաղաքացիության և միջմշակութային կրթության եվրոպական կենտրոնը:
- (181) Եվրոպայի Խորհուրդը գնահատում է «Հյուսիս-Հարավ Կենտրոն»-ի ներդրումն ու նշանակալից դերակատարությունը: Այն նպաստում է ոչ միայն կառավարությունների, այլև խորհրդարանականների, տեղական ու շրջանային

³⁷ Այս նախաձեռնությունները նաև հանդիսանում են միջմշակութային երկխոսության և մշակութային բազմազանության ոլորտում Եվրոպական Միության և Եվրոպայի Խորհրդի միջև ստորագրված փոխըմբռնման հուշագրի կենսագործման կոնկրետ օրինակներ:

իշխանությունների և քաղաքացիական հասարակության միջև շփումներին: Նրա ծրագրային գերակայություններից են կրթությունը, երիտասարդությունը, մարդու իրավունքները, ժողովրդավարական կառավարումն ու միջմշակութային երկխոսությունը: Կենտրոնը կարևոր տարր է ներմուծում միջմշակութային ուսուցման, տարբեր մայրցամաքների ներսում և նրանց միջև փոխըմբռնման ու քաղաքական երկխոսության ուղղությամբ գործադրվող միջազգային ջանքերում:

- (182) 2008 թ. կնախաձեռնվի «Արվեստագետներ հանուն երկխոսության» նշանաբանով մի նոր ծրագիր՝ նվիրված մշակույթի և պատմական ժառանգության հարցերին, որի գլխավոր նպատակն է լինելու արվեստագետների ու մշակույթի գործիչների միջև միջմշակութային երկխոսության ամրապնդումը միջերկրածովյան տարածաշրջանում:
- (183) Վենետիկի հանձնաժողովը կշարունակի համագործակցել սահմանադրական դատարանների և համանման մարմինների հետ Աֆրիկայում, Ասիայում, Հյուսիսային և Հարավային Ամերիկաներում, ինչպես նաև արաբական երկրներում: Այն գործնական քայլերի և սահմանադրական ժառանգության սկզբունքների վրա հիմնված միջմշակութային երկխոսության լավ օրինակ է մատուցում:
- (184) Տեղական և շրջանային իշխանությունների կոնգրեսը մտադիր է շարունակել աշխատանքներն իր միջերկրածովյան գործընկերների հետ, մասնավորապես՝ Իսրայել-Պաղեստին շփումների և արաբական քաղաքների հետ համագործակցության շրջանակներում այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են տեղական մակարդակում ճիշտ կառավարումն ու արտագաղթի հետ կապված մարտահրավերները:

6. *Առաջիկա անելիքները*

(185) Մույն տեղեկատվական զեկույցի նպատակն է հստակ ուղեգիծ սահմանել միջմշակութային երկխոսության համար: Այդուհանդերձ, զեկույցը չի կարող մատուցել գործողությունների մանրամասն ծրագիր, քանի որ նա երկարուժիգ ճանապարհի քայլերից մեկն է սուկ: Նրանից բխող եզրակացություններն ու հանձնարարականները ենթակա են վերահսկման և, անհրաժեշտություն դեպքում, կարող են համապատասխանեցվել այլ շահագրգիռ կողմերի հետ երկխոսության խնդիրներին: Ձեկույցում տեղ գտած ցուցումներն ու գործնական կողմնորոշիչները պետք է ինչպես հարկն է կատարվեն և գնահատվեն:

(186) Եվրոպայի Խորհուրդը մյուս բոլոր շահագրգիռ կողմերին կոչ է անում շարունակել այն, ինչ երբեմն անվանում են «Տեղեկատվական զեկույցի գործընթաց», ինչի շնորհիվ Եվրոպայի Խորհուրդը կարողացել է շփումներ հաստատել անթիվ-անհամար գործընկերների հետ՝ միջազգային հաստատություններից մինչև տեղական մակարդակի կառույցները: Մեր բոլոր գործընկերներին խնդրում ենք շարունակել իրազեկել մեզ հետագա գործողությունների մասին՝ առաջարկելով նորանոր ծրագրեր և նախագծեր, ինչպես նաև պարբերաբար ահազանգել միջմշակութային երկխոսությանը սպառնացող վտանգների մասին:

(187) Միջմշակութային երկխոսությունն անչափ կարևոր նշանակություն ունի արագ փոփոխվող Եվրոպայի համար նոր սոցիալական և մշակութային մոդելի կառուցման առումով, ինչը մեր մշակութային տեսանկյունից բազմաթիվ հասարակություններում

ապրող յուրաքանչյուր անհատի թույլ կտա կատարելապես օգտվել իր իրավունքներից և հիմնարար ազատություններից: Այս նորաստեղծ մոդելը ենթադրում է շարունակական աշխատանք և միահամուռ ջանքեր: Այն նաև ենթադրում է բոլոր մակարդակներում պետական կառավարման մարմինների, ոչ-կառավարական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կառույցների առավել լայն պատասխանատվություն:

(188) Եվրոպայի Խորհուրդն այս տեղեկատվական զեկույցը ներկայացնում է որպես հաստատուն քայլերով առաջ ընթացող միջազգային քննարկումների շարունակություն: Հարաճուն մշակութային բազմազանության պայմաններում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պահպանմամբ համատեղ ապրելու խնդիրը դարձել է մեր ժամանակների հրամայականը և դեռ երկար տարիներ կմնա այդպիսին:

Ստրասբուրգ, մայիս 2008 թ.

Հավելված 1

Միջմշակութային երկխոսության վերաբերյալ Եվրոպայի Խորհրդի կոնվենցիաների, հռչակագրերի, հանձնարարականների և այլ տեղեկատվական նյութերի ցանկը³⁸

Եվրոպայի Խորհրդի կոնվենցիաները

Կոնվենցիա (ղաշնագրի բացման տարեթիվը, վավերացումների, անդամակցությունների և ստորագրումների ուղղությամբ առաջընթացը 2008 թ. ապրիլի դրությամբ)	Վավերացում/ անդամակցում	Ստորագրված՝ առանց վավերացման
Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա (1950)	47	0
Եվրոպական մշակութային կոնվենցիա (1954)	49	0
Արտագնա աշխատողների իրավական կարգավիճակի մասին եվրոպական կոնվենցիա (1977)	11	4
Տարածքային համայնքների կամ իշխանությունների միջև անդրսահմանային համագործակցության մասին եվրոպական շրջանակային կոնվենցիա (1980)	36	2
Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա (1985)	43	1
Անդրսահմանային հեռուստատեսության մասին եվրոպական կոնվենցիա (1989)	32	7
Վերանայված սոցիալական ապահովության եվրոպական կանոնագիրը (1990)	0	14
Տեղական մակարդակում հասարակական կյանքին օտարերկրացիների մասնակցության մասին կոնվենցիա (1992)	8	5
Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիա (1992)	23	10
Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիա (1995)	39	4
Եվրոպական սոցիալական խարտիա (1961) և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա (1996)	39	8
Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթության որակավորման աստիճանների ճանաչման մասին կոնվենցիա (1997)	47	4
Ազգային պատկանելության մասին եվրոպական կոնվենցիա (1997)	16	11
Երիտասարդների անդրսահմանային երկարաժամկետ կամավոր ծառայության մասին եվրոպական կոնվենցիա (2000)	1	8
Կիրեռահանցավորության մասին կոնվենցիա (2001)	22	22
Ահաբեկչության կանխարգելման մասին Եվրոպայի		

³⁸ Ծանոթագրություն. 1980 թվականից հետո ընդունված հռչակագրերը, հանձնարարականներն ու բանաձևերը թվարկված են ըստ ժամանակագրական կարգի: Բոլոր տեքստերին կարելի է ծանոթանալ Եվրոպայի Խորհրդի կայքէջում՝ www.coe.int:

Խորհրդի կոնվենցիան (2005)	11	31
Մշակութային ժառանգության հասարակական նշանակության մասին Եվրոպայի Խորհրդի շրջանակային կոնվենցիան (2005)	3	10

Գազաթաժողովների, նախարարական համաժողովների և Նախարարների կոմիտեի հայտարարություններն ու հռչակագրերը

- «Անհանդուրժողականության՝ որպես ժողովրդավարության համար սպառնալիքի մասին հայտարարություն»՝ ընդունված 1981թ. մայիսի 14-ին Նախարարների կոմիտեի կողմից
- «Կանանց և տղամարդկանց իրավահավասարության մասին հռչակագիր»՝ ընդունված 1988 թ. նոյեմբերի 16-ին Նախարարներ կոմիտեի կողմից
- «Բազմամշակույթ հասարակության և եվրոպական մշակութային ինքնության մասին հայտարարություն»՝ ընդունված 1990թ. ապրիլին մշակութային հարցերի համար պատասխանատու եվրոպական նախարարների 6-րդ համաժողովում. Պալերմո, Իտալիա
- «Վիեննայի հռչակագիր»՝ ընդունված 1993 թ. հոկտեմբերին Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների և կառավարությունների ղեկավարների (առաջին) գազաթաժողովում. Վիեննա
- Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների և կառավարությունների ղեկավարների երկրորդ գազաթաժողովի «Ամփոփիչ հայտարարությունը» և «Գործողությունների ծրագիրը»՝ ընդունված 1997 թ. նոյեմբերին Ստրասբուրգում
- Եվրոպական լեզվական փաթեթի վերաբերյալ թիվ 1 բանաձև՝ ընդունված 1997 թ. հունիսի 22-24-ին Քրիստիանսենդում (Նորվեգիա) կայացած կրթության նախարարների մշտական համաժողովի 19-րդ նստաշրջանում
- «Բուդաբեշտյան հռչակագիր» (Հանուն բաժանարար գծերից զերծ ավելի մեծ Եվրոպայի)՝ ընդունված 1999 թ. մայիսի 7-ին Նախարարների կոմիտեի կողմից
- Եվրոպական լեզվական փաթեթի վերաբերյալ թիվ 2 բանաձև՝ ընդունված 2000 թ. հոկտեմբերի 15-17-ին Կրակովում (Լեհաստան) կայացած կրթության նախարարների մշտական համաժողովի 20-րդ նստաշրջանում
- «Մշակութային բազմազանության մասին հայտարարություն»՝ ընդունված 2000 թ. դեկտեմբերի 7-ին Նախարարների կոմիտեի կողմից
- «Հելսինկյան հռչակագիր»՝ ընդունված 2002 թ. սեպտեմբերին արտագաղթի հարցերի համար պատասխանատու նախարարների 7-րդ համաժողովի կողմից. Հելսինկի
- «Միջմշակութային երկխոսության և հակամարտությունների կանխարգելման մասին հայտարարություն»՝ ընդունված 2003 թ. հոկտեմբերին մշակույթի հարցերի համար պատասխանատու եվրոպական նախարարների համաժողովի կողմից. Օպատիյա (Խորվաթիա)
- Եվրոպայի Խորհրդի երիտասարդական քաղաքականության վերաբերյալ (2003)7 բանաձև՝ ընդունված 2003 թ. հոկտեմբերի 29-ին Նախարարների կոմիտեի կողմից
- «Նոր եվրոպական համատեքստում միջմշակութային կրթության մասին հայտարարություն»՝ ընդունված 2003 թ. նոյեմբերի 23-ին կրթության համար պատասխանատու եվրոպական նախարարների համաժողովի կողմից. Աթենք (Հունաստան)
- «Կանանց և տղամարդկանց դերը հակամարտությունների կանխարգելման, խաղաղության ամրապնդման և հետբախումնային ժողովրդավարական գործընթացներում. գեղեցիկին հեռանկար», բանաձև՝ ընդունված կանանց և տղամարդկանց իրավահավասարությանը նվիրված նախարարական 5-րդ համաժողովում. 2003 թ., հունվար 22-23, Սկոպյե

- Սոցիալական համախմբվածության վերանայված ռազմավարություն՝ ընդունված 2004 թ. մարտի 31-ին Նախարարների կոմիտեի կողմից
- «Վրոցլավյան հայտարարություն»՝ ընդունված 2004 թ. դեկտեմբերին մշակույթի, կրթության, երիտասարդության և սպորտի հարցերի համար պատասխանատու եվրոպական նախարարների կողմից. Վրոցլավ (Լեհաստան)
- «Վարշավյան հայտարարություն» և «Գործողությունների ծրագիր»՝ ընդունված 2005 թ. մայիսին Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների և կառավարությունների ղեկավարների երրորդ գագաթաժողովում. Վարշավա (Լեհաստան)
- «Մարդկային արժանապատվություն և սոցիալական համախմբվածություն. երիտասարդական քաղաքականությունն ընդդեմ բռնության» նշանաբանով ամփոփիչ հայտարարություն՝ ընդունված 2005 թ. երիտասարդության հարցերի համար պատասխանատու եվրոպական նախարարների կողմից. Բուդապեշտ (Հունգարիա)
- «Միջմշակութային երկխոսության զարգացման ոլորտում Եվրոպայի Խորհրդի ռազմավարության մասին Ֆարոյի հռչակագիրը»՝ ընդունված 2005 թ. հոկտեմբերին մշակույթի հարցերի համար պատասխանատու եվրոպական նախարարների համաժողովի կողմից. Ֆարո (Պորտուգալիա)
- Փոխնախարարների 1000-րդ հանդիպման կապակցությամբ 2007 թ. հունիսին Բելգրադում Նախարարների կոմիտեի ընդունած հայտարարությունը. «Մեկ Եվրոպա՝ մեր Եվրոպան»
- Կրթության եվրոպական նախարարների մշտական համաժողովի ընդունած ամփոփիչ հայտարարությունը. «Առավել մարդասիրական և ներառական Եվրոպայի կառուցում. կրթական քաղաքականության դերը», 2007 թ. մայիս 4-5, Ստամբուլ
- «Վալենսիայի հայտարարությունը»՝ ընդունված 2007 թ. հոկտեմբերին տեղական և տարածքային կառավարման համար պատասխանատու նախարարների համաժողովի կողմից. Վալենսիա (Իսպանիա)
- «Միջմշակութային երկխոսության խթանումը և Եվրոպայի Խորհրդի տեղեկատվական զեկույցը»՝ ընդունված 2007 թ. նոյեմբերին մշակույթի հարցերի համար պատասխանատու նախարարների տարածաշրջանային ոչ-պաշտոնական համաժողովի կողմից
- «Նորարարության և ճիշտ կառավարման ռազմավարությունը տեղական մակարդակում»՝ ընդունված 2008 թ. մարտին Նախարարների կոմիտեի կողմից

Նախարարների կոմիտեի հանձնարարականները

- Հ (81)18 Մունիցիպալ մակարդակում մասնակցության մասին
- Հ (82)9 Դպրոցների Եվրոպական Օրվա մասին
- Հ (82)18 Ժամանակակից լեզուների մասին
- Հ (83)1 Քաղաքացիություն չունեցող քոչվորների և չպարզված ազգությամբ քոչվորների մասին
- Հ (84)7 Գաղթականների համար իրենց մայր երկրի հետ մշակութային կապերի պահպանման և ժամանցի հնարավորությունների ստեղծման մասին
- Հ (84)9 Երկրորդ սերնդի գաղթականների մասին
- Հ (84)13 Օտարերկրյա ուսանողների կացության մասին
- Հ (84)17 Չանգվածային լրատվության միջոցներում կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ
- Հ (84)18 Միջմշակութային փոխըմբռնման գծով, մասնավորապես՝ գաղթականության համատեքստում կրթություն իրականացնող ուսուցիչների վերապատրաստման մասին

- Հ (84)21 Փախստականների կողմից հյուրընկալող երկրի քաղաքացիության ձեռքբերման մասին
- Հ (85)2 Մեռային խտրականությունից իրավական պաշտպանության մասին
- Հ (85)7 Դպրոցում մարդու իրավունքների վերաբերյալ գիտելիքների մատուցման մասին
- Հ (85)21 Կրթության և գիտության ոլորտի մասնագետների շարժի մասին
- Հ (86)8 Մայր երկրի ընտրությունների ժամանակ հյուրընկալող պետությունում Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների քաղաքացիների ընտրության իրավունքի օգտագործման մասին
- Հ (86)17 Արտերկրում փոխհամաձայնեցված մշակութային միջոցառումների իրականացման մասին
- Հ (88)6 Գաղթականների ընտանիքից սերող երիտասարդների շրջանում հանդիպող պատանեկան հանցավորության դեպքերի նկատմամբ հասարակության վերաբերմունքի մասին
- Հ (88)14 Գաղթականների բնակարանային ապահովման մասին
- Հ (90)4 Սեքսուալ բնույթի արտահայտությունների դեմ պայքարի մասին
- Հ (90)22 Մի շարք սոցիալապես անպաշտպան խմբերի անդամների հոգեկան առողջության պաշտպանության մասին
- Հ (92)12 համայնքային հարաբերությունների մասին
- Հ (92)10 Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց իրավունքների իրականացման մասին
- Հ (92)11 Երիտասարդների սոցիալական և մասնագիտական ինտեգրացիայի մասին
- Հ (92)19 Ռասիստական բռնադատությանը տեսահամակարգչային խաղերի մասին
- Հ (95)7 Բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում ուղեղների արտահոսքի մասին
- Հ (95)8 Գիտակրթական ոլորտի շարժունակության մասին
- Հ (97)3 Երիտասարդների մասնակցության և քաղաքացիական հասարակության ապագայի մասին
- Հ (97)7 Տեղական մակարդակում հանրային ծառայությունների և սպառողների մասին
- Հ (97)20 «Ատելություն սերմանող» ելույթների մասին
- Հ (97)21 Չանգվածային լրատվության միջոցների և հանդուրժողականության մշակույթի մասին
- Հ (98)3 Բարձրագույն կրթության մատչելիության մասին
- Հ (98)6 Ժամանակակից լեզուների մասին
- Հ (99)1 Լրատվական բազմակարծության խրախուսման միջոցառումների մասին
- Հ (99)2 Միջնակարգ կրթության մասին
- Հ (99)9 Մոցիալական համախմբման ամրապնդման գործում սպորտի դերի մասին
- Հ (2000)1 Մշակույթի բնագավառում տարածքային համայնքների կամ իշխանությունների միջև անդրսահմանային համագործակցության խթանման մասին
- Հ (2000)4 Եվրոպայում գնչու երեխաների կրթության մասին
- Հ (2000)5 Առողջապահության ոլորտի կառավարման գործընթացներում քաղաքացիների և հիվանդների մասնակցության համար համապատասխան կառույցների ձևավորման մասին
- Հ (2001)6 Սպորտի բնագավառում ռասիզմի, ալլատյացության և ռասայական անհանդուրժողականության դրսևորումների կանխարգելման մասին
- Հ (2001)10 Ոստիկանական էթիկայի եվրոպական կանոնների մասին

- Հ (2001)15 21-րդ դարի Եվրոպայում պատմության ուսուցման մասին
- Հ (2001)17 Գնչուների և արտագնա աշխատողների սոցիալ-տնտեսական պայմանների և զբաղվածության կարգավիճակի բարելավումը
- Հ (2001)19 Տեղական համայնքների հասարակական կյանքին քաղաքացիների մասնակցության մասին
- Հ (2002)4 Ընտանիքների վերամիավորման նպատակով ընդունված անձանց իրավական կարգավիճակի մասին
- Հ (2002)5 Բռնությունից կանանց պաշտպանության մասին
- Հ (2002)12 Ժողովրդավարական քաղաքացիության ուսուցման մասին
- Տեղական համայնքների և տարածաշրջանների հասարակական կյանքում երիտասարդների մասնակցության մասին եվրոպական խարտիա (2003թ. վերանայված)
- Հ (2003)2 Անբարենպաստ պայմաններ ունեցող քաղաքային շրջաններում քաղաքին ծառայությունների մատուցումը
- Հ (2003)3 Քաղաքական-հասարակական կյանքում և պետական կառավարման ոլորտում կանանց և տղամարդկանց համաչափ մասնակցության մասին
- Հ (2003)6 Եվրոպական բոլոր երկրներում երեխաների ու երիտասարդների ֆիզիկական և մարզական դաստիարակության բարելավման մասին
- Հ (2003)8 Երիտասարդների ոչ-պետական կրթության/ուսումնառության խթանման և ճանաչման մասին
- Հ (2003)9 Թվային հեռարձակման ժողովրդավարական և սոցիալական աջակցության միջոցառումների մասին
- Հ (2004)2 Պետական կառավարման համակարգում քաղաքացիություն չունեցող անձանց զբաղվածության մատչելիության մասին
- Հ (2004)4 Համալսարանական կրթության և մասնագիտական ուսուցման համակարգում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դասավանդման մասին
- Հ (2004)13 Տեղական և տարածաշրջանային կյանքում երիտասարդների մասնակցության մասին
- Հ (2004)14 Եվրոպայում արտագնա աշխատողների տեղաշարժի և ճամբարների մասին
- Հ (2005)2 Տեղական համայնքների կամ իշխանությունների անդրսահմանային և միջտարածքային համագործակցության խոչընդոտների վերացման և օրինակելի գործելակերպի արմատավորման մասին
- Հ (2005)3 Սահմանամերձ շրջաններում հարևան ժողովուրդների լեզվի ուսուցման մասին
- Հ (2005)4 Եվրոպայում գնչուների և արտագնա աշխատողների բնակարանային պայմանների բարելավման մասին
- Հ (2005)8 Սպորտի բնագավառում ճիշտ կառավարման մասին
- Հ (2006)1 Երիտասարդական քաղաքականության մշակման գործընթացում ազգային երիտասարդական խորհուրդների դերի մասին
- Հ (2006)2 Համաեվրոպական բանտային կանոնների մասին
- Հ (2006)3 Մշակութային ինքնադրսևորումների բազմազանության պահպանման և խթանման վերաբերյալ ՅՈՒՆԵՍԿՈ-յի կոնվենցիայի մասին
- Հ (2006)5 Անաշխատունակ անձանց իրավունքների պաշտպանությանն ու հանրային կյանքում նրանց լիակատար մասնակցության ապահովմանը, ինչպես նաև 2006-2015 թթ. անաշխատունակ կենսամակարդակի բարձրացմանն ուղղված Եվրոպայի Խորհրդի գործողությունների ծրագրի մասին
- Հ (2001)6 Սպորտում ռասիզմի, այլատյացության և ռասայական անհանդուրժողականության դրսևորումների կանխարգելման մասին

- Հ (2006)9 Ներգաղթած ուսանողների ընդունման, իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև մայր երկրի հետ նրանց կապի մասին
- Հ (2006)10 Եվրոպայում գնչուների և արտագնա աշխատողների համար առողջապահական ծառայությունների մատչելիության մասին
- Հ (2006)12 Նոր տեղեկատվական և հաղորդակցական միջավայրում երեխաների մասնակցության մասին
- Հ (2006)14 Քաղաքացիության և հասարակական կյանքում երիտասարդների մասնակցության մասին
- Հ (2006)17 Անցումային կարգավիճակ ունեցող հիվանդանոցների մասին. նոր համասնություն ինստիտուցիոնալ և համայնքային ծառայությունների միջև
- Հ (2006)18 Առողջապահական ծառայությունները բազմամշակույթ հասարակության մեջ
- ՆԿ/Հ(2007)2 Չանգվածային լրատվամիջոցներում բազմակարծության և լրատվական բովանդակության բազմազանության մասին
- ՆԿ/Հ(2007)3 Տեղեկատվական հասարակության մեջ պետական լրատվամիջոցների դերի մասին
- ՆԿ/Հ(2007)4 Տարածքային և շրջանային հանրային ծառայությունների մասին
- ՆԿ/Հ(2007)6 Բարձրագույն կրթության և գիտահետազոտական գործունեության համար պետության պատասխանատվության մասին
- ՆԿ/Հ(2007)7 Օրինակելի կառավարման մասին
- ՆԿ/Հ(2007)9 Խնամակալ չունեցող անչափահաս գաղթականներին վերաբերող կենցաղային նախագծերի մասին
- ՆԿ/Հ(2007)10 Համագործակցման և իրենց մայր երկրում զարգացման համար աշխատող գաղթականների մասին
- ՆԿ/Հ(2007)11 Նոր տեղեկատվական և հաղորդակցական միջավայրում խոսքի ազատության և տեղեկատվության խթանման մասին
- ՆԿ/Հ(2007)13 Կրթության ոլորտում գենդերային քաղաքականության մասին
- ՆԿ/Հ(2007)17 Կանանց և տղամարդկանց իրավահավասարության նկատմամբ կիրառելի չափանիշների և մեխանիզմների մասին
- ՆԿ/Հ(2008)4 Ներգաղթյալների կամ գաղթական անցյալ ունեցող անձանց երեխաների ինտեգրացիայի խրախուսման մասին
- ՆԿ/Հ(2008)5 Եվրոպայում գնչուների և արտագնա աշխատողների նկատմամբ կիրառելի քաղաքականության մասին
- ՆԿ/Հ(2008)6 Համացանցային ֆիլտրերի օգտագործման ժամանակ խոսքի և տեղեկատվության ազատության պաշտպանության միջոցառումների իրականացման մասին

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի հանձնարարականներն ու բանաձևերը

- Բանաձև 807 (1983) Համաեվրոպական կրթական համագործակցության մասին
- Բանաձև 885 (1987) Եվրոպական մշակույթի մեջ հրեաների ունեցած ներդրման մասին
- Հանձնարարական 1093 (1989) Գաղթականների երեխաների կրթության մասին
- Հանձնարարական 1111 (1989) Կրթության համաեվրոպական նշանակության մասին
- Հանձնարարական 1162 (1991) Եվրոպական մշակույթի մեջ իսլամական քաղաքակրթության ներդրման մասին
- Հանձնարարական 1202 (1992) Ժողովրդավարական հասարակության մեջ կրոնական հանդուրժողականության մասին
- Հանձնարարական 1178 (1992) Աղանդների և կրոնական նոր շարժումների մասին

- Հանձնարարական 1281 (1995) Կրթության բնագավառում կանանց և տղամարդկանց իրավահավասարության մասին
- Հանձնարարական 1283 (1996) Պատմության և Եվրոպայում պատմության ուսուցման մասին
- Հանձնարարական 1291 (1996) Հուդայական մշակույթի մասին
- Հանձնարարական 1353 (1998) Փոքրամասնությունների համար բարձրագույն կրթության մատչելիության մասին
- Հանձնարարական 1383 (1998) Լեզվական բազմազանության մասին
- Հանձնարարական 1396 (1999) Կրոնի և ժողովրդավարության մասին
- Հանձնարարական 1412 (1999) Աղանդների անօրինական գործունեության մասին
- Հանձնարարական 1539 (2001) Լեզուների համաեվրոպական տարվա մասին
- Բանաձև 1278 (2002) Կրոնի մասին Ռուսաստանի օրենքի առնչությամբ
- Բանաձև 1309 (2002) Ֆրանսիայում կրոնի ազատության և կրոնական փոքրամասնությունների մասին
- Հանձնարարական 1556 (2002) Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում կրոնի և ընթացիկ փոփոխությունների մասին
- Հանձնարարական 1598 (2003) Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններում նշանային լեզուների պաշտպանության մասին
- Հանձնարարական 1620 (2003) Եվրոպական բարձրագույն կրթության ոլորտում Եվրոպայի Խորհրդի ներդրման մասին
- Հանձնարարական 1652 (2004) Փախստականների և տեղահանված անձանց կրթության մասին
- Հանձնարարական 1688 (2004) Սփյուռքի մշակույթների մասին
- Բանաձև 1437 Արտագաղթի և ինտեգրացիայի մասին. մարտրահավեր և պատեհություն Եվրոպայի համար (2005)
- Հանձնարարական 1687 (2005) Մշակույթի միջոցով ահաբեկչության դեմ պայքարի մասին
- Հանձնարարական 1693 (2005) Պետությունների և կառավարությունների ղեկավարների երրորդ գագաթաժողովին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի բերած նպաստի մասին
- Հանձնարարական 1720 (2005) Կրթության և կրոնի մասին
- Բանաձև 1464 (2005) Եվրոպայում կանանց և կրոնի մասին
- Բանաձև 1510 (2006) Խոսքի ազատության և կրոնական հավատալիքների նկատմամբ հարգանքի մասին
- Հանձնարարական 1753 (2006) Եվրոպայի Խորհրդի արտաքին հարաբերությունների մասին
- Հանձնարարական 1762 (2006) Կրթության և գիտության ոլորտում ազատության և համալսարանների ինքնուրույնության մասին
- Հանձնարարական 1804 (2007) Պետության, կրոնի, աշխարհիկ կեցվածքի և մարդու իրավունքների մասին
- Բանաձև 1563 (2007) Եվրոպայում հակասեմիտականության դեմ պայքարի մասին
- Հանձնարարական 1805 (2007) Կրոնական հողի վրա կատարվող սրբապղծության, կրոնական վիրավորանքների և ատելության դրսևորումների մասին
- Հանձնարարական 1605 (2008) և Բանաձև 1831 (2008). Ծայրահեղականության հետ բախվող եվրոպական մահմեդական համայնքների մասին

Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի հանձնարարականները, բանաձևերն ու հայտարարությունները

- Թիվ 236 բանաձևը Եվրոպայում բազմամշակութային ինտեգրացիայի ոլորտում իրականացվող մունիցիպալ քաղաքականության մասին, Ֆրանկֆուրտյան հռչակագիր (1992)
- Թիվ 128 հանձնարարականը տարածքների և շրջանների հասարակական կյանքում երիտասարդների մասնակցության մասին վերանայված եվրոպական խարտիայի վերաբերյալ (2003)
- Հայտարարություն. «Օտարերկրացիների ինտեգրացիան և մասնակցությունը եվրոպական քաղաքներում», Շտուտգարտ (Գերմանիա), սեպտեմբերի 15-16, 2003 թ.
- Թիվ 165 հանձնարարականը մարդկային էակների առքուվաճառքի և սեռական շահագործման դեմ պայքարի մասին. քաղաքների և շրջանների դերը (2005)
- Թիվ 170 հանձնարարականը միջմշակութային և միջդավանանքային երկխոսության մասին. տարածքային իշխանությունների նախաձեռնություններն ու պատասխանատվությունը (2005)
- Թիվ 173 հանձնարարականը տեղական զանգվածային լրատվության միջոցների և անդրսահմանային համագործակցության մասին (2005)
- Թիվ 177 հանձնարարականը հեռավոր քաղաքային շրջանների մշակութային ինքնության մասին. տեղական և շրջանային իշխանությունների դերը (2005)
- Թիվ 194 (2006) հանձնարարականը գաղթականների համար սոցիալական իրավունքների դիտարկման և իրավունքների դիտարկման մասին. տեղական և շրջանային իշխանությունների դերը (2006)
- Թիվ 197 հանձնարարականը Եվրոպայում քաղաքային անվտանգության մասին (2006)
- Թիվ 207 հանձնարարականը սոցիալական համախմբվածության ցուցիչների զարգացումը. տեղական և շրջանային մակարդակում փոխհամաձայնեցված մոտեցում (2007)
- Թիվ 209 հանձնարարականը սերունդների միջև համագործակցության և մասնակցային ժողովրդավարության մասին (2007)
- Թիվ 211 հանձնարարականը լեքուհիների, արվամուլների երկսեռականների և վերսեռականների հավաքույթների և ինքնարտահայտման ազատության մասին (2007)
- Թիվ 221 հանձնարարականը միջմունիցիպալ համագործակցության ինստիտուցիոնալ հենքի մասին (2007)
- Թիվ 222 հանձնարարականը տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուների ուսուցման մասին (2007)
- Թիվ 250 հանձնարարականը սպորտի միջոցով ինտեգրացիայի մասին (2008)

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի (ՌԱՊԵՀ) հանձնարարականներն ու հայտարարությունները

- Թիվ 1. Ռասիզմի, ալյատյացության, հակասեմիտականության և անհանդուրժողականության դեմ պայքարի մասին (1996)
- Թիվ 2. Ազգային մակարդակում ռասիզմի, ալյատյացության, հակասեմիտականության և անհանդուրժողականության դեմ պայքարում մասնագիտացած մարմինների մասին (1997)
- Թիվ 3. Գնչուների դեմ ուղղված ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի մասին (1998)

- Թիվ 4. Հավանական զոհերի տեսանկյունից խտրականության և ռասիզմի ազդեցության և ընկալման վերաբերյալ ազգային ուսումնասիրությունների մասին (1998)
- Թիվ 5. Մահմեդականների նկատմամբ անհանդուրժողականության և խտրականության դրսևորումների դեմ պայքարի մասին (2000)
- Թիվ 6. Ինտերնետային համացանցով ռասիզմ, ալլատյացություն և հակասեմիտականություն սերմանող նյութերի տարածման դեմ պայքարի մասին (2000)
- Թիվ 7. Ռասիզմի և ռասայական խտրականության դեմ պայքարին վերաբերող ազգային օրենսդրության մասին (2002)
- Թիվ 8. Ռասիզմի և ահաբեկչության դեմ պայքարի համատեղման մասին (2004)
- Թիվ 9. Հակասեմիտականության դեմ պայքարի մասին (2004)
- Քաղաքական ելույթներում ռասիզմի, ալլատյացության և հակասեմիտականության տարրերի օգտագործման մասին հայտարարություն (2005)
- Թիվ 10. Դպրոցում ռասիզմի և ռասայական խտրականության դեմ պայքարի մասին (2007)
- Թիվ 11. Ոստիկանական գործունեության մեջ ռասիզմի և ռասայական խտրականության դեմ պայքարի մասին (2007)

Հավելված 2

Հապավումների ցանկ

ԱԼԳՄԿ	Արաբական լիգայի գիտակրթական և մշակութային կազմակերպություն
ՌԽՎԿ ՌԱՊԵՀ	Ռ-ասայական խտրականության վերացման կոմիտե Ռ-ասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողով
ՀԻԳ ՅՈՒՆԵՍԿՈ	Հիմնարար իրավունքների գործակալություն ՄԱԿ-ի գիտակրթական և մշակութային կազմակերպություն
(Մ)ՈԿԿ ԻՊԱՄԳԿ	(Միջազգային) ոչ-կառավարական կազմակերպություն Իսլամական պատմության, արվեստի և մշակույթի գիտահետազոտական կենտրոն
ԻԳՄԿ	Իսլամական գիտակրթական և մշակութային կազմակերպություն
ԺՀՄԻԳ	Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ՈԻԵՖԱ	Եվրոպական ֆուտբոլային ընկերակցությունների միություն
«Վենետիկի հանձնաժողով»	Իրավական ժողովրդավարության եվրոպական հանձնաժողով